

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԿԿ

№11 — 12  
NOVEMBRE — DECEMBRE  
1926  
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## ՆՈՐ ՎՏԱՆԳԻ ՀԱՆԴԵՊ

«Իրօչակ»-ի ներկայ համարի Երևանի և Թիֆլիսի թղթակցութիւնների վրա ենք հրաւիրում ընթերցողի ուշադրութիւնը: Զափազանց յատկանշական են նրանք, լուրջ ու մասնագիտիչ և վերահաս նոր վտանգի առաջին նշանը:

Թիֆլիսի մեր թղթակիցը պատմում է այն իրաւագուրդի և արգահատելի վիճակի մասին, որին ենթարկւած է Հայաստանը, իբրև մասնիկը Անդրկովկասեան դաշնակցութեան: Բոլոր հարցերում «եղբայրական» Աղբրէջանն ու Վրաստանը դուրս են աւելի նպաստաւոր, աւելի արտօնեալ դրութեան մէջ, քան «մեր փոքրիկ Պորճրդային Հայաստանը»: Համակովկասեան նիւթական միջոցների մեծագոյն մասը հասնում է Վրաստանին և Աղբրէջանին: Հայաստանին փշրանքներ են բաժին հանւում: Համամիութենական յատկացումների և նրպատների առիւծի բաժինը գնում է Թիֆլիս և Բաղու — Երևան՝ սե կողակներ միայն: Համապետական հիմնարկութիւնները և նրանց նեա կապւած առաւելութիւններն ամբողջովին վերապահւած են վրացիներին և աղբրէջանցիներին — հայերին ոչինչ չկայ: Հայաստանը մեկուսացած է, անտեսւած, զրկւած և խուժայրագաւառի արհամարհելի դրութեան հասած:

Մի հասարակ համեմատութիւն «չինարարական ճակատից»: այս տարւայ ընթացքում Թիֆլիսի համար համապետական միջոցներով շինւած է 30,000 ձիու ուժով ելէկտրակայան, որի վրա ծախսւած է աւելի քան 15 միլիոն ռուբլի, Երևանի համարաւոր կլէկտրակայանը ծրագրւած է շուրջ հինգ հազար ձիու ուժի և արժէ մէկ — երկու միլիոն: Քուլթայիսում կառուցւած է հսկայական մասնուղի գործարան և Թիֆլիսում դուրս է հիմքը մասնուղի երկրորդ մեծ գործարանի, ամբողջ Հայաստանում հիււսածեղէնի մի խղճուկ գործարան է շինւած՝ հազու մի քանի հարիւր բանւորնե-

րով: Եկող տարւայ համար ծրագրւած է կառուցանել Բաղուում 80,000 ձիու ուժանոց ելէկտրակայան մի քանի տասնեակ միլիոն ռուբլու արժողութեամբ, Վրաստանում (Տրկվիբուլի և Ռիօն)՝ երկու ելէկտրակայան 22 միլիոն ռուբլի, իսկ Հայաստանում (Քայրադէրան)՝ միայն մի ելէկտրակայան 7,5 միլիոն ռուբլու արժողութեամբ:

Եւ այսպէս տնտեսական ու պետական կեանքի բոլոր ճիւղերում: Անհասանելի տարբերութիւն կայ Հայաստանի և իր հարեանների դրութեան մէջ: Վրաստանում և Աղբրէջանում նիւթական և ազգային — կուլտուրական միջոցների լաւագին արտում է նկատուում, տասնեակ միլիոններ են դուրս արդիւնարբութեան և շինարարութեան մէջ, մինչ Հայաստանը շարժուած է կրիայի. քայլերով և մուրացկանութեամբ է ապրում: Վրացի կոմունիստներն, օրինակ, իրենց երկիրը դրել են պետական հիմքերի վրա, կարողանում են պաշտպանել Վրաստանի պետական իրաւունքներն ու շահերը, հայերը շարունակում են մուրալ և հայցել: Վրաստանը Մոսկւայի առջև պետական գիտակցութիւն և անկախ դիրք ունեցող երկիր է, որի վարիչների ներկայացրած պահանջները անմիջապէս դուստրուցում են ստանում, Հայաստանը ծայրագաւառ է, և հայ կոմունիստները՝ ողորմելի խրճիկներ, չլու կամակատարներ կենտրոնի ձեռքին: Վրաստանին տրւում է, իբրև իրաւունք, Հայաստանին՝ որպէս ռոպրմուքիւն:

Այս նաստացուցիչ վիճակը, սակայն, արգելք չէ, որ հայ կոմունիստները ի լուր աշխարհի թմբուկ զարնեն իրենց «անկախութեան» և կատարած «արտասովոր շինարարութիւնների» մասին, պարծենան Անդրկովկասեան դաշնակցութեան Հայաստանին մատուցած առասպելական օգուտներով: Եւ հանւած աղմուկն այնքան է ուժեղ, որ անգէտ մարդիկ, իրօք, սկսում են հաւատալ, թէ

Հայաստանն Անգրկովկասեան միութիւնից մեծամեծ օգուտներ է ստանում և Հայաստանի վարիչներն առանձնապէս խոշոր շահեր ապահովում Հայ ժողովուրդին: Այն ինչ Հայաստանը Անգրկովկասում արհամարհած է ու գրկած և Հայ ժողովուրդը՝ զոհ ակնյայտնի անարդարութեան:

Աւելի վրդովեցուցիչ են Երևանի թղթակցի հաղորդած լուրերը, որոնք հաստատուած են, դժբախտարար, և ուրիշ աղբիւրներից: Մինչդեռ Հայ ժողովուրդն անհամբեր սպասում է Հայաստանի սահմանների ընդարձակման կամ գէթ որոշ ճիշդ այդ ուղղութեամբ Հայաստանի վարիչների կողմից, որպէսզի անհող գրեւորութիւնը հող ստանայ և գաղութային աշխատատեղիներ կարողանայ տեղափոխել Հայրենիք, Հայաստանը դառնում է առարկայ նոր յօշոտման, նրան սպասում է նոր անդամահատութիւն. «եղբայրական» Արբէշանը պահանջում է իրեն զիջել ամբողջ Մեղրիի գաւառը և Դարաբազեագի ու Երևանի գաւառների մի ահագին ժառը: Այն Արբէշանը, որ 1920 թ. դեկտ. հանդիսաւորապէս յայտարարեց, թէ ինքը ո՛չ միայն հողային պահանջներ չունի, այլև «եղբայրական» Հայաստանին է թողնում Լեւոնայի Դարաբազը: Ինչպէ՞ս պատահեց, որ քիչ անցած այդ խոստումը յետ առնեց, և Դարաբազը շարունակեց մնալ Արբէշանի տիրապետութեան տակ: Ինչպէ՞ս պատահեց, որ Նախիջևան – Շարուր էլ պոկեց Հայաստանի մարմնից և միացւեց Արբէշանին: Ինչպէ՞ս է, որ այժմ Մեղրին էլ՝ 35,000 զուտ Հայ ազգաբնակչութեամբ, Դարաբազեագի ու Երևանի հայաբնակ մասերն էլ պահանջում են կցել Արբէշանին: Ինչո՞վ են արդարացում այդ շնական պահանջը Արբէշանցի «կոմունիստները»: Ի՞նչ է Հայ կոմունիստների դերքը այդ առթիւ:

Արբէշանի ընթացքը մեզ համար պարզ է եղել անցեալում, պարզ է և այսօր: Եւ մեր համոզումը ամբողջապէս հաստատուեց և Անգորայի վերջին գաղտնալուծեան ժամանակ, երբ անհերքելի փաստերով ապացուցեց, որ թիւրք իթթիշատականներն ու ազրբէշանցի կոմունիստները գործում էին համերաշխ և միացած ուժերով առաջ բերին Արբէշանի խորհրդայնացումն ու Հայաստանի հանրապետութեան խորտակումը: Այդ համերաշխութիւնն ու գործակցութիւնը շարունակուած է այսօր ևս: Եւ ազրբէշանցիների հողային պահանջները Հայաստանից բոլորում են ո՛չ միայն Բագից, այլև Անգորայից — ամենից առաջ Անգորայից: Նոր չէ՛ գեմալականների ձգտումը սահմանային միութիւն հաստատելու թիւրքեայի և Արբէշանի միջև, իբրև մէկ մասնիկը համաթուրանական ծրագրի: Անգորա — Բագու ուղիղ ճանապարհը թիւրք

ազգայնականների համար մէկ կտորն է այն մեծ ճանապարհի, որը սկսուած է էքէեան ծովից և Կասպից ծովի վրայով գնում հասնում է մինչև Թաշկէտ և Ուրալ: Այս հարցում իրարից չեն տարբերուած Անգորայի ազգայնականները և Բագու ազգայնականները: Եւ, կրկնում ենք, ազրբէշանցիների նոր պահանջները հայերից, ինչ պատճառներով էլ քողարկած լինին, արդիւնք են թիւրք — ադրբէշանեան ազգայնականների համագործակցութեան և նւաճողական ծրագիրների:

Այս գործակցութիւնը տեսնուած է և ուրիշ կողմ: Այն պահուն, երբ «եղբայրական» Արբէշանը գործում է ղիւսնագիտակամ միջնոցներով, «դաշնակից» թիւրքեան առաջ է քաշում մարտակամ գործելակերպ: Արարատից ու Զարիշատից Հայաստանի վրա կատարուող «աւազակային» արշաւանքներն, անկասկած, պատահական չեն: Նրանք տեղի են ունենում Անգորայի գրդուածով և նպատակ ունեն հեշտացնել ազրբէշանցիների գործը: Այդպէս էր ստեղծ և անցեալում. մուսուլմանականները, երբ պէտք էր լինում Հայաստանի վրա ճնշում գործելու, առաջ էին քաշում Զանգիբասարն ու Վէդիբասարը, շարժման մէջ էին դնում «աւազակախմբեր»՝ թիւրք շաւուշների ղեկավարութեամբ և «ղիւսնագիտական գործը» նախապատրաստում աւազակային արշաւանքներով: Բաւաջի կերպով նոյնը կրկնուած է և այսօր: Այսօր, երբ մուսուլմանականների գործը շարունակում են կոմունիստները, որոնց միջև ըստ էութեան ո՛չ մի տարբերութիւն չկայ:

Բնորոշ է այստեղ և մի այլ հանգամանք. Արարատի ու Զարիշատի աւազակները Հայաստանում գրասանքներ են կատարում, թալանում են հայ դիւերը, քում են նրանց տաւարը հէնց... ոռւս սահմանապահ զօրքերի քթի տակ: Դարաբազեագից ու դամարուեցի Հայ գրեւորչին մերկ ձեռքերով հալածելու է դուրս գալիս օրը ցերեկով Արաքսն անցնող աւազակներին, իսկ ոռւս զօրքը մնում է անշարժ, լուս հանդիսատեսի դերում: Միւս կողմից, խորհրդային Արբէշանի վարիչները հողային պահանջներ են անում, նեղում են Հայաստանին, բայց Մոսկւան տեղից չի շարժուած: Ի՞նչ է այս. պատահական մի գուզադիպուծութեան: Կապ չունի՞ր արդեօք այս դէպքերը դիւսնագիտական այն խաղերի հետ, որոնք տեղի են ունենում Մոսկւայի ու Անգորայի և Անգորայի ու Լոնդոնի միջև: Զիչէրինի ու Թեֆիկ Ռուչոտի եղբայրութեան նոր ցուցարարութիւնը Օրէսայում որևէ անչնութիւն չունի՞ր այն մտայն ամպերի հետ, որոնք աւելի և աւելի խտանում են Հայաստանի գլխին:

Հարցեր, որոնք շատ հեռու են ճարտասա-

նական բնոյթ կրելուց և որոնց պատասխանը պէ՛տք է գիտնայ Հայ ժողովուրդը: Ի՞նչ են մտածում այդ մասին, ի՞նչ են ասում Հայ բոլշեիկները, որոնք իրենց ձեռքն են առել Հայաստանի ճակատագիրը: Ինչո՞վ են երաշխաւորում նրանք Հայ գիւղերի ու քաղաքների անվտուրութիւնը հարեւան «դաշնակցի» սոսպատակութիւններից: Ինչո՞վ են ապահովում Հայաստանի սահմանները հարեւան «եղբայրական» հանրապետութեան դաւերից: Այս հարցերին նրանք պարտաւոր են տալ յստակ ու մեկին պատասխան:

Պարտաւոր են, բայց կարո՞ղ են: Այստեղ է բուն ողբերգութիւնը: Այն պահուն, երբ Ազգբէջանն ու Վրաստանը օգտագործում են խորհրդային պատեհութիւնները ի նպաստ իրենց երկրների պետական, անտեսական և ազգային ու կուլտուրական իրաւունքների ընդարձակման և ամրապնդման, Հայաստանի իշխանութեան գլուխը կանգնած են բարոյական ու մտաւոր կարողութիւններից զուրկ մարդիկ, քաղաքական ոչնչութիւններ, որոնք ո՛չ իրենց պատմական դերի գիտակցութիւնն ունեն, ո՛չ էլ ձեռնահասութիւն ու կամք Հայաստանի դէժ տարրական շահերը պաշտպանելու: Ո՛չ միայն քաղաքական լայն չափանիշով, այլ անգամ տեղական փոքրիկ հարցեր լուծելու ընդունակութիւնից զուրկ են: Եւ նրանց խօսքին արժէք տւող չկայ:

Նրանց հաշիւ չեն առնում: Այդ պատճառով է, որ երկրի բախտը որոշող հարցերից ձեռք քաշած՝ նրանք զբաղւած են ներքին ճղճիմ վէճերով, իրերակերութեամբ, բամբասանքներով ու մանր ինտրիգներով: Իրենց եռանդը սպառում են երեւոյթական թշնամիների, գաւեշտական դաւադրութիւնների ու դիտերի վրա և նոյն իսկ այնպիսի տարրական խնդիրներում, որպիսին թիւրք դաղթականների վերադարձն է, որը լուծւած է Հէնց Անդրբովկասեան կառավարութեան ղէկըէտով, անգոր են ապահովելու Հայ ժողովրդի իրաւունքները: ա՛յն ժամանակ, երբ բազմահազար Հայ գիւղացիներ մնացել են հողազուրկ, ա՛յն ժամանակ, երբ ո՛չ մի Հայ դաղթական չի կարող մուտք գործել Ազգբէջան կամ Նախիջւան, ա՛յն ժամանակ, երբ աղբբէջանցի կոմունիստները իթթիհատակներին վայել եռանդով քանդում են հայկական գիւղերի մնացորդները, հայկական տները, եկեղեցիներն ու զերեզմանոցները, որպէսզի հայերի հետքն իսկ չմնայ իրենց երկրում, այդ նոյն ժամանակ թիւրք դաղթականները շարան — շարան գալիս են Հայաստան և Հայ գիւղացիներին դուրս քշելով իրենց նախկին հողերից՝ նստում են նրանց տեղը...

Ահա Հայ կոմունիստների քաղաքական գիտակցութեան և ձեռնահասութեան չափանիշը: Ի՞նչ կարելի է սպասել այդ ողորմելիներէից...

## Վասպուրականը իբրեւ անկիւնաքար ՄԱՍԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

«Երօրակ»-ի նախորդ համարով, մենք պարզեցինք Միացեալ Հայաստանի դադափարին հուժիւնը և անոր անբաժեշտութիւնը՝ Հայ ժողովուրդի գոյութեան և պահպանման տեսակէտէն:

Խնդիրը ատով չի լուծւիր: Պէտք է հաստատել թէ Հայ ժողովուրդը ունի բաւականաչափ մարդկային, բարոյական և ֆիզիքական ոյժ իր նախնիքներու հայրենիքին տէր դառնալու, թէ հիւանդ մըն է, որ կը զոտանցէ:

Մենք ցնորական համարեցինք որ ո՞մանք Գուրի հովիտէն մինչեւ Աւ ծով և անկէ մինչեւ Միջերկրական ծով Հայաստան կը պահանջեն: Սակայն կան նաև այնպիսի հայեր, որոնք դարձեր են ոչնչի կողմնակից և կը ծաղրեն միացեալ Հայաստանի դադափարն իսկ իբրև ցնորք: Այս պարագաներու մէջ պէտք է թանձրացեալ, շօշուփելի ձեւով պատկերացնենք միացեալ Հայաստանի դադափարը և հիմնաւորենք դայն մեր և մեր սերունդներու օյժի և կարողութիւններու տեսանկրով:

Ասկէ առաջ գաւառ առ գաւառ ներկայացեր են Միացեալ Հայաստանի հիւսիսային, հիւսիս-արևելեան և հարաւ — արևելեան սահմանները յպարզեր է, որ Փոքր Կովկասը հիւսիսէն և հիւսիս արևելքէն կը կազմէ Հայաստանի բնական սահմարը, անոր ամբուժիւնը՝ անկիւնաքարը ունենալով հայկական Ղարաբաղը: Իսկ ո՞րն է Հայաստանի արևելեան և հարաւ — արևելեան անկիւնաքարը, ո՞րն է անոր բնական սահմանը:

Բաւական է զննել այս հարցերը, որպէսզի մեր ուշադրութիւնը իսկոյն կենտրոնանայ Վասպուրականի վրա:

Արարատ լեռը առանցքը կը կազմէ արևելեան Հայաստանի: Անոր ստորոտը կը սկսին Միւնեաց, Արարատեան, Բազբեանդի, Հէր և Զարեանդի ու Վասպուրականի աշխարհները, անոր տակ Արաքսը կը կազմէ Հայաստանի հարաւ — արևելեան սահմանը, իսկ հարաւային ծայրերէն կը սկսի Զաղառչի շէջան, որ Հայաստանի արևելեան սահմանն է: Դէմ — դիմաց Արարատին սը ունի 5160 մեթր բարձրութիւն, կը

բարձրանայ Թանգուրեք լեռը (3550 մեթր)։ Այս երկու ձիւնապատ գագաթները բաժանւած են իրարմէ մօտ 40 քիլոմէթր տարածութեամբ, որ կը կազմէ արեւելեան Հայաստանի դուռը և Բագրևանդը կը միացնէ Պարսկաստանին։ Այդ դուռնէն դէպի Հարաւ Թանգուրեքէն կը սկսին Ջագոռչի շղթան, որ հիւսիսէն ուղղակի դէպի Հարաւ կերթայ։ Ջագոռչը աննդհատ շղթայ մըն է 3000 - 3500 մեթր բարձրութեամբ, տարւան եօթը ամիսը աննայանելի, հինգ ամիսն ալ դժարանցանելի։ Այսօր այդ լեռնաշղթան, որ ընական սահմանն է Հայաստանի արեւելեան կողմի, կը կազմէ սահմանը պարսիկ և զբաղք պետութիւններու։

Այն բոլոր ջուրերը, որ կը բղիթին Ջագոռչէն և կը թափին Արաքսի մէջ, կը հոսեն Հէր և Ջարեանդէն (Պարսկահալք)․ այն ջուրերը որ բղիթելով Ջագոռչ, Թանգուրեք, և Արաքս լեռներէն կը թափին Արածանի կը կազմեն Բագրևանդը, իսկ Ջագոռչէն և Թանտուրեքէն դէպի արևմուտք և Հարաւ հոսող բոլոր ջուրերը, որ կը թափին Վանայ լճի աւազանը, կը կազմեն Վասպուրականը։

Ուրեմն, Ջագոռչան շղթան Պարսկաստանի և Թիւրքիոյ միջև սահման կը կազմէ ոչ միայն անոր համար, որ այդ լեռներն են ամուր միջնորմը երկու պետութեանց, այլ և անոր համար, որ այդ շղթան պարզ ու որոշ կերպով սահման կը կազմէ տարբեր աշխարհներու, տարբեր տնտեսութեանց։ Այդ լեռներով իրարմէ կը բաժնին Վասպուրականի և Ատրպատականի ջուրերը, անոնց տարբեր բուսականութիւնը և տարբեր կլիման։ Այդ լեռներն են, որ կը բաժնեն տարբեր ժողովուրդներու հինաւուրց պատմութիւնը։ Ջագոռչէն արևմուտք միշտ եղած է Հայոց Վասպուրականը, իսկ դէպի արեւելք՝ Պարսից Ատրպատականը։

Վասպուրական աշխարհի այդ սահմանային շղթան իր ձիւնապատ կտարներով ամէնէն ժլատն է հաղորդակցութեան տեսակէտէն․ կարելի է ըսել թէ Վասպուրականէն դէպի արեւելք և Պարսկաստանէն դէպի Վասպուրական ճանապարհ չկայ։ Եթէ Ձուրի 3000 մեթր բարձրութեամբ լեռան երկու կողքերէն դէպի Կոտուր տանող դժարանցանելի կածանները, կամ Թանգուրեքի ստորոտէն Մահու Պայազիտ գացող կածանները ճանապարհ սեպնէք, ատոնք են միակ պատահանները, որոնցմով Վասպուրականցին կրնայ հաղորդակցիլ արեւելքի և հիւսիսի, Պարսկաստանի, և Արաքստեան աշխարհի հետ։

Հաղորդակցութեան այդ դժարութիւնը Վասպուրականի և Պարսկաստանի միջև, բարձրաբեր լեռները, ջուրերու, կլիմաներու անջատումը իրք էս Վասպուրականը կը դարձնեն կղզիացած աշխարհք, տարբեր իր հարեան պարսկական գաւառներէն։ Այդ աշխարհք միշտ բաժնու է Պարսկաստանէն՝ միշտ եղած է Հայաստանի մէջ կամ իբր անոր մասը կամ անկախ իշխանութիւն մը՝ թագաւորութիւն մը։ Նոյնքան պարզ և որոշ է նաև Վասպուրականի հարաւային սահմանը։

Լալնութեան 37<sup>ա</sup>-38 ստոիճաններու միջև Վանայ լիճէն դէպի հարաւ, Վասպուրականի հարաւային կողմը, ուղղակի արևմուտքէն արեւելք կը ձգուի հայկական Տաւրոսը։ Այս ամեհի շղթան, որ միջին հաշուով 3000

մեթր բարձրութիւն ունի և իր հասակով կը մրցի Փոքր և Մեծ Կովկասներու հետ, կուգայ դէպի արևմուտք և Ջագոռչի հետ միանալով կը ձևացնէ երկու կից եռանկիւնին։ Այդ եռանկիւնիներու գագաթը կը կոթին Բաշկալէն շրջանին իւր մէկ բացւածքով ուղղւած դէպի հիւսիս - արևմուտք և կը պարունակէ հին, Կորդուաց աշխարհը, ներկայ Հէքեարին և Մուսուլի լեռնային մասերը, իսկ միւսը իւր բացւածքով կուղղուի դէպի հիւսիս - արևմուտք և կը պարունակէ ամբողջ Վասպուրականը, Վանայ լճի աւազանով։ Հարաւային եռանկիւնը, ինչպէս ըսինք, հին Կորդուաց աշխարհն է, Ատրեստանը, որու բեկորները այսօր կը մնան Տիար-Տիուպի, Պոստանի մէջ։ Այսօր այդ երկիրը իր նախկին տէրերուն ձեռքը չէ, այլ կը գտնուի Անգլիական կայսրութեան հովանիին տակ, Իրաքի սահմաններուն մէջ։ «Իրօշակ»-ի 6-րդ թիւին մէջ պարզւած է այս շրջանի կարևորութիւնը և նշանակութիւնը համաշխարհային տեսակէտէն։ Իրաքի ներկայ սահմանը անցնելով Հազիր և Պապուր գետերու վրայով մինչև Ջելոի կատարները, բարձրանալով Գերամուսի, Սուր, և Չաշլի, Կանի, Ռաշ - Ջիհի, Պերուի ու Ների գլուխները՝ կը տարածուի մինչև Վասպուրականի Անձաղեցեաց, Մոկաց և Շատախի գաւառներու ղոնները։ Շատախի Արմշատէն կամ Մոկաց Ողմէն հեռու չէ բրիտանական կայսրութեան սահմանը․ միայն 20, 30 քիլ․ տարածութիւն պէտք է կորել հասնելու համար ներկայ Իրաքի հողերը։ Սահմանային փոքրիկ սրբազրութիւններով Վասպուրականն ու Իրաքը այսօր դարձած են սահմանակից երկիրներ։ Վասպուրականը եթէ արեւելէն շրջապատւած է Պարսկաստանով, հարաւէն զրաքի ունի Բրիտանական կայսրութիւնը։ Արեւելէն անոր ընական սահմանը կը կազմէ Ջագոռչը, իսկ հարաւէն հայկական Տաւրոսը․ արեւելէն և հարաւէն ստորին ու զերտը կը շրջապատեն զայն։ Անգլիան և Պարսկաստանն ինչպէս և զերտն ու ստորին հարաւորութիւն չունին դիւրութեամբ ներխուժելու Վասպուրական աշխարհը։ Անոնց առջև կը բարձրանան Ջագոռչի և Տաւրոսի ձիւնապատ գագաթները, որոնք միայն Ջաբի հովիտէն, Բաշկալէի շրջանէն Կոտուրի դիմացը արաւաններով ճամբայ կուտան Վասպուրական երթուղի համար։ Բուսական է Ձուրայի լեռներուն մէջ, Բաշկալէ - Սարայ փոքրիկ շրջանին մէջ ունենալ պաղարիւն և ճարպիկ պահակներ, որպէսզի փակուի Իրաքի և թէ Պարսկաստանի յարաբերութիւնը Վասպուրականի հետ։

Այսպէսով, այդ երկիրը կը դառնայ ընական սահման, ամուր անկիւնաքար մը երեք աշխարհներու՝ Պարսկաստանի, Իրաքի և Հայաստանի միջև։

Ուրեմն, եթէ Հայաստանի Հիւսիսային և հիւսիսարեւելեան ընկալն սահմանը և ամուր կուսանն է Ղարաբաղը ու Սիւնիքը, անոր արեւելեան և հարաւային արեւելեան ընկալն սահմանը, ամուր յենարանը կը կազմէ Վասպուրական աշխարհը։ Այդ երկու երկիրներուն միջոցով է միայն, որ Հայաստան երկիրը իր ամբողջական կերպարանը կարնէ, և պաշտպանւած կըլլայ ընկալն ամուրութիւններով ինչպէս Հիւսիսէն, նոյնպէս արեւելէն և հարաւ - արեւելեան անկիւնէն։ Առանց այդ անկիւնաքար նահանգներուն Հայաստանը կը գտնուի քանդուած բերդ մը, բաց վրան մը, ուր

ամէն խորշակ անարգել պիտի մտնէ: Եթէ կուզենք ապահով Հայաստան մը կազմակերպել, անհար է առանց Վասպուրականի և Ղարաբաղի: Ներկայ խորշակային Հայաստանը կամ Արարատեան աշխարհը, առանց Վասպուրականի և Ղարաբաղի ձիարշակի կրկէս մըն է, ուր անարգել կրնան սասպատակել արեւելքէն, հարաւէն և հիւսիսէն արշաւող երիվարները՝ Թուրանական թէ պարսկական, արաբական կամ ռուսական:

Այժմ տեսնենք, թէ այս արտաքին սահմանները ուրիշ ինչ թելադրանքներ կրննն մեզի:

Ամենքս ալ գիտենք, թէ Հայաստանի սահմանակից են Ռուսիան և Թուրքիան, բայց կարծես թէ կը մոռնանք Պարսկաստանը, իբր հարեան պետութիւն, թէ և ան Հայաստանը չըրպայտած է ամբողջ արեւելքէն և հարաւ — արեւելքէն: Մուսուլի դաշնաբերէն յետոյ, բոլորովին փոխաւած են հին վիճակները և պետութիւններու դասակարգումը Հայաստանի շուրջը: Այսօր Վասպուրականէն դէպի հարաւ գրեթէ Թուրքիա չէ, այլ Բրիտանական կայսրութիւնը. դէպի արեւելք Պարսկաստանն է, որ գրեթէ նոյն քաղաքական և Ֆիզիքական կշիռն ունի ինչ որ Տաճկաստանը, և եթէ Ռուսաստանը նստած է Փոքր Կովկասի վրա, չպիտի մոռնանք, որ Անգլիան ալ բազմած է հայկական Տաւրոսի վրա: Անոնք, որ Պարսկաստանը կանտեսեն իբրև արհամարհելի ոյժ, սխալ կընեն. անոնք, որ Բրիտանական կայսրութիւնը հեռաւոր պետութիւն մը կը համարեն, պիտի գիտնան, որ ներկայիս այդ հեռաւոր ծովային պետութիւնը հարեան է դարձած Հայաստանին. իսկ անոնք, որ միշտ ռուսական խաչին կամ կարմիր դրօշին կապուիինն, պիտի յիշեն, թէ Ռուսիային մրցակից հզորագոյն Անգլիան այսօր նոյնքան մօտիկ է կանգնած Հայաստանի սահմաններուն:

Երբորդ, մեր ուշադրութեան հիմնական դիմը պիտի ըլլայ ներդաշնակութիւն ստեղծել մեզ հետ միշտ ապրող դրացի ժողովուրդներու հետ. քաղաքական, ընկերային, տնտեսական շահերու համարութեամբ է, որ պիտի ծնի վերջնական խաղաղութիւնը Առաջաւոր Ասիոյ մէջ: Վերջերս ուշադրութեան կեդրոնը աւելի ուղղւած է դէպի մեր հիւսիսային հարեւանները՝ Վրաստան և Ատրպեյջան. քիչ եռանդ կը տրի ներդաշնակութեան, գործակցութեան հիմեր գտնելու մեր հարաւային հարեւաններուն հետ, որոնք կապրին Վասպուրականէն դէպի հարաւ, արեւելք, և արեւմուտք: Ատոնք են ասորիները և քրտական ցեղերը: Այդ ժողովուրդները, որ կապրին մեր երկրին և մեզ սահմանակից շրջաններու մէջ և ենթարկած քաղաքական նոյն կացութեան բռնակալ իշխանաւորներու լուծին տակ՝ բախտակից են մեզի:

\*\*

Վասպուրականի արտաքին սահմաններու նկարագրութենէն այդ երեք հիմնական եզրակացութիւնները հանելէ յետոյ, այժմ տեսնենք թէ ի՞նչ կը ներկայացնէ Վասպուրականը:

Ըսինք թէ Զաքոռը և Տաւրոսեան լեռնաշղթան իրարու խաչաձևելով՝ կը կազմեն եռանկիւն մը: Այդ եռանկիւնի խորխորան է Վանայ ծովը, որ կը յենու հայկական Տաւրոսին, իսկ զլիտով կը հասնի Ալաւաղին և Թանդուրեքին, ուրկէ՛ սկիզբ կառնէ Զաքոռի շղթան:

Այդ ծովի և եռանկիւնի մէջտեղի տարածութիւնը կը կազմէ Վասպուրական աշխարհը: Ուրեմն, Վասպուրականի արևմուտքն է Վանայ ծովը և հիւսիսը բարձրաբերձ Թանուրեքը, Ալաւաղը, որ մէկ թևով կիջնէ կը միանայ ծովի ափին բարձրացած Սիլիսնի հետ (Ճ178 մթթ): Այդ ձևով Վասպուրականը ինչպէս արեւելքէն և հարաւէն, նոյնպէս և արեւմուտքէն և հիւսիսէն փակւած է ըլլով և անանցանելի լեռներով ու կը ներկայացնէ վաղ տուրակ մը՝ չորս կողմէն շրջապատւած: Միայն մէկ կիբճ կայ ծովին և Տաւրոսի միջև 40 — 50 մղոն երկարութեամբ, որ կը տանի դէպի Բիթլիս ծովախոլ և մէկ անցք ալ ծովի հիւսիսով Բերկիրի — Արճէշի վրայով դէպի Արարատ և Նախիջևան:

Աշխարհագրական այս դիրքից վրա ուշադրութիւն պիտի դարձնենք բացատրելու համար Վասպուրականի բացատիկ դերը թէ պատմական, թէ դինւորական և թէ մշակոյթի տեսակէտով:

Եւ, իսկապէս, Վասպուրականը աշխարհագրականօրէն կը ներկայացնէ ինքնատիպ ինքնուրոյն աշխարհ մը: Բնութեան այդ ինքնաբնական պայմաններու շնորհիւ կերտած են Վասպուրականի անցեալ պատմութիւնը, Վասպուրականցիին ինքնայատուկ հոգեբանութիւնը և անոր ինքնուրոյն մշակոյթն ու տնտեսութիւնը: Յայտնի է մեր պատմութենէն, որ Վասպուրականը եղած է միշտ ամենէն ուժեղ, ամենէն ապահով և զարգացած իշխանութիւնը: Հնոն է, որ «Հայկ նահապետ», ըստ ամանդութեան, սիւնին կը դամէ Ատրեստանի Բէլ շատուածը, Մըհերը առասպելական Թաղնած և Ակըրբիի քարերուն, իսկ Արա Գեղեցիկ Առչչի. Շամիրամի առուն 4000 տարիէ ի վեր կողոզէ Վասպուրականը և չունի հաւասար իր հնութեամբ և ճարտարապետութեամբ: Ինչպէս հին ջուրմերը սեպածն տառերով, անհասկանալի ոճով կը գրէին իրենց պատմութիւնը, այնպէս ալ, յետագային, Վասպուրականը զարգացող իր ինքնատիպ մշակոյթը, իր ինքնատիպ պատմութիւնն ու կեդրոնը: Արթմարը դարձաւ փոքրիկ էլիմիածին մը անկախ իր աթոռով, Վարազը հակադրեցաւ Ս. Կարապետին, իսկ Նարեկայ վանքը Սիւնեաց Տաթևին: Թաղաղ Վասպուրականը դարձաւ հնոցը Վասպուրականցիի մշակոյթին: Հայաստանի և ոչ մէկ վայրը չէ ծածկւած այնքան վանքերով, զպրոցներով և արեւատի ու գիտութեան տաճարով, որքան Արծրունեաց և Ռշտունեաց երկիրը: Հին ջուրմերու դրապետութիւնը մնաց յաշտրդներու մէջ, և վասպուրականցիին ինքնուրոյն արեւաստագէտ է մնչկն այսօր: Ան քաջ և պատասաէր մնաց, ինչպէս ամասուրականն Հայկը և Վասպուրականը դարձաւ առանձին անկախ իշխանութիւն, երբեմն Ռշտունեաց, երբեմն Արծրունեաց Տան իշխանութեան տակ: Ան մտքի թագաւորներ ալ ստեղծեց, ինչպէս Նարեկացիին կամ Քուշակը, և այսօր ալ կը շարունակէ ստեղծագործել հին Թափով ու հին ոգիով: Վասպուրականցիին ճարտարաբանութիւնը, գեղարեստը, ուսումը, համբարատար մանրակարգութիւնը, զբնագրութիւնը կամ ոսկերչութիւնը առաւելապէս արբիւնք են երկրին աշխարհագրական պայմաններուն: Մովին պատասաբարձ Տաւրոսի, Զաքոռի և Վանայ ծովու անանցանելի պատերով, վասպուրականցիին ապահով և հանգիստ իր ինքնամփոփ կեանքը կապրի, կը խորասուզի իր մէջ և կը ստեղծագործէ

միտակ նարեկացի մը, սանրանկար գեղեցկութիւններ, ոսկիէ, թուղթի կամ մաշի վրա փորձած, կը ստեղծէ իր փառքիկ իշխանութիւնները իր ինքնաբաւ, ինքնամփոփ սահմաններով Գաղիկներէն, Մանածիհրներէն մինչև մեր օրերը:

Այս ստուակէտէն, կորսնցնել Վասպուրականը՝ կը նշանակէ իրողներ հայ մտքի և ուղիւթեան մէկ որոշ կողմը, որիւնը ապահով վարէ մը, ուր հայկական մշակոյթը ինքամփոփ պիտի դարձանար:

Վասպուրականի բնութեան պարզեամբ այս դրական կողմի կողքին, կայ բազասական կողմը: Վասպուրականցիին շափաղանց կողմացած ըլլալով՝ իր մէջ միշտ դարձացած է անկատողական ոգին, կամ միայն ինքնիրմով ապրելու և իր երկիրով բաւականանալու ձգտումը և վանեցին շափէն աւելի տեղաւեր է, քան հայրենասէր: Թէ և ունի նարեկացիներ, բայց չունի Մեհրոպ Մաշտոցներ, ունի թագապիկ իշխաններ, հրամանատարներ, բայց չունի ընդհանուր հայկական առաջնորդներ Վարդաններու, Մուշեղներու նման: Անոր թո՛ւշքը կարծես սահմանափակ է իր երկրին նման և այդ համապատասխան է իր դերին, քանի որ ըստ բնութեան Վասպուրականը պատուանդան է Հայաստանի և ոչ թէ սիրտն ու հոգին, ինչպէս Տարօնն ու Արարատը:

Վասպուրականի աշխարհագրական պայմանները մեծապէս կանդաղառանձն աշխարհական պետութեանց գինւորական շարժումներու ուղիւթեան վրա: Բացի ատորա – հայկական առասպելական ճակատամարտներէն, պատմութեան մէջ բնաւ չի յիշուի, թէ Վասպուրականի մէջ մըլած են մեծ և վճռական ճակատամարտներ հայերու կամ ուրիշ ազգերու միջև: Վասպուրականը եղած է թաւոր մանր կուրծներու, բայց մեծ կուրծները մըլած են իր սահմաններէն դուրս, Տղմուտի վրա, Աւարայրի դաշտը, Արաքսի հովիտը, Արածանիի և Եփրատի ափերուն վրա, Տարօնի դաշտը կամ Ախլաթ: Մեր օրերուն ալ այսպէս է եղած: Երբ քննենք վերջին թուրք և Պարսիկ, թուրք և Ռուս պատերազմները, կը տեսնենք, որ թուրքերը պատերազմի պարագային գրեթէ կը պարպեն Վասպուրականի ճակատը, միայն փոքրաթիւ ուժեր առաջ կը մղեն դէպի Կոթուր և Մայմատ և միացած ուժերը կը համարմբեն Արաքսի դիմաց: Ռուսը կամ պարսիկն ալ, թէ և Վասպուրականը իրենց առջև բաց կը դռնեն, բնաւ մեծ ուժեր չեն կեդրոնացներ անոր վրայով հարածելու թուրքերը, ընդհակառակն, իրենց ուժը կը թափեն Արածանիի և Եփրատի շրջանը: Ան ունի աւելին: Անոնք Վասպուրականը գրաւելու համար, չըջպտօնի արշաւ կատարելով, կերթան մինչև Համատան, Բիրձանշահ, Ռէվանուտը և Մուսուլ: այդ վայրերը և էրբումը դարակէլ յետոյ միայն կը համարձակեն Վան մտնել, Այրպէս կընէին պարսից նաւոր շահը և Եւսաբբաս, կամ ուստական Նիկոլաները իրենց Բարաթովներով և միւս հրամանատարներով: Վասպուրականը իր աշխարհագրական դերքով բախտն ունի վերջինը ինչպիսի, վերջին հարածը ստանալու: Համարարհային փոթորիկներն իսկ իրենց ծանրութեամբ իր ջողէն քսելով կանցնին:

Այս երևոյթը պատահական չէ, այլ հետեանք այն իրողութեան, որ Վասպուրականը իր դիրքով թակարդի, սոսորակի կը նմանի: Անոր մէջ ինկնողը

դժար կազաւոր, չի կրնար շարժիլ աջ ու ձախ, առաջ և ետ: Վանայ ծովն ու Զաղուսը, անդրդախոր Տարուր չեն թոյլատրեր այդ: Պատերազմի պարագային, Վասպուրականը կը դառնայ կոյր ալիք մը, չէզոք դօտի բուրբին համար, բացի Հայաստանէն:

Աշխարհակալութեան տեսանկիւնով, Վասպուրականը հետաքրքիր չէ Ռուսաստանի համար, որովհետև այդ երկիրը փակուղի է անոր համար, ոչ դէպի արևելք, ոչ արևմուտք և ոչ հարաւ կրնայ երթալ. եկած ճամբան ալ վտանգեալ է: Նոյնը և Պարսից համար: Իրաքի կամ Բրիտանական կայսրութեան համար ալ փակուղի է, միայն սա առաւելութեամբ, որ եկած ճամբան Զարի հովիտով վտանգեալ չէ: Իսկ թուրքերի համար, որու ձեռքն է Վասպուրականը, կը ներկայացնէ աւելորդ կոյր ալիք մը, անպէտ երկիր մը գինւորական, նաւաղական նպատակներու համար: Թուրքիւս չի կրնար Վասպուրականի վրայով հարածել Իրաքը, չի կրնար զօրք կեդրոնացնել և հարածել Ռումիոյ աւազանը և Ատրպատականը և ոչ ալ իբրև յենարան կրնայ գործածել Կովկասի դժմ կուրծը համար: Զանապարհները ինչպիսի դժարութիւն են և տարւայ մեծ մասը անանցանելի: և, որ գլխաւորն է, Վանայ ծովը կը կորէ իր նահանջի ճամբան:

Այս վիճակը նաւաղական, գինւորական տեսանկիւնէ գրեթէ կը չնայանէ Վասպուրականի նշանակութիւնը: Այդ է պատճառը, որ մեր հին և նոր պատմութեան մէջ Վասպուրականը համեմատաբար աւելի քէջ ճիզով ու ուժով կը քրքրէ քան Վանի իր ազատութիւնը, քան թէ հերոսական Տարօնը, կամ Բարձր Հայքը կամ Արարատեան աշխարհը: Այդպէս է և Եդրը, որովհետև առաջինը ճամբէն դուրս ինկած փշոտ վարդ մըն է, իսկ վերջինները՝ խոչընդոտ ճամբ մըլ:

Վասպուրականի այս բախտաւոր կացութիւնը պէտք է նկատի առնեն բոլոր այն քաղաքագէտները, որ կը կարծեն թէ աշխարհակալներու մէջ Հասասարակչութիւն ստեղծելու համար, կարելի է և պէտք է ստեղծել չէզոք երկիր մը, Զեկերիոյ նման:

Վասպուրականի աշխարհը այն երկիրներէն է որ ամենէն աւելի դիրւութիւն ունի հասնելու անկախութեան, առանց չըջպատող պետութեանց արտօրակարգ դրդելու կամ անոնց կենսական շահերուն սպառնալու: Անկախ Վասպուրականի գոյութիւնը չի հակասեր Պարսկաստանի, Իրաքի, բրիտանական կայսրութեան շահերուն: Նոյնը կրնանք ըսել և Ռուսիոյ համար: Այնտեղ չկայ էրբումի հանգստեցր, որ կր տանի դէպի արևմուտք և հարաւ: Իսկ Տանկաստանի համար, որ նստած է այժմ Վասպուրականի մէջ, աւելի դիրւին է բաժնելի այդ երկրէն:

Մենք պայքարի մէջ ենք Հայաստանի ստեղծագործման համար: Այդ պայքարի ընթացքին, եթէ հաշիւ պիտի առնենք միջպագային կացութեան պահանջները և նոյն իսկ թուրքերի շահերը և եթէ անհրաժեշտ է աստիճանաբար գործել, Վասպուրական աշխարհն է ամենայայնուր նպատակակէտը, ուրեմն և պիտի ձգտենք ստեղծել անկախ Վասպուրական կամ միացեալ Հայաստան՝ Վասպուրականով: Եթէ Կովկասի մէջ մեր առաջին նշանակէտները պիտի ըլլան Նախիջևանն ու Արցախը, թուրքերի մէջ պէտք է ըլլայ նախ և առաջ Վասպուրականը:

\*\*

Այժմ տեսնենք թէ ինչ գաւառներ և ժողովուրդ կը ներկայացնէ Վասպուրականը:

Վիթալ Քինէի ուսումնասիրութեան համաձայն, Վասպուրականի տարածութիւնն է 22,700ք. քմ. որուն 530-ը մշակելի հողեր են, անշրջի և ջրարբի. 4364, ք. քիւմ. լեռնային արտասելի. 1370 քիմ. անտառ, 5456 շուրեր: Ուրեմն ցամաքէ տարածութիւնը բաւական ընդարձակ է և ներկայ խորհրդային Հայաստանէն քիչ փոքր: Երկիրը բաժնուած էր 8 գաւառներու. — Վան, Կարճկան, Շառախ, Գաւաշ, Այլաւազ, Արճէշ, Բերկերի, Մոկս, իսկ 8 գաւառները բաժանուած էին 54 նահիէներու (գերագիտումը) թիւով 's — 17, որոնք կը պարունակէին 724 գիւղ: Հակառակ այդ ընդարձակ տարածութեանց և հարիւրաւոր զիւղերու, Վիթալ Քինէի խեղդիկագրքին համաձայն — որ նոյն է ինչ որ տաճկական սպանումէն — ազգաբնակչութիւնը խիստ նոսր է եղած, ընդամենը 130,000 բնակիչ, որուն 66,000-ը հայ, իսկ մնացածը ասորի, հրեայ, եգիպտի, չէրքէզ, քիւրտ և թուրք. բոլորը միասին 64,000, ասինքն Հայերը 51%, իսկ մնացածները 49%:

Այսպէս էր 50 տարի առաջ: Որքան որ թուրք պաշտօնական վիճակագրութիւնը դիտարկէր Հայերու թիւը նւազեցուցած ըլլայ ի հաշիւ իսլամներու, անգործազրեիլ դարձնելու համար Պիրինի Վեհաժողովին 61-երորդ յօդուածը, իրականութիւնը այն է, որ հայերը եղած են, դեռ այն ժամանակ բացարձակ մեծամասնութիւն: Ճշմարտութեան աւելի կը համապատասխանէ պատրիարքարանի վիճակագրութիւնը (1912): Անոր համաձայն բուն Վասպուրականի միայն 8 գաւառները ( առանց Կորդուաց աշխարհի ) կը ներկայացնեն 248,000 բնակիչ, որուն 129,000-ը հայ, 13,000-ը ասորի և այլ քրիստոնեաներ. 1000-ը հրեայ, 3000-ը ցիկան իսլամներ (քիւրտ, եգիպտի, չէրքէզ, տաճիկ) իսկ միւս բոլոր ժողովուրդները միասին 48%: Ուրեմն, հակառակ 1894 - 1896-ի կոտորածներուն, հայերու թիւը կրկնապատկուած է և հարիւրին մէկն ալ աւելացած, միւս ժողովուրդներուն վրա հաւաքարար:

Ազգաբնակչութեան խտութիւնը քառակ. քիւմ. մեթրի վրա 1879-ին եղած է 5,5 մարդ, իսկ 1912-ին 11 մարդ. ճիշտ կրկինը 32 տարի յետոյ: Բայց հակառակ այդ յաւելման, ազգաբնակչութեան թիւը ողորմելի է, համեմատելով երկրի տարածութեան և տնտեսական կարողութեան հետ:

Վասպուրականը իր մշակելի հողերով և արգաւանդութեամբ ու բարեխառն կլիմայով ետ չի մնար Երևանեան նահանգէն, և եթէ խտութեան շաբանիչ առնենք Անդրկովկասի խտութեան այսօրայն միջին հաշիւը. — 40 մարդ մէկ քառակուսի մղոնի վրա — պիտի տեսնենք, որ Վասպուրականի այդ 8 գաւառները առանց մասնատր արշատանքի կրնան տեղաւորել և սնուցանել 900,000 ժողովուրդ: Վասպուրականը միշտ մնացած է ամայի, չնորհիւ թուրք իշխանութեան անկարողութեան: Հին ժամանակները, երբ Արծրունեայ Տունը կը կառավարէր Վասպուրականը, երկիրը մարդաշատ էր, բայց երբ հայկական իշխանութիւնը

ինկաւ, դարեր շարունակ մնաց անպատ, թէ և այդ անպատին մէջ իսկ հայերն են եղած զերակշիւ իրենց թիւով:

Այսօր աւելի ողբալի է Վասպուրականի վիճակը, Կարելի է ըսել թէ բոլորովին անմարդաբնակ է: 1915-ի մեծ պատերազմին, երբ իթթիկոստական կառավարութիւնը վճռեց քննչիւն ընել հայերը, Վասպուրականի ժողովուրդը Արամի զեկալարութեամբ դիմեց ինքնապաշտպանութեան, մինչև որ ռուս բանակը և հայ կամաւորները մտան Վասպուրական և կուղղեին ու ժողովուրդին մէկ խոշոր մասը կարողացաւ ապաստել: Արամի նահանգապետութեան շրջանին ազգաբնակչութեան թիւը նւազած էր, չնորհիւ նահանջներու: Վասպուրականի մէջ մնացողներու և պարսկական և ռուսական սահմաններու մէջ ապաստանողներու թիւը 95,000-էն աւելի չէր: Կոիւնէրու միջոցին փճացած էին միւս ազգերը, հայկական ինքնապաշտպանութեան և ռուսական արշաւանքին հետեանքով: Անոնց կորուստը, թուրք, եգիպտի, ասորի, հրեայ, և այլն. 30,000-էն պակաս չէր:

Բայց շուտով ռուսները նահանջեցին և նորէն արշաւեցին, որու ընթացքին և հայերն ալ կը նահանջեն և կարգաւեն. ու մինչև 1918թ. այդ յետ — առաջ շարժման ընթացքին եթէ հայերէն սուրի և հրեանդուութեան ենթարկեցան մօտ 20,000 հոգի, թուրքերը զրեթէ բնաջինջ եղան, իսկ քիւրտերու մէկ փոքր մասը ողջ մնաց:

1918-ին Վասպուրականի մէջ կը հաստատուի թրքական իշխանութիւն, բայց երկիրը բոլորովին անմարդաբնակ էր, փոքրաթիւ հայեր էին մնացած և քանի մը հազար քիւրտ միայն նոր վերադարձած: Կառավարութիւնը կը ձեռնարկէ երկիրը լեցնել Կովկասի թուրքերով և քիւրտերով: Ինկիւրիի 1924-ի պաշտօնական վիճակագրութեամբ Վանի վիլայէթի բնակչութիւնը հասնեց 57,071 անձ: Այս ողորմելի թիւն ալ պէտք է համարել շափազանցութիւն, քանի որ Ինկիւրիի այդ վիճակագրութեամբ թուրքերու ազգաբնակչութեան թիւը հաւած են 13,000,000, մինչդեռ թուրք, բոլշեփկ և այլ տեղեկութիւններու համաձայն, թուրքերու բնակչութեան թիւը 7 - 8 միլիոնը շանցնէր: Ուրեմն, զրեթէ կրկնապատկուած ըլլալով թուրքերու բնակչութիւնը, կրկնապատկուած պէտք է համարել նաև Վանի վիլայէթի 51,071 թիւը:

Այս վերապահութեամբ հիմք ընդունինք Ինկիւրիի 1924-ի վիճակագրութիւնը: Արդ, 1924-էն յետոյ նոր ներգաղթ չէ եղած, և չի կրնար ըլլալ, քանի որ ողջ մնացած իսլամ զաղթականները եօթը տարւայ ընթացքին, մինչև 1924 արդէն վերադարձած են: Ուրիշ շրջաններէ զաղթականներու և պաշտօնեաներու համար զբաւիչ չէ Վասպուրականը: Նախ որ բոլորովին աւերակ է, երկրորդ՝ շարունակական ապստամբութիւններու ու կոիւնէրու վայր, և ինչպէս կը վկայէ Ինկիւրիի պաշտօնաթերթը, «Հաքիմէթը Միլիէն», արեւելեան նահանգներու պաշտօնեաներ գտնելու համար կառավարութիւնը կը խոտտանայ կրկնակի ոռճիկ և ուրիշ դիւրութիւններ: Այս կացութեան մէջ, անհնար է որ ծովափը, Իլդիբը և այլ շրջանները

ձգելով նոր գաղթականներ երթան Վասպուրական: Վերագարձող 51.000 ազգաբնակչութեան յաւելումը գէթ պիտի համարենք, նկատի առնելով՝ երկրին անապահովութիւնը, տնտեսական անտանելի կացութիւնը, առողջապահական և այլ վիճակը: Մնաց որ, շրտութեամբ և թուրքերու աճումը ամենանպաստաւոր պայմաններու մէջ անգամ բարձր չէ եղած 1000-ին Տ-ն: Եթէ այդ բոլոր Հանգամանքներն ալ ոչինչ համարենք ու հետևենք 1924-էն մինչև այսօր Վասպուրականի մէջ պատահած դէպքերուն, առևազն պիտի ենթադրենք որ 1924-ին ցոյց տուած 57,000 ժողովուրդէն Հաղիւ կէսը մնացած է: Թուրք թերթերէ, ջրտահան և արարական աղբիւրներէ կիսանանք որ Վասպուրականի մէջ կը շարունակէ ազգամիջեան կռիւը: Թուրքերը կը տարազրեն, բնայինը կընեն շրտութիւն, իսկ զիւրտերն ալ իրենց կարգին կը զբաւեն Բաղէշն ու Վանը և այլն ու իրենց ձեռքն ինկոնները սուրէ կանցնեն Հարիւրներով և Հազարներով: Վասպուրական մնացած փոքրաթիւ Հայերը կորսեցան կամ գաղթեցին, Երևանեան նահանգէն Վասպուրական փոխադրած թաթար ժողովուրդը Հնուացրէ է այսօր: Քիւրտերը յուններն են ապստամբած, իսկ թուրք ժողովուրդի թափթփուցներն սուրէ քաշուած են: Այսօր Վասպուրականի ազգաբնակչութիւն ըսելով, պիտի հասկնանք 1500 - 2000 զօրք և ոտտիկան, և լեռներն ապաստանած 10.000 - 20.000 զիւրտեր: Այս վիճակին մէջ, 227000 քառ. զիւրտ. տարածութիւն ունեցող Վասպուրական ատանց չափազանցութեան կրնանք նկատել ամայն:

Բայց, Վասպուրականի Հայութիւնը դեռ կապրի: Ըսինք որ ընդհանուր կոտորածէն ապառւած վասպուրականացիներուն թիւը 95,000-էն պակաս չէր: Այդ բազմութիւնը ապստամբաբողջ քլլաւ Թուրքիայի Հայաստան և Կովկաս, մէկ մասը Իրաք և Պարսկաստան: Մանր փորձանքներու և զրկանքներու Հետևանքով 20.000-ի մօտ կորուստ տեղի ունեցաւ: Յետագայ կորսործի և հրևանդութիւններու զոհերն ալ հաշուելով, կորուստ հաշուենք 25,000, որով ողջ մնացած են 70,000-ի չափ: Այն տարբ տարբայ ընթացքին այդ փոխտակական բազմութիւնը զիչ - շատ Հանգիստ պայմաններու մէջ կապրի: Հայ ժողովուրդի աճեցողութեանը թիւն է 3%: Մենք կառնենք փոքրագոյնը, — 2% միայն: Ուրեմն մինչև վերջին պատերազմէն գաղթական դարձած վասպուրականացիներու թիւը պիտի ըլլայ առ նազն 80,000: Եթէ Հին ժամանակներէ, 1890 թականներէն պանդխտութեան կամ գաղթականութեան դիմած վասպուրականացիներն ալ հաշուենք որոնք ցրուած են ի սփիւռս աշխարհի, վասպուրականացիներու թիւը կըլլայ առևազն 110,000 - 120,000:

Այժմ ներկայացնենք Վասպուրականի Համեմատական վիճակագրութիւնը, սկսելով 1878-էն. —

1878-ին ըստ Վիթալ Գրինէի %	
Հայ	— 65,998 (51%)
միւսները	— 64,002 (49%)
գումար	130,000 (100%)

1912-ին Պարտրիարքարանի վիճակագր. %	
Հայ	— 129,000 (52%)
միւսները	— 119,000 (48%)
գումար	— 248,000 (100%)

1924-ին Էնկիւրիի մարդահմար. %	
Հայ	— 0 (0%)
միւսները	— 51,071 (100%)
գումար	— 51,071 (100%)

1926-ին դուրս գտնուած վասպուրականացիները և Վասպուրական մնացած միւս ժողովուրդները իրարու հետ համեմատելով, կունենանք. —

Հայ նոր գաղթականներ 1915-ին	80,000 (73%)
Հայ Հին և նոր գաղթակ. 1890-ին	120,000 (80%)
Միւսները Վանի մէջ 1916-ին	30,000 (27 - 20%)

Գումարը միայն Հին գաղթակ.	110,000 (100%)
Գումարը Հին և նոր գաղթակ.	150,000 (100%)
Այս համեմատական թիւերէն պիտի եզրակացնենք, որ	

1. — Միւս ժողովուրդները, որոնց մէջն են եղիտները, աօրիները, չերքեզները, բուսները, թուրքերը և շրտութիւնը միասին միշտ փոքրամասնութիւն են կազմած, և ևայսերը եղած են միշտ բացարձակ մեծամասնութիւն:

2. — որ Վասպուրականը ազգազրական տեսակէտով եղած է միշտ Հայաստան:

3. — Որ այժմ թէև Վասպուրականի մէջ Հայ չէ մնացած, բայց փախտական Հայերը իրենց սոկոսով և թիւով 80 - 73% կը կազմեն, իսկ երկիր մնացած շրտութիւնը, թուրքերը, չերքեզը նորէն կը մնան փոքրամասնութիւն, 20 - 27% կազմերով:

Այս Հետևութիւնները պէտք է համոզեն մեզ, որ միացեալ Հայաստանի անմիջական մասը կը համարենք պատմական, ռազմական և աշխարհագրական Վասպուրականը: Այդ կը համապատասխանէ վասպուրականացիներու քանակին և Հայ ժողովուրդին Ֆիզիքական ու բարոյական կարողութեան: Երբ այսօր իսկ վասպուրականացիները կը կազմեն ազգաբնակչութեան 80%-ը, մեր իրաւունքը պիտի ըլլայ այդ աշխարհը վերագործեն իրենց բնիկ տէրերուն:

Թերևս աւարկելի, թէ վասպուրականացիները կրնան չվերադառնալ Վասպուրական: Անհաւանական չէ, որ Վասպուրականի Հայ ժողովուրդը տեղաւորուած ըլլալով գանապատեան վայրերու մէջ, մէկ մասը չվերադառնայ, բայց ապահով է միւս մասին վերադարձը: Վասպուրականը հողատատ է և ապահով իր աշխարհազրական դիրքով, հարուստ բուսականութեամբ կոյս աշխարհ մը: Եւ եթէ նկատի առնենք անոր անհող, թափառական կացութիւնը և իր ներկայ բնակավայրի անտեսական խիտ պաշարը, կլիման և քաղաքական աննպաստ վիճակը, վասպուրականացին առևազն իր կէտով կուզէ դառնալ իր Հայրենիքը, երբ ան ըլլայ ազատ: Եթէ մինչև 60,000 հողի անգամ վերադառնայ, կամ 30,000 - 40,000, նորէն իր սոկոսային գերակշռութիւնը կը հասնի Վիթալ Գրինէի ցոյց տուած համեմատութեան:

Ըսողներ կան թէ այսօրայ դատարկ Վասպուրականը կրնայ թուրք կառավարութեան համար թուրք ներգաղթի ապաւելգ դառնալ. Էնկիւրի կրնայ այնտեղ լեցնել Հարկը հազարաւոր թուրք մուհաճիները, որով այլ ևս անհնար պիտի դառնայ Հայկական գերակշռութեան:



թիւն ունենալ Վասպուրականի մէջ:

Այդպիսի ծրագրերն կան թուրքերու մէջ, բայց ատոնք պիտի մնան ցնորք: Թուրքերը ուղեցին փոխանակութեան միջոցով լեցնել թուրքիսն: Թերևս 700,000 էն աւելի խլամ մտաւ թուրքիս, վերջին տասնամեակին: Բայց անոնց և ոչ մէկը չհասաւ Վասպուրական: Ներգողութիւն լրամամբը հայեցան և փճացան, ու այլևս նոր չուկայ չկայ փոխանակութեան: Թուրքը թուրքիոյ մէջ 6 — 7 միլիոն է միայն. չաճիր այլ կը պակտի, իսկ եթէ չպակտի անգամ, երբէք չի կրնար լեցնել 600,000 — 700,000 քառ. քիլոմետր տարածութեամբ Անատոլուն, և հարաւի ծովափնեայ հարուստ երկիրները: Վասպուրականի քանի մը դարերու թրջակայ տիրապետութեան ընթացքին ազգաբարկան տեսակէտէն չթրջացաւ: Այսօր աւելի քիչ վատ պիտի ունենանք, որ թուրքանոց դառնայ:

Եւ, վերջապէս, բողոքն կան, որ եթէ թուրքով չլեցուի, կրնայ լեցուի ուրիշ ազգերով՝ քերտերով, պարսիկով և նմաններով: Այդ ևս այսօր անհնար է: Թուրքը կառավարութիւնը այժմ աւելի մտահոգ է քրտական հարցով զան հայկականով: Ան թոյլ չի տար որ քերտը զօրանայ և անոր համար կը կտորէ գանձոնք: Ատիկ գատ, Քիւրտիստան աւելի հարուստ է, նոյնքան անապատ և կոյս, որքան Վասպուրականը. և որ դիտաւորն է, Իրաքի և Պարսկաստանի քրտական երկրամասերը իրտ քնակութիւն չունենալով, այդ երկիրներուն մէջ քերտը աւելի ապրելու հնար կը տեսնէ, աւելի ազատ և նազ հարմանքի ենթակայ: Այնտեղ կան անապարհ, աշխատանք, առևտուր և համեմատական ազատութիւն, որոնք քերտը պիտի քաշէն իրենց բուն հայրենիքը:

Քիչ մը հիմք ունին անոնք որ կը մտածեն թէ չըլճակ և այլ պետութիւններու ժողովուրդները պիտի զան լեցնել Վասպուրականի դատարկութիւնները: Հողագրկութեան այս չըլճանին հանդուրժելի չէ որ թուրքիսն դատարկ մնայ: Բայց դատարկ թուրքիոյ ծայրագաւառ Վանը խիստ կողմացած է և հետո՛ւ հողէ աշխատանքէ դուրի և քրտական ժողովուրդներուն համար: Վան հասնել տալով անոնք պիտի հանդիպին Իրաք, Միջերկրական, և Սև ծովի ափերը, Անատոլու, և յետոյ պիտի հասնին Վասպուրական: Այդ օրերը դեռ խիստ հեռաւոր մտահոգութիւններ են, իսկ Վասպուրականը չըլճապատող Իրաքն ու Պարսկաստանը, երկուքն ալ հողի մեծութեամբ յաւելած են, պարսպ երկիրներ են: Երկուքն ալ ժողովուրդ կը փնտռեն իրենց անապատ երկիրները մշակելու համար: Ոչ հարաւէն, ոչ արեւելէն և ոչ ալ արեւմուտէն ներգաղթի հեռանկար չկայ:

Վասպուրականի դատարկութիւնները պիտի լեցուին, ուշ — կանուխ, միայն մէկ ժողովուրդով — Հայ: Այդ հրամայական պահանջ է, ոչ միայն պատմական և ազատագրական տեսակետով, այլ և տնտեսական երկաթեայ օրէնքներով: Վասպուրականի հիւսիսակողմը գտնուող փոքրիկ Հայաստանը ամենախիտ ազգաբնակչութիւնն ունի առաջաւոր Ասիոյ բոլոր երկիրներուն մէջ 40 մարդ մէկ վերստի վրա: Ատկէ գատ առաջաւոր Ասիոյ բոլոր երկիրներու մէջ Հայաստանն է ամենէն բարձր անճեղողութիւն ունեցողը: Խորհրդային տեսակներու համաձայն 34 մարդ: Եթէ

հաշնեք իսկ 24, անմրցելի է բոլոր ժողովուրդներու համար: Փոքրիկ Հայաստանը տարեկան 30,000 մարդ դուրս պիտի ուղարկէ հողագրկութեան հետևանքով: Հայաստանի հայութիւնը իր ժառանգներուն համար հող և աշխատանք կը փնտռէ: Ատոր պատասխանը պէտք է տալ պարզ, և համապատասխան իր ձգտումներուն և աւանդութիւններուն: Մենք կուտանք այդ պատասխանը բացայայտ. — անոր շահը և ապագան կը գտնուի Տաճկահայաստանի, և առաջին հերթին Վասպուրականի մէջ:

Մենք կրնանք Հայաստանի հայութեան. — փոխանակ գաւակները դուրսնելն զրկելու և հետաքրքիր թուրքեան և կամ Խուստանս « չարչի » դարձնելու, դուրսնել երկիրն է Վասպուրականը, 900,000 մարդու տեղ կայ հոն և եթէ մէկն ալ չերթայ, շտեմարան մըն է աշխատանքի, գոր զսան տարի յետոյ միայն քո անճեղողութեամբ պիտի կրնա լեցնել:

Բայց այդ խնդրով հողագրկել Հայաստանի հայութիւնը չէ միայն չահագրուած: Հայաստանի հայութեան կրկինը, ժոտ երկու միլիոն հայութիւն այսօր վտարուած են իրենց բոյներէն և հող ու տուն կը փնտռեն: Այս ձգտումը կուղղի առաջին հերթին դէպի Մայր Հայրենիքը, ուր պիտի գտնէ իր գոյութեան հիմքը: Այդ է պատճառը որ, հակառակ այսքան փորձութեանց, նորէն Միացեալ Հայաստանի դաղափարը կը մտայ կենդանի պահանջ մը, արժանի անմիջական լուծման:

Վասպուրականի հարցը լոկ վասպուրականցիներու ապահովման խնդիրը չէ, այլ ընդհանուր հայկական:

Անոր լուծումը կը թելադրուի մեր պատմութեան, մեր աւանդութեանց, մեր թափած արեան և հայ ժողովուրդի տեղաւորման ու Հայաստանի ապահովութեան պահանջներէն:

Այս բոլորը պարզելէ յետոյ, կը մնայ ակնարկ մը նետել հարցին լուծման միջոցներուն վրա:

Ի՞նչ խօսք որ լուծման գլխաւոր ազգակը պիտի ըլլայ հայ ժողովուրդը ինք: Այս գործին մէջ կրնան օգնել անոնք որ անմիջական շահեր ունին: Աւելի քիչ արդիւնք պէտք է սպասել այս կամ այն պետութեան կամ պետութիւններու և Ազգերու Իշխանկցութեան որուժմներէն, զան սա արհամարհած ժողովուրդներէն, — քերտերէն, և ասորիներէն: Այս երկու տարբարախա ժողովուրդները Հայերու նման իրենց երկիրը թողած են թուրքը բռնակալութեան ձեռքը: Անոնց համար Վանի վիլայէթին ազատագրումը աւելի կենսական է: Այսպէս կամ այնպէս, մենք ունենք Երևան մը, Էջմիածին մը, բայց այդ դժբախտները այդքանն ալ չունին: Վասպուրականի հարաւը, Վանի վիլայէթին մէջ կը գտնուի ներկայ Հեքքեթի վիլայէթը: Այդ լեռնային աշխարհը, որ հին Կորտուքն է, իր մէջ կամփոփէ ասորիներու և քերտերու սիրտը: Հեքքեթի մէջ են Զուլամերիկը, Տիարը, Տիուրը, Չալը, և այլն, որոնք ասորիներու բնակավայրերն են: Հոն է իրենց կերտներ, իրենց էջմիածինը, իրենց մայրաքաղաքը: Իսկ արևելեան Տիգրիսէն դէպի հարաւ Արևոյն է իր ամբողջութիւնը, Բոհոտանը՝ իր սրբավայրերով, որոնք քրտութեան սիրտն ու հողին են: Ինչպէս հայուն աչքը յառած է դէպի Վան, ասորիին

աչքը ուղղած է դէպի Զուլամբրիկ, իսկ ջերտիրը դէպի Քիլիվէ Բոճտան: Այս երեք ժողովուրդներուն երեք ազգային կեդրոնները միեւնոյն բռնակալութեան կողմէ յափշտակած ըլլալով, պէտք է որ միաձուլ ուժով խորտակուին բռնակալութիւնը:

Շահճուք ընդհանուր թշնամիին հանդէպ մէկ ետևաւ պիտի կայծմեն ճնշածները և ցրկածները և փոխադարձ իրաւունքները շանտեկելով, պիտի անօրինի իրենց երկրին բախտը: Երբ իրաւունքներու և պարտականութեանց ճշտումէն յետոյ այդ երեք ժողովուրդները դաշնակցելով մէկ ուղղութեամբ մտածեն, այդ պէտք է համարել գործին յաջողութեան կէտէն աւելին, «կաթիլ կաթիլ հեղեղ կըլլայ»: Այդ երեքին միացեալ ուժը հեղեղ մըն է որ կընայ քանդել թուրք բռնակալութիւնը: Այսօր դեռ հեղեղը չկայ, կան փոթորիկներ: Այսօր ջերտուն է միայն որ առանձին կը մարտնչէ իր երկրին ապառաջութեան համար: Թէև այդ պայքարը դեռ չէ պսակած յաջողութեամբ, բայց կը խախտէ թրքական ուժը: Իսկ երբ երեքը գործեն, մէկ անգամէն կը քանդուի բռնակալութեան հիմքը:

Չպիտի անտեսենք թրքական ուժը, բռնակալ և ոճրագործ, որ կը ծանրանայ մեր երկիրներուն վրա: Բայց միաժամանակ չպիտի յափազանցենք այդ ուժը, ինչպիսի յոռտեսութեան և անտարբերութեան մէջ: Իրաւ է որ արևմաքած ենք եղած, բայց պէտք է պաշարիւնութեամբ դիտենք մեր հակառակորդը: Ան ալ շահիջարած է: Օսմանեան մեծագոր կայսրութեան րեկորն է մնացած ներկայ թուրքոյ մէջ: Այլևս չկայ տանեակ միխոններով ժողովուրդ, ոչ ալ ստեղծագործ ուժ: Հիւսնաղ մարդու՝ Ղլաճգութիւնները կը շարունակին: Մուստաֆա Քէմալն ալ կը հետևի հին սուլթաններուն: Կախաղանները, անկախութեան դատարանները, ջարդերն ու տարազրութիւնները ոչ թէ դարձան են, այլ անկարողութենէ ծնած Ղլաճգութիւններ: Այսօրեան թուրքիան ալ գլուխ է, ինչպէս գլուխը ջարդած վիշապը, բայց ծօտ է վախճանը: Պէտք է միայն, որ արևելքի ժողովուրդներս դիտանք յետը միջոցները քիչ վնասով ազատելու համար այդ դիակէն:

Իսկ մինչ այդ՝ պէտք է կենալ կազմ և պատրաստ: Կրնայ ըստիլ թէ պէտք է կրթիլ շայտատանի իշխանաւորներուն վրա և փութացնել Վասպուրականի ազատագրումը: Այսօր պէտք է յենուլ հայ ժողովուրդին, բայց երբեք շայտատանի իշխանաւորներուն: Անոնք պարզ դիմակ են, իսկ անոնց կրթիլ՝ կը նշանակէ երես դարձնել խոթող աշխարհէն, որ այսօր հակառակ է խորհրդային Ռուսաստանին: Իսկ ամենէն զլլաւորը, այսօրայ Ռուսաստանը ոչ թէ կողմնակից է ազատ շայտատանին կամ միացեալ շայտատանին, այլ ուժեղ քէմալիստանի և անբաժան թուրքոյ:

Հասկանալու համար Ռուսիոյ բռնած կորստարքը դիրքը Հայկական դատին և շայտատանի հանդէպ,

ուշադրութեամբ կարդացէք Իթիֆհատի դատավարութիւնը, մասնաւորապէս Եսիմ ձէլփատի, Մէհմետ Հաֆըզի, Քիւշիւք Քալիֆի, Տոքթ. Նազմի յայտարարութիւնները: Թուրք գործակալներու դաւերուն և Քեազիմ - Գարապէշիի հեռագիրներուն վրա է որ բուլշեակ գործերը կը մտնեն Ղարաբաղ, Սիւնիք և Նախիջևան, Հայաստանը սկստարացնելու և թուրքոյ միացնելու համար: Անոր 60.000 դէնք, միխոնաւոր սակի հասցնելու համար է որ կը գահել Հայաստանը քէմալի բազմանքով:

Այսպիսի կտտավարութեան մը կրթիլ — թէև այնտեղ դանուին հայազգի վարիչներ — կը նշանակէ անցնել նամարդի կամուրջով, կը նշանակէ գայլին յանձնել անտամ դառնուկը: Այսօրայ Ռուսաստանը ընաւ չի տարբերիլ Հարանով Ռաստովքի Ռուսաստանէն, թէև ունի կարծիք դրօշակ, մանկապա և մուրճ: Մեզի յենարան կընայ ծառայել այն Ռուսաստանը, որ փոխանակ կարծիք կամ սպիտակ աշխարհակալութեան, կընդգրկէ ազգերու ինքնորոշման սկզբունքը և գործնապէս կիրաւորէ դրան իր սահմանադրութեամբ, թոյլ տալով որ Հայաստանը տէր կանգնի իր դաւառներուն և սգատօրէն վարէ իր հակադասիքը:

Շայտատանը իբր իշխանութիւն կրնայ յենարան դառնալ, երբ ազատ է և անկախ: Անկախ շայտատանը միայն իրաւունք ունի մտածելու Վասպուրականի և ընդհանրապէս Տանկահայաստանի ազատագրման վրա: Իսկ ոչ — անկախ շայտատանի նման ձգտումներուն հետևանքը կըլլայ ոչ թէ շայտատանի, այլ Ռուսաստանի սահմաններուն ընդարձակումը, որ կը հակառակ ոչ միայն հայերու, այլ և բոլոր պետութեանց շահերուն: Այս վերջինները աւելի կը հանդուրժեն թուրքոյ պահպանման, կամ անկախ շայտատանի ստեղծման, Սէվրի սահմաններով, քան Ռուսիոյ ընդարձակման դէպի հարաւ, արևելք ու արևմուտք:

Նոյն վերապահութեամբ պէտք է մտենալ նաև միւս հարեան և ոչ — հարեան պետութեանց: Պէտք է հիմնական դիմ մը ունենալ միջազգային այդ խնդիրներուն մէջ, գուր յուսախարութեանց չենթարկելու համար: Ո՛վ որ կընդունի միացեալ շայտատանի անկախութիւնը, պէտք է անոր հետ խօսիլ և յոյս դնել անոնց վրա, որոնք խոստումէն աւելի գործի կանցնեն:

Բայց ամէնէն ճիշտն է ըլլաւ ոչ ռէի հետ, այլ ինքն իրեն հետ և այն բախտակից հայրական ժողովուրդներուն հետ, որոնց շահերը կը նոյնանան մերկաներուն հետ: Երբ անոնց հետ միացեալ ուժ կազմենք, մեր հարցը դիրքացող բարեկամները իրենք պիտի դան դանեն մեզ, և մեզմէ անկախ իսկ, պիտի ջանան վերցնել արևելքը խառնակող այդ փոսխտը, պիտի ձեռնարկեն թուրքոյ անդառնաւորման, որու հետևանքը պիտի ըլլայ մանր ժողովուրդներու ազատագրումը:

ՌՈՒՐԵՆ

# Բամբակի մեկաճնորիը Հայաստանում

Հայաստանի ներկայ մշակող տարածութեան զգալի մասը բռնում են բամբակի (սպիտակ ոսկու) արտերը: Այդ մշակութիւնը, մինչև պատերազմ կազմուած էր դաշտավայրի զերեզցութեան բերելէի 50—60 տոկոսը և ազգաբնակչութեան կեանտի խոշոր աղբիւրներից մէկը: Բամբակագործների 90 տոկոսը ապրում էր բարեկեցիկ կեանքով: Այժմ, 1922թ-ից սկսած, բամբակի դործը պետական մեծանորէ է և ժողովրդի շահագործման միջոցներից մէկը: Բամբակ ցանոյ զերեզցին արագօրէն ընկնում է պարսքերի տակ, շնայած որ նրա ամբողջ ընտանիքը օրն ի բուն լծած է գաշտային աշխատանքի: Ինչո՞ւ՞ բացատրել այս երևոյթը: մի՞թէ բամբակը բերք չի՞ տալիս, թէ՞ զերեզցին մոռացել է նրա մշակելու ձևը: Ո՛չ այս և ո՛չ այն. պատճառը պէտք է փնտրել այն քաղաքականութեան մէջ, որ վարում է կառավարութիւնը և որի էութիւնը շատ է յիշեցնում առակի արջի և գելուկի փոխարարութիւնը. արջը հայ զերեզցին է, որին բաժին է հասնում միայն բոյսի տերուն ու գալթանը, զեղջուկը՝ պետութիւնը, որը ստանում է հատիկն ու արմատին:

Թէև այդ աշխատէ է, ապա ինչու զերեզցին բոլորովին չի հրաժարուած բամբակի մշակութիւնից: Դրա պատճառները երկու են. նախ՝ որ նա իր գարնան և ամառան ամիսների կարիքը բաւարարում է Հայ — բամբակոյից (Գրախտ) և կոմիտէներից 12%-ով մերցրած վարկով, որպիսի հանգամանքը զերեզցուն դրնում է կախեալ դրութեան մէջ, և նա ստիպւած է լինում զրազելու բամբակի ցանքով: Երկրորդ՝ ամէն տարի նա միամտօրէն սպասում է զների բարձրացման, մասնաւորը որ ամէն տարի էլ կառավարական դործակալները նրան ներշնչում են նման յոյսեր:

Այժմ, առհասարակ, ազատ բամբակագործներ չկան. նրանք ամբողջապէս կախած են պետական մարմիններից, Ռուսաստանի արդիւնաբերութիւնից: Գիւղացիութիւնը, սովորաբար, պայման է կապում համառուական բամբակի կոմիտէի մասնաճիւղերը կազմող Հայկական, արգրէշնանան բամբակի կոմիտէների հետ: Այս վերջիններիս ձեռքն է գտնուած ամբողջ բամբակի դործը. նրանք են որոշում և բամբակի գինը: Գիւղացին պարտաւոր է ենթարկել և կատարել ի վերուստ եկող կարգադրութիւնները: Հայաստանի բամբակը ստան գներով տարւում է Ռուսաստան, այստեղ մշակուած է ուսական գործարաններում, վեր է անւում շիթի ու կառելի, կրկին վերագործնում է Հայաստան և Թանգ-Թանգ ծախւում է հայ զերեզցիներին:

Գիւղացու և բամբակի մի պայմանագրութիւնները, որոնք միմե ևն բոլորի համար, այնպէս են, որ զերեզցու ձեռքն ու ոտը կապւած է, մինչդեռ բամբակի մի պայմանագրութեան կէտերը:

Այսպէս, օրինակի համար, պայմանագրի 2-րդ

կէտում աււած է «Գիւղացին ստանալով վարկ՝ պարտաւորւում է ցանել բամբակ և ամէն մի դէսեասինից յանձնել միայն 40 փութ հողաւոր բամբակ»:

Եթէ պայմանագրի այս կէտը կիրաւուէր կեանքում, զերեզցին իր ստացած բերքի աւելցուկը կըհանէր շուկայ վաճառելու համար մասնաւոր անձանց: Այդ աշխատէ կը լինէր, եթէ պետութիւնը չխանդարէր՝ ապաւնով շուկան մասնաւոր առևտրականներից: Բայց կառավարութիւնը այլ կերպ է անօրինում. նախ մասնաւոր առևտրականների շուկայ ստեղծելու փորձը մէջուկից վերացաւ, որովհետև զերեզցու ստացած աւելցուկը, որ համաձայն պայմանագրի պիտի վաճառուէր շուկայում, սկսեց ուղղակի թէ անուղղակի ճանապարհներով բոնադրաւել պետութեան կողմից:

Երկրորդ՝ պետութիւնը նոյն իսկ կրիւ յայտարարեց հետ ու կենա կուտի արհեստանոցներին՝ վախեալով, որ մի գուցէ նրանք անմիջականօրէն առևտրի մէջ մտնեն զերեզցու հետ: Եւ բամբակի միջոց դրաւոր կարգադրութիւն արաւ իր բաժիններին ու ենթաբաժիններին, որ նրանք վկայական չտան բամբակացաններին, թէ սրանք պարտք չունեն Հայ բամբակի միջոց: Այս հրահանգը դրկեց զերեզցուն իր ունեցած բամբակի աւելցուկը մասնաւորներին վաճառելու հնարաւորութիւնից, որովհետև մինչև զերեզցին իր պարտքը չփակէ Հայ-բամբակի միջոց, իրաւունք չունի բամբակ տեղափոխելու կամ ուրիշին ծախելու: Այսպիսով, կառավարութիւնը իսխտեց կնքւած պայմանագրի կէտը:

Այս օրինակը ցոյց է տալիս, որ զերեզցին ուղիւ շուղի, պայմանագրով նախատեսուած 40 փիթից աւելի ունեցած բերքը պարտաւոր է տալ կոմիտէին:

Պայմանագրի երրորդ կէտում պարզ աււած է, որ իւրաքանչիւր փութ բամբակը արժէ տեղական շուկայի ցորենի փաստանի արժէքի եռապատիկն, այսինքն՝ 3 փութ ցորենին 1 փութ բամբակ, այսպիսով, զերեզցին ամէն մի դէսեասինից 40 փութ բամբակ յանձնելու դէպքում պէտք է ստանար 120 փութ ցորեն կամ համարժէք դուսար: Բայց հէնց այստեղ է, որ զՎերեր մնում է արջին, տակը՝ զերեզցուն»։ Ցորենը Հայաստանում, կալի ժամանակ, արժէ 2 ր. 20 կ., մինչև կալը՝ 3 ր., իսկ աշնանը՝ 2 ր.—50-ից 2 ր. 70 կոպ. ընդհանրապէս ցորենի միջին արժէքը, ամենայնպէս պայմաններում, չի իջնում 2 ր. 60 կոպ-ից: Հետևաբար ըստ պայմանագրի, հողաւոր բամբակի ամէն մի փութը պիտի արժէ 3×2 ր. 60կ. = 7 ր. 80կոպ.

Այսպէս պիտի լինէր օրէնքով, բայց Մոսկուայի ՍՏՕ-ն (աշխատանքի և պաշտպանութեան խորհուրդն) այլ կերպ է մտածում: Նրա համար ոչ մի արժէք չէ ներկայացնում կնքւած պայմանագրի, այդ պատճառով նա 1925թ. սեպտ. 18-ին կազմում է մի ըջջաբարական—որոշում և ուղարկում ըլլորին. 1) նորմալ

Նեղաւոր բամբակի արժէքը սահմանել 5ր. և 2) Հընդաւոր բամբակը հասաքել այնպէս, որ փութը արժեանայ 4—20 — 4—50 ր. Այս սակ է, որ բամբակի գինը որոշուում է ոչ թէ Համաշխարհային շուկայի գներով, կամ սպահանջների ազատ փոխանակութեամբ, այլ կառավարական մարմինների Հայեցողութեամբ:

Բամբակադորձը վնասուած չէր լինի, եթէ նրան, ըստ պայմանագրի, իր յանձնած գնեստտիինց 40 փ. Նեղաւոր բամբակի համար վճարէին 120 փ. ցորենով, կամ այնքան դրամ, որ կարողանար գնել նոյն քանակութեամբ ցորեն: Ինչու: Որովհետև բամբակացան գիւղացուն, ամէնից առաջ, ցորեն է հարկաւոր իր ընտանիքի տարւայ պահանջը ապահովելու համար: Դեռեստտիինց 120 փութ ցորենը բաւական կը լինէր գիւղացուն և հացը և միւս կարիքների գոհացնելու համար: Բայց բամբակովու տարւայ բոլոր ամիսներէ համար ցորենի գինը սահմանել է 1ր. 50կ.: Եւ գիւղացուց աւած բամբակի փոխարէն բամբակովու հատուցանում է ոչ թէ 120 փութ ցորեն կամ սրա իրական համարժէք գումարը, այլ վճարում է դրամով: Այսպէսով, գիւղացին իր բամբակի համար դրամ է ստանում ցորենի փութը 1 ր. 50 կոպ. հաշուով, իսկ ինքը ցորեն է գնում փութը 2 ր. 60 կոպէկով:

Վերածենք այս ամէնը թւերի լեզուի: 40 փ. Հընդաւոր բամբակի փոխարէն գիւղացին ստանալու է կամ 120 փ. ցորեն և կամ 120 փ. ցորենի տեղական շուկայի փաստական արժէքը, այն է՝  $120 \times 2 \text{ ր. } 60 \text{ կ.} = 312 \text{ ր.}$ : Իսկ իրապէս ի՞նչ է ստանում նա իր յանձնած 40 փ. Նեղաւոր բամբակի համար: Հայաստանի կոմիտէի (որի ձեռքին է հացի պաշարի մօտ 80%) համապատասխան շրջաբերականով 1 գնեստտին ցանող բամբակադորձին տարւայ ընթացքում տրւում է 30 փ. ցորեն, իսկ մէկից աւելի ցանողներին՝ 40 փ.: Ուրիմն, 40 փութ Նեղաւոր բամբակ յանձնելուց բամբակադորձը ստանում է դրամով  $40 \times 4 \text{ ր. } 50 = 180 \text{ ր.}$ , որով ձեռք է բերում 30փ. ցորեն (տարւայ ընթացքում) 1 ր. 50 կոպ. = 45ր. և մնացած 135 ր. դրամով շուկայում փութը 2 ր. 60 կոպ հաշուով գնում է 51 փ. 36 Փ. ցոր. ուրեմն, 120 փ. ցորենի փոխարէն նա ստանում է 81փ. 36 Փ. կամ, ուրիշ խօսքով, 312 ուրբլու տեղ, ստանում է 180 ուրբլի և, ցորեն գնելու դէպքում, 120 փթի փոխարէն՝ 81 փ. 36Փ. դրամով ստանալու դէպքում կորցնում է 132 ուրբլի:

Չպէտք է մոռանալ և այն, որ մի գնեստտին բամբակ ցանողը յանձնում է ոչ միայն պայմանագրով նախատեսուած 40 փութը, այլ և ամբողջ բերքը՝ 60—70 փութ: Եւ շատերը ցանում են ոչ թէ մէկ, այլ 2—3 և 4 դէս. ուրեմն, և կորցնում են մի քանի անգամ աւելի:

Այն, որ բամբակացան շրջանները մտած հացը չի բաւարարում տեղական աղագնահատութեան հացի պահանջը և հացի գինը, հակառակ բամբակովուի նշանակած 1 ր. 50 կ.—ին, միշտ աւելի բարձր է լինում,\*)

բացատրում է նրանով, որ դրսից քիչ հաց է ներմուծւում: Այսպէս, օրինակ, մի շրջան, որի աղագնահատութեան թիւը 25—ից 30 հալար է և որի 75 — 80% բամբակադորձներ են, 1925 թ. երկրորդ կիսում և 1926 թ. առաջին կիսում մտել է միայն 80 վագոն, այսինքն 80,000 փութ հացահատիկ, ընչին 3 փութ 20Փ. ամբողջ տարւայ ընթացքում, մինչդեռ Հայաստանում հացի տարիկան կարիքը մարդագլուխ հաշուում է 15 փութ:

Բայց ինչ արժէ բամբակը գիւղացուն իրեն, ուրիշ խօսքով, ո՞րն է բամբակի ինքնարժէքը: Այս հարցի առթիւ «Բամբակի գործ» ամսագրում, տնտեսագէտ Պրէզտէյինսկին Հերթիով բամբակի 7 ր. 15 կ. գինը գտնում է, որ «Բամբակադորձը վաճառելով իր բամբակը 4ր. 50 կ.» ինքնարժէքից բացի նախնիկ օգուտ է ստանում փիթից 35 կ. և լեթի ուզում է աւելի շատ վաստակել, պէտք է աշխատէ՝ ոչ թէ բամբակը թանգ վաճառել, այլ այնպէս մշակել, որ գէստտիինց ստացւի այժմեանից աւելի շատ:

Պրէզտէյինսկին ստանում է, որ բամբակի արժէքը պարզ որոշում է պայմանագրում  $1 \times 3 \text{ փ.}$  ցորեն, իսկ ինքնարժէքը (որի մանրամասն հաշիւը մէջ բերելու հնարաւորութիւն չունենք) 7 ր. 15 կ.: Այսպիսով, ըստ Պրէզտէյինսկու դուրս է գալիս, որ 7 ր. 15 կոպ. արժեցող բամբակը այնքան ժամանակ պէտք է լուրջ գիւղացուց 4 ր. 50 կոպ.—ով, որ նա խելքի գայ և սովորի այնպէս մշակել, որ կրկնակի բերք ստանայ...

Բայց գուցէ բամբակի գինը ընկել է համեմատած հացի և գործարանային ապրանքների գին հետ: Նոյն «Բամբակի գործ» ամսագրում (№ 1—2) կարդում ենք, որ Ամերիկայում բամբակը 1913 թ. արժէր 18,8 ր., իսկ 1924 թ. միջին արժէքը՝ 27,9 ր. էր. սա ցոյց է տալիս, որ բամբակը Համաշխարհային բորսային գինը թելադրող Ամերիկայում թանգացել է մօտաւորապէս 12,5%, իսկ գործարանային ապրանքներն ու հացը թանգացել են շատ ընչին սովորով:

Ռուսաստանում կատարել է միանգամայն հակառակը. գործարանային ապրանքներն ու հացը բարձրացել են 150—300%, իսկ բամբակը՝ 25%. օրինակ չիթը 18 կոպէկից բարձրացել է 45 կոպ., շաքարը՝ 15կ.—ից 33 կ. ցորենը 1ր. 20—ից 2 ր. 60, ծծումբը՝ 1ր. 80 կ.—ից 2ր. — 3ր. 60 կ.։\*)

Այս ամենից գատ, պէտք է յիշատակել մանր—մունր բաներից և հետեւեալները. դարնաը, գիւղացու կարիքի վատ մասնակ, երբ նա վարկ է ստանում, հաւաքում են պետական միաստուրք, գիւղահարկ և այլն և այլն և հէնց որ գիւղացին դրամ է ստանում իւր կարիքների համար, տեղն ու տեղը բռնում և ապառիկներն են դանձում: Այդ սև ազուանների յարձակումը, յաճախ, այնպիսի բնոյց է ընդունում, որ պետութիւնը ստիպւած է լինում միջամտել. ըստ 1925 թ. սեպտ. 2—ի որոշման բամբակովուի շէնքում արգելւում է՝ նման դանձումներ կատարել (քսական է դրամը կարելի է դանձել, միայն այլ միջոցներով):

\*) Համաձայն «Բամբակի գործ» պաշտօնական ամսագրի № 1—2—ի տւեալների, ցորենը Հայաստանում 1925 թ. նոյեմբերին արժէր 2 ր. 60 կ., իսկ չթի մէտրը՝ 65 կոպ.:

\*) Աւելորդ չէ ասել, որ ծծումբի մեծաշնորհ գտնում է բամբակովուների ձեռքին, և սրանք ծծումբը ծախում են գիւղացիներին փոքր մէկ բուրի շահելով:

Մի ուրիշ խնդիր՝ բաւական է, որ բամբակացանք կնքէ պայմանագիրը, այդ օրւանից մինչև բամբակի յանձնումը նա վճարում է ամէն 3 բուրուց բարձր հրամանագրի համար 6—40 կոպ., իսկ պարտք ունեցող բամբակացանը պայման կնքելիս վճարում է յր. 60կ.:

Մանր բաներից է նաև բամբակի տեսակաւորման խնդիրը և խոնաւութեան գեղջը. ի միջի այլոց, այս վերջինը հասնում է այնպիսի այլանդակութեան, որ ամէն բարդանից անխտիր գեղջւում է 2—2½ Փունտ: Այս շահագործման առաջն առնելու նպատակով ուղարկւում է № 6379 ուշացած շրջաբերականը, որով պատկերւում է գեղջի միայն ըստ խոնաւութեան տոկոսի:

Այս բոլոր ասածներըց երևում է, որ՝ 1) բամբակի կոմիտէները (այսինքն՝ պետութիւնը) օգտւելով իրենց ուժից՝ խախտում են կնքած պայմանագրի կէտերը և փութը 7 — 15-ից, 7 — 80 կ. արժեցող բամբակին վճարում են 4, 25-ից 4ր. 50 կ.:

2) ՄՏՕ-ի (աշխատանքի և պաշտպանութեան կոմիտէի) նշանակած գինը չի համապատասխանում բամբակի համաշխարհային շուկայի գներին և որոշւում է ոչ թէ ապրանքների գների ազատ փոխանակութեան սկզբունքով կամ ինքնարժէքը ի նկատի ունենալով, այլ կառավարական հայեցողութեամբ ու որոշւումով:

3) Պետութիւնը բամբակը գնում է նախապատերազմեան գնից մօտ 25% բարձր գներով, իսկ գործարանային ապրանքներ մատակարարում է 200—250% թանկ գներով:

4) Բացի վերև յիշւած միջոցներից բամբակի գինը իջեցնելու համար գործադրւում են բամբակի զտեսակաւորման, խոնաւութեան գեղջի» և ուրիշ կամայական միջոցներ:

Այդ է պատճառը, որ բամբակացան գիւղացիութիւնը 1923—24—25 թւերին մնում է պարտ պետութեան մի քանի միլիոն բուրիք և վշարելով հին պարտքը՝ նորից նոր պարտքեր է աւելացնում հնի վրա: Այսպէս, համաձայն Հայրամբակկոմի 1925 թ-ի գեկուցման 1800 դէս. ցանք անող մի շրջան 1923—24 թւերին պարք է մնացել 22,000 ր., իսկ 1925 թ. 18,000 ր.: Այս թւերն ինքնին ապացոյց են, որ գիւղացիական տնտեսութիւնները, մասնաւոր ստորին և միջին խաւերը քայքայւում և ընկնում են: Բամբակացան գիւղացին շատ պարզ հաշւով համեմատելով շաքարը, ցորենը, չիթը և այլն բամբակի գնի հետ՝ եկել է այն եզրակացութեան, որ «համաւորագիւղացիական» երկրում պէտք է վերջ տալ բամբակ ցանկելուն: Եւ այդ է պատճառը, որ 1925թ. 15,000 դէս. ցանքը այս տարի իջել է 11-հազարի՝ չնայած համապատասխան հիմնարկների

մղած պրոպագանդին 15,000—18,000—ի հասցնելու համար:

Ձմռանամ աւելացնելու, որ հնդաւոր բամբակը գնելով 4 ր. 50 կ. փութը՝ գտած բամբակը արժէ 4ր. 50կ. X 3,5 = 15 ր. 75 կ. ուրեքն ամէն 3,5 փութ հնդաւորից ստացւում է 1 փութ գտած բամբակ, որը արժէ 15 ր. 75 կ., այն ինչ նոյն գիւղացիութեան, որը վաղուց մոտացել է գտած բամբակ գործածելը, վաճառւում է լինտեր (կորիզից պոկած) բամբակը փութը 12 բուրով:

Այս բոլորից յետոյ ընաւ զարմանալի չէ՞, որ տարեկան հարիւրաւոր պայմանագրեր մէկէն ուղարկւում են դատարան և մէկէն որոշւում առանց պատասխանողի ներկայութեան ու տրւում բամբակկոմին դատական կատարողական թերթեր: Ահա զբա մասին է ատու Հայրամբակկոմի № 5310 շրջաբերականը «Գանձել պարտքերը ցորենով, խաղողով, եօնջայով (աւուրտով)», մի խօսքով, ինչպէս որ հնարաւոր է: Քիչ չէն պատահել գէպքեր, երբ գիւղացու տանից, ի դիմաց պարտքի, դուրս են հանել նրա հացի պաշարը, որի մանրամասն տեսչները այստեղ բերել աննպատակաբարձար է, ինչպէս նաև աննպատակաբարձար է ապացուցել, որ դաւակոմներն ու շրջկոմները գզուշացնում են բամբակկոմներին, որ ժողովուրդը խիստ զգոհւում է և որ պէտք է զոռյլ լինել այս կամ այն գէպքում:

Չարմանալի չէ նաև, որ Հայաստանի բամբակացան շրջաններից մէկում, որտեղ անցեալ տարի ցանուել էր 7000 դէս., այս տարի ցանուել է միայն 5000 դէս.:

Այս է այն քաղաքականութիւնը, որով Հայաստանի գիւղացիութիւնից խլւում է բամբակի ամէն մի փթի արժէքից 3ր. 30 կ. և ուղարկւում Ռուսաստան: Այսպիսով, Հայաստանի 800,000 փութ հնդաւոր բամբակի հետ մենք ուղարկում ենք Ռուսաստան 2,640000ր. յաւելուալ արժէք, իսկ դրա փոխարէն ստանում ենք անասելի թանկնոց գործարանային ապրանքներ: Հաշււած է, որ ԼԹՅ 800,000 փութ բամբակը ուղարկւի Եւրոպական մի որևէ երկիր, նոյն 4ր. 50կ. գնով, կտացել 18,000,000 արշին չիթ՝ արշինը 20 կոպ. հաշւով, իսկ նոյն քանակութեամբ և նոյն արժէքով բամբակը Ռուսաստանից կարող է գնել միայն 8,000,000 արշին չիթ՝ արշինը 45 կոպէկով:

Դիտարանուր է, այլ կերպ լինել չի կարող... Ժողովուրդը արիւն-ջրտինք թափելով աշխատում քարից-հողից բամբակ է հանում. կառավարութիւնն այդ բամբակը խլելով ձեռքից՝ Ռուսաստան է ուղարկում՝ առանց նոյն իսկ նրա գաւակների օրւայ չոր հացը ապահովելու:

Նրևամ

Հ. ԲԱՄԲԱԿԱՆ

### ՆՊՐՈՒՄԻՆ ԿԱՆՈՒՄԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Պորճրդային Ռուսաստանի ապրած տաղնապը Հե- տանը է, գլխավորապէս, բոլշևիկները տնտեսական քաղաքականութեան: Այդ քաղաքականութիւնից են մեկնում և բոլոր «օպօզիցիա»-ները կոմկուսի կենտրո- նի դէմ մղած կռուում: Այդ պատճառով ծանօթութիւնը խորճրդային տնտեսութեան զարգացման, առհասարակ, ահապէն նշանակութիւն ունի բոլշևիկեան դիկտատու- ռայի ապագան որոշելու համար:

Պորճր գծերով խորճրդային տնտեսական քաղաքա- կանութիւնը կարելի է բաժանել երեք շրջանի. 1) զին- տրական կոմունիզմ, 2) նոր տնտեսական քաղաքակա- նութիւն կամ ՆԷՊ, 3) պետական կապիտալիզմ կամ նոր — նկւ: Այս շրջաններից իւրաքանչիւրը ընորոշում է խորճրդային իշխանութեան ձևափոխութեան որոշ աստիճան և միաժամանակ բացատրում «Հերթական տաքսացիան» ու ներքին հակամարտութիւնները:

Ձիւնդակամ կոմունիզիմի շրջանը խորճրդային իշ- խանութեան մեղրամիւս էր: Այդ այս օրերն էին, երբ Լէնին և իր ընկերները համոզուած էին զեռ, թէ իրենք արդէն գտնուում են համաշխարհային յեղափոխութեան սահմաններում, և աշխատում էին «հարածային կար- զով» իրագործել կոմունիստական հասարակարգ: «Ի՛նչկէտ»-ների տեղատարաբը կարճ ժամանակամիջո- ցում մեղցրեց Ռուսաստանի մասնաւոր դրամաշլոյխն ու նախաձեռնութիւնը և ամէն ինչ յայտարարեց պե- տական, հաւաքական, կոմունիստական: Հողերի հա- մայնացում, գործարանների, բանկերի, առևտրի, կօ- օպերացիայի, պարենաւորման գործի, հաղորդակցու- թեան միջոցների պետականացում, զբամի ու զբամա- զլիսի ջնդում, մի խօսքով պետութիւնն իր ձեռքը առա- արտադրութեան ու բաշխման գործը իր բովանդակ ծա- ւարով:

Այնուհետև, խորճրդային իշխանութիւնը, դար- ձեալ ղեկընտարային կարգով, փորձեց կազմակերպել «պլանային կոմեստութիւն»՝ այն հաւատով, որ արդիւն- ջը կը լինի անտնտեսի միաստրեալ յաղթանակ: Եւ մէկը միւսի ետեք տալ էկան զնորական ծրագիրներ ու ձեռնարկներ, որոնք աւելի ապացոյց էին բոլ, իրի պարաշլոյխների վառ երեւակայութեան, ջան գործնա- կան ձեռնահասութեան: Այսպէս, գործարանները, յան- ձնեցին բանկերներին, որոնց հակակշիռ տակ ստեղծ է ընթանալ երկրի արտադրութիւնը — հետեանքը եղաւ արտադրութեան կատարեալ քայքայում, աշխա- տանքի ու հաշիւների խանդարում, մեքենաների ու- ձան նիւթի անխնայ փչացում, ապրանքների վաճառում, աշխատատեղի կրճատում, արտաքաղաք ապրանքների քանակի անկում, գործարանների փչացում, մի խօսքով՝ ընդհանուր քառ ու ասկինւլյալութիւն: Ռուսաստանի արդիւնաբերութիւնը փաստօրէն կանգ առաւ. ցարական շրջանում (1912 թ.) առաւ գործարանային արդիւնա- բերութիւնը տարեկան արտադրում էր 6,522 միլիոն

նոկի բուրլու արժէք, կոմունիստական արդիւնաբերու- թիւնը (1920 թ.) տեց ընդամէնը 835,8 միլ. բուր., այսինքն՝ 13,8 տոկոսը, իսկ 18—19 թ.ակաճներին այդ տոկոսը անհամեմատ աւելի ցածր էր: Ռուս բանուորը 1913-ին արտադրում էր 2,372 ոսկի բուրլու արժէք, 1919-ին միայն 479 բ., այսինքն՝ 20,2 տոկոս.\*) Ար- դիւնաբերութեան անկում և բանուոր դասակարգի աշ- լատեման առաջ լիարողացան աճել և Տրոցկու հռչա- կաւոր «աշխատանքի բանակները» աւիններն էլ անցօր գտնեցին «կոմունիստական շինարարութեան ճակա- տում», ազատութիւնից զուրկ գործատերը անկարող եղան փոխարինել բանուորներին:

Փորձեցին համայնական սկզբունքներով կազմա- կերպել հողագործութիւնը. արհեստական ձևերով ստեղծեցին խորճրդային տնտեսութիւններ (սօվխօզ- ներ), կոմունաներ, արտէլներ (ընկերութ.) և այլն. ար- դիւնքը նոյնպէս ստացեց իրաւ ողորմելի. հողագոր- ծութիւնը մանրացաւ ու աղքատացաւ. «սօվխօզները» կամ բունցին նախկին կալւածատիրական տնտեսու- թիւնների տեղը կամ շուտով սնանկացան. կոմունաներն ու արտէլները, մեծ մասամբ, դարձան զեղծումների և շարաչահութեանց բներ: Երկրագործութիւնը փոխա- նակ կալւածատիրական հողերի պետականացումով՝ արազօրէն զարգանալու՝ մեծ չափով յետադիմեց: 1916-ին Ռուսաստանում ցանւած էր 79,167 հազար զէ- սետսին հող, իսկ 1922-ին այդ թիւնը ընկել էր արդէն 43,813 հազարի: 1916-ին ոռոս զիւղացիութիւնը, որ ձիւով էր մշակում հողը, ունէր 22,725 հազար ձի, 1922-ին միայն 14,031 հազար: 1916-ին Ռուսաստանում ցանւած էր 714,000 դէս. բամբակ, 1922-ին՝ 64,000: Այսպէս և միւս ճիւղերում: Երկրագործութեան անկ- ման խորք չափով նպաստեց և խորճրդային իշխանու- թեան պարենաւորման ու հարկային քաղաքականութիւ- նը: Ըստ կոմունիստական սկզբունքի պետութիւնն ին- ջըն էր քաղաքացիներին ապրուստ միջոցներ հասցը- նողը: Այդ միջոցները — հացը, միսը, կաթնեղէնը և այլն աճուում էին գրեզացիներից՝ սկզբում Վալցյուկ- ները հաւաքելու, ապա «պարէննուրը»-ի ձևով: Զօ- րամասերը՝ թղանքներով ու գնդացիներով՝ գնում էին գրեզներ և բնի կերպով պարէն հաւաքում: Յա- մարս գրեզացիներն ընդդիմանում էին և ըմբոստ դի- րեւը ենթարկում ընդհանուրութեան: Հասկանալի է, թէ ի՞նչ զգացմունքներ կարող էր տածել գրեզացիութիւնը դէպի այս սրիկի իշխանութիւնը — ընդհանուր ատելու- թիւն, ունեցեալը ծածկելու ջանք և ցանքերի-կրճա- տում. ցանում էին այնքան, որքան անհրաժեշտ էր համարում սեփական կարիքի համար: Դրան ոյժ էր

\*) Ս. Պրոկոպովիչ, «Նորիդային Ռուսաստանի տնտե- սութեան Ակարագրութեան փորձեր», 1923 թ. (ռու- սերէն):

տալիս և այն հանգամանքը, որ քաղաքի արդիւնաբերութիւնն զրկւթ չկար, զիւղացին քաղաքից ապրանք գնելու յոյս չունէր և, ուրեմն, ի՞նչ պէտք ունէր աւելի ցանքս անելու, որպէսզի քաղաքից զինւած մարդիկ դան ու խլեն ճաւելցուիլ»:

Փորձեցին կազմակերպել ըստիւմը՝ մասնաւոր առևտրի տեղ դնելով պետականացած կօօպերացիան: Հետևանքը դարձեալ ստացուց ողբերգական: Եղած կօօպերացիայի ցանցը խանգարուեց. նոր կօօպերացիան վերածուեց բերրոկրատիկ կազմակերպութեան, որի հակապական մեքենան և անհաշիւ պաշտօնէութիւնը կլանում էին ամէն ինչ: Կարժ ժամանակամիջոցում կօօպերացիան ևս քայքայուեց. խանութիւնները դատարկեցին կամ «բաշխում էին» օրը օրին Հաւաքւած ճաւելցուկներն» ու «պարբէնտուրքը» և կամ «վաճառում էին» քաղաքացիներէր ընդարգրուած իրերը:

Այսպիսով, բուլղարիկներն բոլոր փորձերը զէջկրէտային կարգով՝ հաստատելու կոմունիստական հանրակարգ՝ կամ ստացան զաւելչական կերպարանք և կամ խորտակեցին ամենախայտառակ կերպով: Թուս սողող վարդը իր առասպելական տգիտութեամբ անկարող էր Լէնինիներէն ու Բուխարիններէր ցնորածիտ գոտանցանքները հասկանալու և գործադրելու կեանքում: Զինուորական կոմունիստի երկու տարին բաւական եղաւ, որպէսզի Թուսաստանի կեանքը վերածուի համատարած դժոխքի, գործարանները հնոցները մարին, երկրագործութիւնը բոլորովին խանգարուի, առևտուրը վերանայ, հազորդակցութիւնը կանգ առնի, քաղաքները մատնեն սովի, քաղաքների ու գիւղացիութեան միջև տաղանայ սուր թնամութիւն, երկիրը ողողի բանդիտներով, ապստամբական խմբերով, գիւղացիական շարժումներով և այլն: Եւ այս բոլորի զլխին թագաւորէ Զէկայի սանձարձակապետութիւնը:

Դրութիւնը առանձնապէս սուր ձևեր ընդունեց 1921 թ. դարնանք, երբ խորհրդային իշխանութիւնը բանակը, պաշտօնէութիւնը, բանւորներին և քաղաքի ազգաբնակչութիւնը — մօտ 35 միլիոն հոգի — կերակրելու նպատակով դիմեց ծայրահեղօրէն խիստ միջոցների գիւղերից պարէն հաւաքելու, այսինքն, գիւղացիութիւնը թալանելու համար: Եարժումներն ու ըմբոստացումները շատանում և ստացան ընդհանուր բնոյթ. 1921 թ. դարնանք եղաւ համազգիւղացիական ապստամբութիւնների շրջան, որոնց ցայտուն արտայայտիչը հանդիսացաւ Կրոնշտատի ապստամբութիւնը, իսկ Հայաստանում՝ Փետրուար 18-ի յեղափոխութիւնը: Եւ կոմունիստական կուսակցութիւնը դիմեց խուճապային նահանջի: Մարտի 15-ին, 10-րդ համազգիւղացիութեամբ, Լէնինը արտասանեց իր հուշակարօր ճառը, որի մէջ ասում էր, թէ՛ տաղնապի հուլիւնը «բանւոր դասակարգի դէպի գիւղացիութիւնն ունեցած վերաբերումի մէջ է... այդ երկու դասակարգերի ինչեքը տարբեր էր. մանր գիւղացին չի ուզում այն շահ որ ուզում է բանւորը: Մենք գիտենք, որ միայն գիւղացիութեան հետ համաձայնելով է, որ կարող ենք փրկել սոցիալիստական յեղափոխութիւնը Թուսաստանում, զանի դեռ յեղափոխութիւն չի ծագել միւս երկրներում: Գիւղացիութիւնը զժգոհ է այն յարաբերութիւնից, որ հաստատուած է մեր և նրա միջև, նա այդ յարաբերութիւնը չի ուզում և այլևս

այդ ձևով չի մտալու: Այդ անվիճելի է: Նրա այդ կամքը արտայայտուած է միանգամայն որոշ կերպով: Այդ կամքն է աշխատաւոր ազգաբնակչութեան ահազին մեծամասնութեան: Մենք պարտաւոր ենք հաշիւ առնել այդ և մենք բաւականաչափ դժաստ քաղաքագէտներ ենք, որ ամենք ուղիղ- եկէ՛ք փոխեն մեր քաղաքակաւնութիւնը գիւղացիութեան նկատմամբ... Ըստ էութեան դրութիւնն այնպէս է, որ կամ մենք տնտեսապէս պիտի գոհացնենք միջին գիւղացիութիւնը և թող ստանք ազատ շրջանառութիւն, կամ, եթէ միջազգային յեղափոխութիւնն ուշանայ, բանւորական իշխանութեան պահպանումը Թուսաստանում կը դառնայ անկարելի»: Եւ Լէնինը, իբրև զբզաստ քաղաքագէտ» առաջարկում է, որպէս փոխանցման միջոց գիւղացիական մի երկիր համար, կիրառել հարկի և ազատ շրջանառութեան դրութիւնը: Այդ շրջանառութիւնն ահա կը լինի միջին, շարժող, հրող ոյժ գիւղացու համար»: Նա բացատրում է և «շրջանառութեան ազատութիւն» խօսքը: «Շրջանառութեան ազատութիւն նշանակում է առևտրի ազատութիւն, իսկ առևտրի ազատութիւն նշանակում է՝ յետ դէպի դրամատիրութիւն: Շրջանառութեան և առևտրի ազատութիւնը նշանակում է ապրանքային փոխանակութիւն անշատ մանր տնտեսութիւնների միջև: Մենք ամենքս, որ ուսել ենք մարկսիզմի դէժ աշխուրհէ, գիտենք, որ այդ շրջանառութիւնից և առևտրի ազատութիւնից անխուսափելի կերպով բոլիւմ է պարանք արտադրողի ստորբարձումում դրամատիրի և աշխատող ձեռքի տիրոջ, բաժանումը դրամատիրոջ ու վարձու բանւորի, այսինքն՝ վերատեղծումը նորից դրամատիրական վարձու ստրկութեան, որը երկնքից չի ընկնում, այլ ամբողջ աշխարհում բանում է հէցս ապրանքային երկրագործական տնտեսութիւնից»:\*)

Այս միտքը Լէնինը զարգացնում է և իր մի գրքովում:\*\*) Նա ասում է, որ շրջանառութեան և առևտրի ազատութիւնը ստաջ կը բերէ « մանր բուրժուադիայի և կապիտալիզմի վերածնութեան» և շարաչահութեան զարգացում. «առևտրի ազատութիւնը կապիտալիզմ է, իսկ կապիտալիզմը՝ շարաչահութեան ծիծաղելի է, դրա վրա աչք զոցելը»: Եւ չնայած դրան, նա անհրաժեշտ է դոնում մտցնել «կապիտալիզմ» և «շարաչահութեան» ազատութիւն, որովհետև «քաղաքական կցուցիւթիւնը 1921թ. դարնանք դասաւորուած էր այնպէս, որ անմիջական, ամենալճնական, ամենաարտակարգ միջոցներ պէտք է ձեռք առնել գիւղացիութեան վիճակը բարելաւելու և նրա արտադրական ուժերը բարձրացնելու համար»...

Այսպիսով սկիզբ դրեց անմոտական նոր փաղաքակաւնութեան շիջման — որով վերականգնուց և մասնաւոր սեփականատիրութիւնը, մանր առևտուրը, բուսադրուումների փոխարէն գործածութեան դրեց պարբէնտուրքը, մտցուց հացի վաճառքը: Սա արդէն մի ուժեղ ոտարին էր «կոմունիստական պետութիւնից» դէպի «կապիտալիստական կարգը», վերադարձ դէպի հին ուժեղ մը: Կոմունիստներն ուզում էին երկրի արտադրական

\*) «Կոմ. կուս. 10-րդ համազգիւղացիութեամբ». 1921 թ.  
\*\*) «Պարենաւորման հարկի մասին». 1921 թ.

ուժերի բարձրացումով՝ մի կողմից սպահովել պետական կեանքի անվտանգությունը, մի կողմից՝ հանգստացնել զինացիական խռովայույց ուլիխանոսը: Այդ երկուսն էլ անհրաժեշտ էր խորհրդային իշխանութան ամրացման և յարաստութեան համար: Այսպիսով ՆեՊՆ գուտ քաղաքական քայլ էր, որ, սակայն, ունեցաւ և անմիջական տնտեսական նեղուցիւններ, իսկ այս տնտեսական նեղուցիւններն էլ, իրենց հերթին, տւին նոր քաղաքական պտուղներ:

Առաջին հրատապ նպատակը — գիւղ-դաշինակաւ շարժումների զսպումը — իրականացաւ 100 տոկոսով: ՆեՊՆ հասկացւեց իբրև առաջին քայլ կոմունիստական քաղաքականութիւնից հրաժարելու և որոշ շարժով հանգստացնել յուզած մտքերը. սպաստումութիւնները վերջ գտան: Սակայն, այն, ինչ որ սպասում էին կոմունիստ պետերը, ՆեՊՆ շուտէ: Լէնինը ՆեՊՆ հասկանում է իբրև կարճ ժամանակայ զառար-յեղափոխական պրոլետարիատը նահանջելով դէպք սպահով դիւրեք՝ մի պահ շունչ պիտու առնէր ու նորից դիմէր գործի: Իրականութեամբ դուրս եկաւ ճիշտ հակառակը. ՆեՊՆ հանգիստացաւ մի հանգրան հակա-կոմունիստ տարերքի անուամբ ու կազմակերպման և կոմունիզմի հաշտարարի ճանապարհին:

1921 թ. մարտի 15-ից յետոյ Ռուսաստանը թիւ կախուրդ քայլերով, ոտք կոխեց նորից դրամատիրական տնտեսական յարաբերութիւնների ուղին: Փակած խանութները վերարացւեցին և արագ կերպով ստեղծւեց նոր բուրժուազիան, այսպէս կոչւած նկլումս տարը: Գիւղի և քաղաքի միջև վերականգնող ընդհատուած առևտուրը: Պետութիւնը հարկազուտ եղաւ ունենալու հաստատուն բիւջէ, իսկ դրա համար պէտք տեսնեց վերականգնելու կայուն դրամ. ստեղծեց շէրվոնէցը: Դրամը նորից բունց տնտեսական միջնորդի տեղը և զարձաւ շարժել ոյճը առևտրի և արդիւնաբերութեան: Պետութիւնը պահելով հանդերձ իր ձեռքը ճարտարաբանական ու խոշոր առևտուրը՝ հարկաբեւեց դիմելու տրեստիստութեան բուրժուական ձևերին. աւելացեց աշխատատեղ, կրճատեց աշխատավարձը, գործարաններից հեռացեցին աւելորդ բանւորները: Հետևանքը եղաւ վերականգնումը նախկին հակասութիւնների. տնտեսական անհասարակութիւնն ու շահագործում, հարուստներ և աղքատներ, նէպմանների կողքին գործազուրկների միլիոնանոց բանակ:

Տնտեսութեան վերականգնումը միևնոյն թափով չգարգացաւ քաղաքում ու գիւղում, ինչպէս միևնոյն թափով տեղի չէր ունեցնել և քայքայումը: Կոմունիստական տնտեսութեան յնորհիւ 1918 — 20 թւականներին քաղաքային խոշոր արդիւնաբերութիւնը ընկել էր մինչև 16,7 տոկոսը նախապատերազմեան քանակի, մինչդեռ գիւղատնտեսութիւնը՝ միայն 62,8 տոկոսի, այսինքն՝ չորս անգամ պակաս էր մնասել: Եւ մինչ Նեպը բաւական լայն սպարելչ տեղց վիզլատնտեսութեան, քաղաքային ճարտարաբետը զբթէ ամբողջութեամբ մնաց կոմունիստական մեռելածին ու բիւրոկրատիկ կազմակերպութեան ճիւղներում, ուստի և գիւղի արտաբերութիւնը, հակառակ բնական աննպատ պատահարների և 1920 թականի հասարակ սովի, զգալի քայլերով ստալ էր զնայ, իսկ արդիւնաբե-

րութիւնը շարունակեց մնալ վնասարեք պետական զանձի համար:

Գիւղի և քաղաքի զարգացման անհամաշարժութիւնը, բնականաբար, չէր կարող շահանգստացնել ճոցիալիզմ կառուցող կոմունիստներին, և արդէն 1922 թ. սեպտեմբերին ժողովրդական տնտեսութեան բարձրագոյն խորհրդի նախագահ Ռեզոլը հրաւիրում է ընկերներու ուշադրութիւնը այն զմտազիծ վրա, որ «գիւղատնտեսութիւնը ընդունել է աւելի արագ վերականգնել, քան մեր արդիւնաբերութիւնը և, ի մասնաւորի, խոշոր ճարտարաբետը... Այս տարի գիւղացին ու գիւղը աւելի շատ են ստեղծել, քան գործարանն ու քաղաքը, քան ստեղծել է բանւորը: Մի առատ տարի, անմարեթաց սովից յետոյ, ձգտում է փոխել ընդհանուր գրութիւնը մեր հանրապետութեան մէջ յօտուտ գիւղացիների և ի վնաս քանւորների: Սա մի խոշոր սպառնալիք է հանրապետութեան տնտեսական բովանդակ գրութեան համար: Եթէ գիւղատնտեսութիւնն արդէն ընդունակ է մի տարւայ ընթացքում գերազանցել բանւորին, 2—3 տարիներից յետոյ գիւղացիութեան դասակարգային տնտեսական նշանակութիւնը շատ աւելի կը գերազանցէ բանւոր դասակարգի տնտեսական նշանակութեան համեմատութեամբ. Սրանից պէտք է եզրակացութիւններ անել մեր հարկային քաղաքականութեան համար, բիւջէի բաշխման և հանրապետութեան ամբողջ ուշադրութիւնը բանւորութեան վրա կենտրոնացնելու համար: Պէտք է արագացնել արդիւնաբերութեան վերականգնման թափը և թոյլ չտալ, որ գիւղացին ու գիւղը բանւորից ու գործարանից առաջ անցնեն»:

Միտքը պարզ է. քանի որ գիւղացիութիւնը աւելի արագ է զարգանում, քան պետական արդիւնաբերութիւնը, պէտք է գիւղացիների վրա զննլ մեծ հարկեր և այդ հարկերից ստացւած գումարը յատկացնել պետական անշահաբեր գործարաններին: Այսինքն, կոպիտ խօսքով սասած, գիւղատն. վաստակով պահել քաղաքի ազգայնակութիւնը, պետական պաշտօնեայ զարձած բանւորներին: Գիւղացին պէտք է աշխատէ, որպէսզի գործարանների բանւորը սոված չմնայ — ահա այն անհիթթ գրութիւնը, որ ստեղծեց կոմունիստական կուսակցութեան կարճատեղ քաղաքականութիւնը: Հասկանալի է, որ այս վիճակից գիւղացիութիւնը չէր կարող գոհ լինել: Այս դժգոհութիւնն այժմ արտայայտեց ո՛չ թէ տարերային խռովութիւնների ու սպասումութիւնների, այլ շատ աւելի կազմակերպւած և կտրուկ ձևով: Գիւղացիութիւնն արդէն այնքան ամբողջ ու համարձակ էր դարձել, որ կարող էր իր կամքը հակադրել բոլշևիկների կամքին. գիւղը փակեց ինքն իր մէջ, խզեց ամէն յարաբերութիւն քաղաքից, մերեկց իր հացն ու դանպան արտաբերութիւնները ծախու տանել քաղաք: Սկսեց մի տեսակ խուլ, բայց համատարած բոլիզա խորհրդային իշխանութեան շատ տեղեր էլ զպտոնի շատ սպանութիւնների կոմունիստների ու թերթերի թղթակիցների: Վիճը քաղաքի և գիւղի, գիւղի և խորհրդային իշխանութեան միջև քանի զնաց խորացաւ:

\*) «Էկոնոմիչէսկայա ժիզն», 1922 թ. № 210. A.R.A.R. ©



Կոմունիստական կուսակցութեան առջև մնում էր մէկ ճանապարհ. բարձրացնել ու զօրացնել պետական արդիւնաբերութիւնը, գերզական շուկայ հանել առատ սպարանքներ և կենդանի փոխանութեան միջոցով կապել գիւղը քաղաքի հետ: Բայց դրա համար էլ անհրաժեշտ էր խոշոր դրամադուրիս. հին գործարաններն ու մեքենաները հետզհետէ մաշւում ու փչանում էին, նախկին չըջանից մնացած հում նիւթերը սպառւում, նոր մեքենաներ ու հում նիւթեր դնելու համար էլ դրամ չկար: Հարկերից հաւաքած զուտ արները հազիւ բաւականնում էին ընթացիկ ծախսերը հոգալու: Ի՞նչ անել: Եւ խորհրդային իշխանութիւնը իր հայեացքն ուղղում է դէպի դուրս՝ յուսալով դրամադուրիս ստանալ «գիշատիչ իմպերիալիստներին»: Այդ յուսով հրահրւում է հանուած «կոնցէսիսները» և արտաքին փոխառութիւններ իրաւական Ժրգովի: Սակայն, երբ յաջողորոշ բանակցութիւններն ու խորհրդաժողովները (Ջէնովա, Լահէ) ո՛չ մի դրական արդիւնք չտւին. «գիշատիչ իմպերիալիստները» չէին հաւատում բոլշեւիկներին, որոնք չէին կարողանում տալ վստահելի երաշխիքներ, որ խորհրդային կոնցէսիսներին մէջ դրած դրամները չեն կորչի: Եւ չեն հաւատում ու դրամ չեն տալիս մինչև այսօր էլ:

Բոլշեւիկներին յոյսերն ի դերև հանց և արտաքին առևտրի պետական մենաշնորհը — վնէշտորքը, որ թէ իր բերրկարտիկ կազմակերպութեան և թէ խորհրդային սպարանքների ինքնարտօքի բարձրութեան պատճառով ո՛չ միայն որևէ չափ չբերց պետութեան, այլ նոյն իսկ խոշոր վնաս էր հասցնում. ցորենը, նաւթը արտածւում էին վնասով՝ միայն քաղաքական նպատակներով: Եւ տարիներ շարունակ խորհրդային առևտրական բալանը մնաց կրաւորական. այսպէս, 1921 թ. Խորհրդ. Ռուսաստանի արտածութիւնը հաւասարում էր 21,3 միլիոն սպարանքային բուրգու, մինչդեռ նոյն ժամանակաշրջանի ներածութիւնն էր 249,9 միլիոն բուրգի, 1922 թ. առաջին կիսամեակին՝ արտածութիւնը 24,8 միլ. բուրգ. ներածութիւնը 279,2 միլիոն բուրգ. և այլն: (Պատերազմից առաջ Ռուսաստանի առևտրական բալանսը դրական էր՝ մօտ 300 միլ. բուրգի):

Այսպիսով, Նէպի էլ չկարողացաւ բուժել խորհրդային տնտեսութեան հիւսնոք մարմինը: Բոլոր «ճակատներում» — և՛ գիւղացիական, և՛ արդիւնաբերական, և՛ արտաքին առևտրի ու կոնցէսիսներին — միմեանց՝ յաջողեցին չարաչար պարտութիւններ: Կեանքի անասիկ թանգութիւն, մօտ մէկ ու կէս միլիոն արձանագրած զործագորկիներ քաղաքներում, գիւղի ու քաղաքի փոխարարբերութեան լարում, չէրվոնցի արտօքի աստիճանական անկում, նէպմանների սանձարձակ չարաշահութիւն, կոմունիստական վերին խաւերի այլասերում, կապիտալիստական կարգի նախնական շրջանի բոլոր յուր կողմերը—ահա կոմունիստական «չինարարութեան» արդիւնքը Նէպի շրջանում:

Կեանքի այս ահաւոր երևոյթներին առթիւ Ի՞նչ էին անում կոմունիստները, Ի՞նչ կարող էին անել, բացի յուսահատական գալարումներից: «Ուղղափառ կոմունիստները» կատաղի պայքար էին մղում «պար-

լէտարական» պետութեան «բուրժուականացման» դէմ և պահանջում էին վերջ տալ, «նահանջին», հաշւեայրդարի ենթարկել Նէպը իր «պետական կապիտալիզմով» և վերադառնալ կոմունիստական շիտակ սեռատեղական քաղաքականութեան: Իշխանութեան գլուխ կանգնածները — «գործի մարդիկ» — տեսնում էին անկարելիութիւնը նման վերադարձի և թոթովելով կոմունիստական մաշած բանաձևերը՝ ալիստում էին համոզել աշխարհին, որ իրենք «սոցիալիստական պետութիւն են կառուցում», որ Նէպը կոմունիզմից դրաժարում չէ, այլ կոմունիզմի դարգացման մէկ աստիճանը, և որ անհրաժեշտ է պահպանել «երկրագնդի միակ սոցիալիստական պետութիւնը» արագացնելու համար համաշխարհային յեղափոխութիւնը:

Համաշխարհային յեղափոխութիւնը արագացնելու համար կտրուել միջոցներ էր ձեռք առնում և Երրորդ Ինտերնացիոնալը՝ «համաշխարհային պրոլետարիատի մարտական օրգանը», բայց նրա գործունէութիւնը պատճառ էր դառնում, որ է՛լ աւելի ստանձնացման ենթարկել ու անտեսապէս թուլանայ խորհրդային Ռուսաստանը, որը շահ է հրամայակալութեան թելադրում էր որչէ հասկացողութեան մէջ «ըզամատրիական արեւմուտքի» հետ և ապահովել վերջինի ժամնակութիւնը խորհրդային տնտեսութեան վերականգնման ու զարգացման գործում: Երրորդ Ինտերնացիոնալը իր խոշոր այսոյ ու դուրիչ գործելակերպով, այսպիսով, պատանջ էր կանգնում արեւմուտքի և խորհրդային երկրներին մէջ և փաստօրէն, ծառայում էր ի վնաս վերջիններին շահերին:

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, կոմունիստական քաղաքականութեան ներքին հակասութիւնները՝ կեանքի երկաթէ օրէնքների տրամաբանական հետևանքով՝ երթալով սրէն և սպառնական են դառնում: «Վերադարձ դէպի գտարիւն կոմունիստական քաղաքականութիւն, թէ՛կող պատուով մեռնելու համար», պահանջում է կոմունիստներին մի մասը: «Իշխանութեան պահպանութիւնը գերազոյն նպատակ է այսօր՝ վաղուց յեղափոխութեան համար», պատասխանում է Պոլիտբիւրօն: Իսկ Իշխանութեան պահպանութեան համար անհրաժեշտ են նոր զիջումներ, նոր նահանջ Նէպի սահմանների ընդարձակման ուղղութեամբ: Եւ Նէպի սկզբնաւորումից հազիւ չորս տարի անցած յանձնւում են թշնամի և կոմունիստական նոր ամբողջիւններ. վա է՛ հասնում նրա-Նէպի կամ իսկական պետական կապիտալիզմի շրջանը:

1925-ին խորհրդային իշխանութիւնը անում է էլի մի շարք զիջումներ «մանր-բուրժուական տարրերին». ընդարձակում են մասնաւոր առևտրի շրջանակները, ազատութիւն է տրւում մասնաւոր արհեստների և ամր արդիւնաբերութեան. թոյլ է տրւում ստանց արտօնութեան մինչև 200 քանուրով մասնաւոր գործարաններ հիմնել, իսկ առկա բանտր բանեցնելու համար ստանալ իշխանութիւնից արտօնութիւն. իրաւունք է տրւում ծառայ, գործաւոր և, առհասարակ, վարձու աշխատաւորներ բանեցնել. պետական վարկ է բացւում մասնաւոր արհեստի և՛ արդիւնաբերութեան համար, թոյլ է տրւում փոխադարձ վարկի մասնաւոր բանկեր հիմնել, իրաւունք է տրւում հողը տալ կապալով,

երկրագործութեան մէջ արտօնուած է վարձու աշխատանքը և մասնաւոր պայմանագրութիւնը դորձատրոշ ու սքակ միել։ Սա արդէն ՆԵՊ չէ, այլ հիմնական հրատարուած կոմունիստական դադարեաներից։ Պետութիւնն իր ձեռքին է պահուած միայն խոշոր արդիւնաբերութիւնը, արտաքին առևտուրը և վարկի մեծ մասը։ Բայց ըստ էութեան, դրա մէջ կոմունիստական ոչինչ չկայ։ առաջ իր բուրձնային քննիչից հրատարուած արդի և արդարական որևէ պետութիւն էլ կարող է հաստատել արտաքին առևտրի և վարկի ու խոշոր արդիւնաբերութեան մենաշնորհ և դրանով նա ընաւ կոմունիստական դարձած չի լինի։ Շատ-չատ նա անցած կը լինի պետական կապիտալիզմի շրջանը։ Եւ Խորհրդային Ռուսաստանի անտեսական վերջին փուլը ոչ այլ ինչ է, եթէ ոչ դատարին պետական կապիտալիզմ։ Այսինքն, նա գտնուած է արդիւնաբերութեան և փոխանակութեան կապիտալիստական շրջանում՝ միայն տնտեսութեան զեկաշարքը դրամատէր դասակարգը չէ, այլ պետութիւնը։

Կարող են, ի հարկէ, առարկել, թէ մի երկրի տնտեսական կազմը ընդունուած է ո՛չ թէ կազմակերպութեան ձևով, այլ նրանով, թէ ընկերային կ'ըն խափ մեղքին են գտնուած արտադրութեան միջոցները։ Պետական կապիտալիզմը մի երկրում, ուր իշխանութիւնը շահագործող դասերի ձեռքին է, կարող է առկա կապիտալիստական հետևանքներ, ուրիշ երկրում, ուր իշխանութեան գլուխն է գտնուած աշխատատրութիւնը, կը տայ սոցիալիստական արդիւնք։ Հէնց ինչդիրն էլ այն է, որ խորհրդային երկրներում այս տեսակէտից էլ տարբերութիւնը շատ չնչին է և արդարական արդի պետութիւններէ համեմատութեամբ։ Գիտատրէն Ռուսաստանում այսօր իշխանութիւնը գտնուած է մի խմբակի ձեռքին, որը ոչ մի կապ չունի աշխատատրութեան հետ։ «Պրոլետարիատի զիկապտուարում» այնտեղ սպառող պոխորիկներն են զգիկապտուարայով պրոլետարիատի գլխին»։ Ո՛չ բանաբերութիւնն է տէրն ու զեկաշարքը խորհրդային պետութեան, և ոչ էլ զեկաշարքի թիւնը, այլ մի փոքրիկ սակաւապետութիւն ուրոյն հոգեբանութեամբ ու շահերով, որը, յամենայն դէպս շատ հետո է աշխատատրութիւնից։ Այսպիսով, խորհրդային պետական կապիտալիզմը եթէ բոլորովին նման չէ եւրոպական կապիտալիզմին, նման չէ ընաւ և աշխատատրական տնտեսական։ Նա բոլլեկի մտքի ու կոմունիստական իշխանութեան ստեղծագործութիւն է, և իրաւունք ունի «օպրոկիան» պնդելով, որ այդ պետական կապիտալիզմը տնտեսական այլասերած մի ձև է, որ կամ պիտի փլչի և կամ անխուսափելի կերպով վերածուի բուրձնային տնտեսական դրութեան։ Եւ «օպրոկիան»-ը ալ թիւ պահանջները այդ տեղ էլ տանում են։ Հրատարուել վճշտորգից, սահմանափակել Յրբորը Ինտերնացիոնալի զերը՝ սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ կոմունիստական տրոպետութեան վերջին կոսանքն էլ քաղել և դուրս դալ մաքարածն կապիտալիզմի լայն ճանապարհի վրա։

Ինչ է խորհրդային տնտեսութեան պատկերը այսօր, նոր գիշտանքից յետո, նոր-Նէպի շրջանում։ Հիմնական ցարժ այդ տնտեսութեան՝ քաղաքի արդիւնաբերութեան և զեկապտուարութեան զարգաց-

ման թափի տարբերութիւնը շարունակուած է մնալ իր ոչ մի մէջ և ո՛չ մի «ինդուստրիալիզացիոն», «ինտենսիֆիկացիոն», «տրապորիզացիոն» փոփոխութեան առաջ չեն բերի։ Այս տարբերութիւնից բխում են անհայտ հետևանքներ, որոնք որոշուած են խորհրդային տնտեսութեան ընդթը։ Բուրձնային շարունակուած է պնդել, որ այդ տնտեսութեան մէջ զերիշխում են սոցիալիստական տարբերը, բայց «մարքիտիստական մեթոդով գիւնած» մարդկանց համար դժուար չէ տեսնել հակառակը։

Եւ, իրօք, կ'ըն ուղղութեամբ է զարգանում խորհրդային տնտեսութիւնը նոր-Նէպի շրջանում։ Այս հարցին պատասխանելու համար կանք առնենք տնտեսական երկու տարբի՝ զեկապտուարութեան և մասնաւոր առևտրա-արդիւնաբերութեան վրա։

Գիւլաշարական տնտեսութիւնը խորհրդային երկրներում, ինչպէս տեսանք, զարգանում է շատ աւելի արագ, քան քաղաքային տնտեսութիւնը։ Այսպէս, 1926 թ. ցանքերի քանակը հասել էր նախապատերազմական 95 տոկոսին, մինչդեռ արդիւնաբերութիւնը հազիւ 70 տոկոսն էր կազմում։ Գիւլաշարական տնտեսութեան անման հետ դուրընթաց աւելի և աւելի տարածում է և հողակապալի ու վարձու աշխատանքի կերտումը, որի հետևանքով առաջ են գալլաւ ուժեղ հողային տնտեսութիւններ, զարգանում են ներքին շերտաւորումները, և զեկաշարքը մտնում է բուրձնային տնտեսակարգի շրջանակի մէջ։ Հաւաքական տնտեսութիւնները, որոնք զեկապտուարութեան հազիւ 1.5 տոկոսն են կազմում, անգոր են հակազդելու մասնաւոր սեփականատիրական տարբերին, որի ալիքներում խեղդուած է կոմունիստական իշխանութիւնը։ Եւ Հէնց իրենք՝ բոլլեկի զեկապտուարները պնդում են, որ մասնաւոր տնտեսութիւնները զերուած տարւում են աւելի խնամքով և անհամեմատ աւելի շահաւետ են, քան կոմունիստականները։ Մասնաւորապէս յաջող է ընթանում ունեւոր զեկապտուարի տնտեսութիւնը։ «Նրանք աւելի քան անձնական տնտեսութիւն վարող միւս բոլոր զեկապտուարները, օգտագործում են տէխնիկական բարելաւումները, զեկապտուարական կօպերացիան, խորհրդային պարոցը և այլն»։\*)

Չքատր զեկապտուարութիւնը, որը, իբր թէ, խորհրդային իշխանութեան յենարանն է զերուած, աւելի և աւելի դուրս է գալլաւ բոլլեկիներէ արդեցութիւնից և կամ հակուած է զեկա «կուլակները»՝ զէպի ունեւոր զեկապտուարները, կամ քաղաքական հանում է հասարակական-քաղաքական կեանքից։ Միջակ զեկապտուարութեան, ընդհակառակը, առաջ է անցնում, բայց ոչ թէ խորհրդային իշխանութեան հետ մերձեանալու ուղղութեամբ, այլ՝ նոյնպէս զէպի «կուլակութիւն» և կոմունիստական սոցիալիզմի շահապետութիւններէ տարիներէց յետո՝ ունեւոր զեկապտուարութիւնը բռնած է «վերականգնելու», հարստանալու անյառ տենչով, և այս տենչն է մղի։ յոյժ նրա վարքագծի, որը աւելի և աւելի դառնում է շեշտուած հակակոմունիստ։ Խորհրդայիններէ վերջին ընտրութիւններն այդ հաստատեցին իրակատար կերպով։

\*) Կրիցման, «Հաղային մակաւում», 1926թ. №10

Նման երևոյթ նկատուած է և մասնաւոր արդիւնաբերութեան բնագաւառում: Ամենից առաջ աչքի է զարեւում մանր արդիւնաբերութեան — արհեստների և տնայնագործութեան արագ զարգացումը. 1923—24թ. արհեստների և տնայնագործութեան ընդհանուր արտադրութեան արժէքն էր 3,1 միլիարդ չէրվանդ րուբլի, իսկ այս տարի՝ 4 միլիարդ, մի գումար, որ նոյն իսկ զերգրացնում է նախապատերազմական արժէքը: Վերջին 3 տարւայ ընթացքում մանր արդիւնաբերութեան մէջ աշխատող ձեռքերի թիւը 2,626,000-ից հասել է 3,117,360-ի: Այս հսկայական թւերի առջև բաւական խեղճ պատկեր է ներկայացնում պետական ու կոօպերատիւ մանր արդիւնաբերութիւնը, որը հասնում է ընդհանուրի հարկը 12 տոկոսին. և այս հսկայառակ այն բանի, որ պետութիւնը ճնշում է նրան ծանր հարկերով, զրկում է վարկից, մինչդեռ պետական ու կոօպերատիւ արդիւնաբերութիւնը վայելում է բազմաթիւ առանձնաշնորհումներ և լայն վարկային օժանդակութիւն:

Ըստ պաշտօնական վիճակագրութեան, 1924—25 թվին, գիւղական և քաղաքային բովանդակ տնտեսութիւնների 68,5 տոկոսը կազմում էր մասնաւոր տնտեսութիւնը, 1925—26-ին՝ 65,9%: Իսկ բանւորութեան արժուպրած հարստութիւնը 1926 թ. հասնում էր ընդհանուր ազգային եկամտի 19 տոկոսի: Այս պատճառահան թւերը, որոնք պատրաստած են յատուկ նպատակով և բաւական չափազանցած են յօգուտ բանւորութեան, ցոյց են տալիս, որ բանւորական արտադրութիւնը, այսինքն՝ պետական արդիւնաբերութեան բաժինը անշնչան է խորհրդային տնտեսութեան ընդհանուր գումարի մէջ: Պետական արդիւնաբերութիւնը չարձանակում է մնալ վնասալար. ամէն տարի պետական բիւջէի մէջ մտցւում են խոշոր գումարներ փակելու համար արդիւնաբերութեան բացը: Իսկ ո՞րտեղից են առնում այդ գումարները: — Գիւղացիութիւնից և մասնաւոր արդիւնաբերողներից ու առևտրականներից: Ուիչէ խօսքով, պետական արդիւնաբերութիւնը ապրում է ի հաշիւ գիւղացիութեան և մասնաւոր սեփականատէրերի Գիւղացին օրն է բուն աշխատում, քրտինք է թափում, կէս-կուշա, կէս-անօթի կեանք է անց կացնում, որպէսզի պետական գործարանների բանւորը և պետական պաշտօնէութիւնը ուտելու հաց ունենան...

Պատկերը միևնոյն է և առևտրի ու ֆինանսների աշխարհում. խորհրդային առևտուրն ու կոօպերացիան հետզհետէ տեղի է տալիս մասնաւոր նախաձեռնութեան օտջև՝ Հակառակ արտաքին և ներքին առևտրի պետական մենաշնորհի: Նարկոմֆինի ժառանգէտների Հաշիւներով մասնաւոր առևտրականները շրջուն դրամաչուրիւր 1924—25-ին հասնում էր 450 միլիոն ռուբլու, և պետական արդիւնաբերութիւնից շուկայ հանած ապրանքների 46 տոկոսը անցել էր մասնաւոր առևտրա-

կանների ձեռքով: 1923 թ. հոկտեմբերին Ոորհրդային Միութեան սահմաններում կար 47 փոխադարձ վարկի ընկերութիւն (մասնաւոր բանկ) 1,1 միլիոն ռուբլի դրամազլիով: 1925 թ. հոկտեմբերին նրանց թիւն արդէն 187 կտու էր 7,9 միլիոն ռուբլի դրամազլիով: Նրանցի է պահ տրւած գումարներն և ընթացիկ հաշիւները 2,1 միլ. ռուբլուց հասել են 12,2 միլ. ռուբլու և ընդհանուր բալանը՝ 6,9-ից 87,6 միլիոն ռուբլու: Փոխադարձ վարկի ընկերութիւնների միջոցով մասնաւոր առևտրականները բանկերից և ընկերութիւններից 300 միլիոն ռուբլու վարկ են ստացել\*):

Հրապարակում ահազին դեր են խաղում և դրամական գործառնութեանց ուրիշ ձևերը և մասնաւոր դրամազլիի մասնակցութիւնը սակարանում, պետական փոխառութիւնների մէջ, արհեստաւոր—տնայնագործների կամ մանր առևտրականների տւած փոխառութիւններով և այլն: Մասնաւոր փոխառութեանց տոկոսները ահաւոր չափերի են հասնում. ամենացած տոկոսը հաշւուած է 60% և Մոսկուայում հասնում է մինչև 120%, իսկ գաւառում՝ 150%:

Մասնաւոր դրամազլիի ձեռքին են գտնուած այժմ և բաւական խոշոր քանակութեամբ պետական փոխառութիւններ կայ կարգի բաժնեկիցեր: Պետական փոխառութեանց ընդհանուր գումարից՝ 437 միլիոն ռուբլուց 148 ռուբլին — 33 տոկոսը պատկանում է մասնաւոր դրամատէրերին:

Այս բոլոր տեսիւները առանձին պերճախօսութեամբ ցոյց են տալիս, որ խորհրդային աշխարհում եւ տեղի է ունենում այն պրոցէսը, որից չէ կարող խուսափել ժամանակակից և ոչ մի ժողովուրդ: Հազարակ Ստալինների ու Բուխարինների կանչւաւորքի, մասնաւոր տնտեսական տարերքը արագօրէն նւաճում է խորհրդային գիւղն ու քաղաքը. դասակարգային ներհակութիւնները արւում ու խորանում են, և Ռուսաստանը տարերային թափով նորից ընկնում է դրամատիրական տնտեսութեան համաշխարհային շրայւտոյտի մէջ: Այս երևոյթի հետեւանքը անխուսափելի կերպով պիտի լինի այն, որ ընկերային, տնտեսական շեքտաւորումն ու արտադրական ուժերի զարգացումը պիտի դէն շարունակ կոմունիստական դաղափարների փշրանքներն եւ, որից յետոյ Ռուսաստանը նորից կը վերադառնայ այն ուղին, որով գնում են ամենքը:

Ամբողջ հարը նրանում է, թէ ի՞նչպէս պիտի կատարուի այդ վերադարձը — Մոսալինների կամքով թէ հակառակ նրանց կամքի. նո՛ր ճանապարհի վրա Մոսալինների ու Բուխարինների անելիք չկայ:

Նոր գիւնին հին տիների մէջ լին տեղաւորււ...

Ս. ՎՐԱՑԵԱՆ

\* Ս. Զագրսկի, «Պոսլ. Նով.», 1926 թ. օգ. 24



այն ներքին, սերտ կապի ու փոխադրեցութեան մասին, որ գոյութիւն ունեն սնման հետեւան դրացի, մերձաւոր երկիրներէ միջև:

\*\*

Հնդկաստանը Հանդիսացել է սկզբից ի վեր ինչպէս բրիտանական, այնպէս նաև ուսուական աշխարհակալութեան գլխաւոր աւարական: Այդ երկու պետութիւնները գրեթէ միաժամանակ իրենց աչքը յարել են սկսել Հարաւային Ասիայի այդ փարթամ, անասման հարստութիւններէ հուշակ ունեցող հեքիաթային երկրի վրա: Յար Ալիթէյ Միխայլովիչ առաջին միապետն էր, որ ուսուական ծաւալեան նպատակակէտ դարձրեց Աւզանիտանը: Իսկ այս վերջինը այն ժամանակները ինչնուրոյն երկիր էր, այլ կազմում էր անկախ Հնդկաստանի մի մասը միայն: Այս նշանակում է, ուրեմն, որ Ռումանովները հարստութիւնը իր գոյութեան գրեթէ սկզբից քաղաքական նպատակակէտ է դարձրած եղել հեռաւոր Հնդկաստանը: Մի նպատակակէտ, սակայն, որին — 300 տարիներ ընթացում — տակաւին չ'օտոնցած՝ խորտակեց ինքը, Ռումանովների հարստութիւնը: Մի ծրագիր նաև, որ սկզբից իսկ պատասխանեց անյալողութեան, իր ղէժ գտնելով աւփէր ճարպիկ ու մարզած բրիտանական կայսերապաշտութիւնը: Ռուս արքունիքի զինուորական — քաղաքական առաջին առաջնութիւնը — աւել է՝ 17-րդ դարի կէսերին — Հիւսիսային առաջնուով զեռ նոր էր ծրագրել Գաբուլ — բայց որտեղից նա հարկադրուած էր անմիջապէս վերադարձի ճամբան բռնել, երբ հարաւից բրիտանական ռաիվիրանները առաջնաւորով ցամաք իջան Ռումելի և Մարաշի: Հնդկաստանի պատմական քարտէսի վրա մի թուռցրիկ ակնարկ նետելով տեսնում ենք, որ 1660-ին անգլիացիները Հնդկաստանի հարկ մի քանի ծովեզրեայ կենտրոններում տարածել էին իրենց քաղաքական ազդեցութիւնը: Մինչ, երեք դարեր ընթացում ուսուական բազմաթիւ անգամներ փորձեր արին ղէպի Հնդկաստան առաջնաւոր, բայց բերեց չյաջողոցիցին Պամբը և Հինդուկուշի լեռնաշղթան անցնել, անգլիացիները կարողացան, ընդհակառակը, քայլ առ քայլ Հնդկաստանի ներքեր թափանցել: Թէէն արևելքիցիները յատկապէս Մոհակայի ծաւալապաշտութեան կուսիւն են բնորոշել՝ շուրջ դանդաղ է առաջ գնում, բայց շատ է կտրում — անցնում» ասացած չով, բայց վերջինս ոչ պակաս չափով Համապատասխանում է նաև ամէն մի ու, մասնաւոր, բրիտանական ծաւալապաշտութեան: Այսպէս, Հնդկաստանի պատմական քարտէսը առում է մեզ նաև, որ անգլիացիները ամբողջ 130 տարիներ ընթացում — 1660-ից մինչև 1790 — շատ զիչ էին թափանցել Հնդկաստանի ներքեր: Իրենց հին գրաւումների վրա նրանք աւելացրել էին փոքրիկ տարածութիւններ միայն՝ Կալկաթայի շրջակայքում և Գանդէսի գետաբերանում: Իսկ այնուհետև, ուրեմն, առաւելապէս 19-րդ դարի ընթացում, աստիճանաբար առաջնաւորով նրանք գրաւեցին ամբողջ Հնդկաստանը, մինչև Աւզանիտան — որ այս ամենակ անկախ երկիր էր արդէն — և Հինդուկուշ լեռնաշղթան: Պէտք է նաև տեսնել նաև այն պարագան, որ սկզբնապէս անգլիացի զինուորականները չէին, այլ անհատ վաճառականներ

և աւետարական ընկերութիւններ, որոնք ոտք դրին Հնդկական հողի վրա և իրենց տնտեսական ազդեցութեան տակ առին այն, հետզհետէ յայնացնելով նրա սահմանները: Ինչպէս առհասարակ աշխարհակալ ծաւալման բոլոր ղէպերում աւետարականները, ճամբայ հարթողները դերը կատարեցին: Նոյն այդ գործի սատարողները եղան, այլ գետնի վրա և այլ անւան տակ, կրօնական առաջնութիւնները: Երբ աւետարականները և միսիոնարները արդէն բաւականաչափ «ձլակել» էին Հնդկական գետնին և փաստորէն բրիտանական դրօշի տակ առել, չյապագեցին այնտեղ երևալ ու ամբանալ նաև անգլիացի զինուորականները և պաշտօնեաները: 1880-ական թւականներին, այսպիսով, ամբողջ Հնդկաստանը բրիտանական դրօշի տակ առնւած — վերջացած էր: Երկու դարերի զաղթային հետևողական քաղաքականութեան պտղումն էր այն:

Քնած էր նոյն այդ ժամանակամիջոցում նաև ուսու աշխարհակալութիւնը: Վերջինս առանձին աշխոյժ ստացաւ մանաւանդ Պետրոս Մեծի և նրա յաջորդների օրով: Այնուհետև «ղէպի հարաւ, ղէպի չստացող ծով» կարգախօսը արտասայտեց հուսիւնը Պետրոս Մեծի «կրակ»-ի, որ էր՝ ինչն, տարածել, ղէպի հարաւ, ղէպի Հնդկաստան և նեղուցները, ղէպի Միջերկրական ծով: Ռուս — տաճկական և ուսու — պարսկական դարաւոր պատերազմները կոչւած էին գերազնեցնելու այդ ծրագրերը: Կովկասի և Անդրկովկասի տիրապետութիւնը ևս մի օղակն էր այդ ընդարձակ ծրագրի: Ինչ վերաբերում է Ռուսաստանի հնդկական ծրագրին, երկու ճամբաներ էին առաջնորդում ղէպի հեքիաթական աշխարհը. մէկ՝ Անդրկովկասի և Պարսկաստանի վրայով, մէկ էլ՝ Անդրկովկասի և Պարսկաստանի վրայով: Երկու ճամբաներն էլ իր առաջ հարթել սկսեց ուսուական սէրնը: Եւ մինչ 1878 թւականին ակամայից կանգ առաւ ուսուական ծաւալումը Անդրկովկասում և Հայաստանում, այնուհետև հողային գրաւումները շարաւ այդ ճամբու վրա, այլ գոհացաւ — միշտ կամապ, ի հարկէ — աղբեցութեան շրջան միայն ապահովելով հիւսիսային Պարսկաստանում, անդին՝ անդրկասպեան ուղղութեամբ՝ ստալ խաղաց նա անընդհատ: Խիվան, Բուխարան, ամբողջ Թուրքեստանը վերջնապէս ուսուական փաստական տիրապետութեան տակ առնեցին անցեալ դարու 80-ական թւականներին միայն: Այս նշանակում է, ուրեմն, որ մինչ Ռուսաստանը հարկա կարողացել էր զիչ — շատ մօտեւալ իր վերջնական նպատակակէտի՝ Հնդկաստանի սահմաններին, նոյն այդ ժամանակամիջոցում այդ երկիրը արդէն իսկ ամբողջովին դարձել էր բրիտանական սեփականութիւն: Մովսէլ օտոնցրել էր Հնդկաստանը Մեծ — Բրիտանիայի կողմից, մինչ ցամաքային ճանապարհը հեռացրել էր Պետերբուրգից նոյն այդ նշանակէտը:

Համաշխարհային պատերազմից յետոյ, նոր թափով վերանորոգւած ենք գտնում ուսու — բրիտանական պայքարը Հնդկաստանի շուրջը, թէև այլ անւան տակ: Տրացիկն մի — երկու տարի առաջ Խորհրդային Ռուսաստանի արևելեան և մասնաւորաբար Հնդկական քաղաքականութեան ուղղը արտասանած իր մի ճառի մէջ արտասայտել էր այսպիսի մի պատկերաւոր մտքը, թէ՛ «Պամիրը Խորհրդային Միութեան տանիքն է»:

Պամիրը, յայտնի է, Ռուսաստանի միջին — ասիական ծայրագագաւանն է, այժմեան բաժանումով՝ Ուզբեկիստանի մի մասը, ինքնազար Տաջիկիստանը։ Եւ մի շատ բարձր սարահարթ է, իսկպէս որ լեռնային տանիք։ Հիւսիսային Հնդկաստանի Քաշմիր նահանգից և Ինդոսի վերահսկողից նրան բաժանողը ազանական մի նեղ, թէև դժարանցելի հողաշար է միայն։ Հիմարչեան լեռնաշղթայի հիւսիս — արևմտեան ծայրերը ալպտեղ պալիս կալում են արևմուտքից-արևելք երկարաձգող Հինդուկուշ լեռնաշղթային, իսկ վերջինս բաժանում է հնդկական երկրամասը ռուսականից։

Այսպիսով՝ Պամիրը, որպէս մի բարձրադիր տանիքից, ընդարձակ հորիզոններ են բացւում ոչ միայն դէպի հիւսիս, միջին — ասիական տափաստանները և Ամու — Դարիայի ու Սիր — Դարիայի փեղերը, այլ և դէպի հարաւ, դէպի Քաշմիր և Ինդոսի գետահովիտը։ Թորոքոյան զարգացած խորհրդապաշտօրէն (սիմրիէ կերպով) ՎՊամիրը մեր պետութեան տանիքն է՝ արտայայտութեամբ ուզում էր ասած լինել, թէ հնդկական հողը հասանելի է ոչ միայն համայնալար տեսողութեան, այլ և բոլշևիկեան գէնքին։ Այս վերջինը գործի չէ՞ դրում, ի հարկէ, զարգացականութեան և արտապաշտութեան սնունդով, ինչ որ անում էին ճերմակ ցարերը, այլ՝ «յեղափոխութեան և համայնալարութեան», զագրերի ինքնորոշման սնունդով, բառեր, որ շատ գործածական են բոլշևիկեան փարզանքի մէջ։ Եւ յետոյ՝ Միկնոյն Տրոցկին իր մի ուրիշ ճառի մէջ — արևմտեան աշխարհակալութեան շուրջը արտասանած դարձեալ — այն շատ տարածւած և ընդհանուր տեղիք դարձած միտքն էր արտայայտում, թէ իմպերիալիստ պետութիւնները մի երկիր ռազմօրէն գրաւելուց առաջ նախ այնտեղ են շրջում իրենց առևտրականներին ու միաժամարներին, և յետոյ միայն, հողը պատրաստելուց վերջ, նրանց հետքերով առաջ են ընթանում նաև թնդանօթները։ Բայց Տրոցկին մոռանում էր — աւելի շուտ, չէր ուզում — աւելցնել, որ նոյն այդ վարքագիծը հարգատօրէն իւրացրել է նաև խորհրդային աշխարհակալութիւնը։ Ինչպէս ամէն տեղ և ամէն բանում, այստեղ ևս անուններն են, բառերը միայն, որ փոխել են։ Փոխանակ սղիցը «բրիտաննէութեան» միսիօնարների ուղարկելու գրաւելիք երկրները, խորհրդային աշխարհակալները ուղարկում են համայնալար միսիօնարներն — բոլշևիկ սրբապաշտներն և գործակալներ, փոխանակ դեղին առևտրականների՝ «կարմիր» նկպմաններ և առևտրական մուսաշնորհ գործակալներ։ Երբ սրանց իրենց կողմից բնակականչափ պատրաստած են լինում հողը, նրանց արդէն յաջողում են կարմիր զինւորները և դիւանագէտները, պաշտօնեաների բազմութեամբ մէկտեղ։ Մասօ՞թ երևոյթի։

Ամբողջ խօսքը այն մասին է, ուրեմն, թէ ծաւալապաշտ երկիրները — կարծիք թէ դեղին, տարբերութիւն չունի — առարկայական և ենթակայական տւեալ պայմաններում ո՞ր չափով ի վիճակի են իրագործելու իրենց առաջադրած նպատակը։ Մի նպատակ, որ հաւասարապէս փայտալայն առարկայ է բոլոր աշխարհակալութիւնների համար։ Եւ խոստովարին պէտք է, որ բոլշևիկները իրենց տիրապետութեան այս մի քանի տարիների ընթացքում թիչ յաջողութիւն

ներ չեն արձանագրել այդ մարդի մէջ, — դռնէ ինչ Արևելքին, Ասիային է վերաբերում։ Այսօր նրանց գրեթէ ամբողջացրել են Վիճ ու Միացեալ Թուսաստանը, վերադարձելով և կենտրոնին կցելով ամբողջ Կովկասը և Անդրկովկասը, Միջին Ասիան և Հեռավոր Արևելքը՝ մինչև Թաղազական Ովկիանոս։ Զուր տեղը չէ, որ ոռւս աղբայնական — աշխուժեանները, զարական կայսերապաշտութեան կենդանի ներկայացուցիչները, անվերապահօրէն ջատագովում են բոլշևիկների ասիական զարգացականութիւնը, վերջինս համարում իրենց սեփականը։

Բոլշևիկները մի բանով էլ կարող են պարծնել։ Նրանք ոչ միայն իրենց փաստական տիրապետութիւնն են տարածել չինական Մոնղոլիայի վրա, այլ և վերջ են աւել հիվա և Բալթիքա ափական — թէկուց անասնօրէն ինքնուրոյն, վատալական — պետութիւնների գոյութեան, վերացրել են անգամ նրանց անունները։ Այդ երկիրները, Թուրքեստանն էլ մէջը լինելով, վարչական նոր բաժանումների են ենթարկւել և Թուրքեստան, Ուզբեկիստան (Տաջիկիստան ինքնալար երկրամասով մէկտեղ) անուններով ու որպէս ինքուրոյն միտադներ կցւել են Խորհրդային Միութեան։ Այս անկող բոլշևիկները հետապնդել են կրկնակի նպատակներ՝ նախ ներքին և ապա նաև արտաքին զարգացականութեան պահանջները մեկնելով։ Այս վերջինը հարկադրում է Մոսկուային՝ իր կենտրոնական ասիական երկրամասերը աւելի սերտօրէն կապել իրեն և այդպիսով դիրքանել ճանապարհը դէպի Աւստրալիան ու Հնդկաստան։

Դեռ նորեքս էր, 1926-ի ամառը, բրիտանական դոմինիօնների խորհրդաժողովից թիչ առաջ, երբ Լոնդոնում դուժմարած մէ յատուկ դադութիւնների զառաքանակ — ռազմական պաշտպանութեան՝ Նւիրսօ՞ խորհրդակցութեան մէջ կարողցի, որ ոռու համայնալարները այնուամենայնիւ, հակառակ ամէն կարգի դժարութիւններին, որոչ աշխատանք կատարում են Հնդկաստանում։ Յիշած խորհրդակցութեանը, որին մասնակցել են բրիտանական բոլոր դադութիւնների ոստիկանական — վարչական ամենապատասխանատու ներկայացուցիչները, դրանց թոււմ նաև Հնդկաստանի պատուիրակները, Բենալիայի նահանգապետ լորդ Լիտտոն և Կալիպոնիայի ոստիկանապետ Չարլզ Թրանզեր հաստատել են այդ փաստը։ Յայտնի է դարձան, որ բոլշևիկները Հնդկաստանում ջանքեր են թափում համայնալար բռնիքներ կազմելու, զարոզութիւն են կատարում Հնդիկ զանգաձանների մէջ, որ նրանք մինչև իսկ մանեղական — Հնդիկ ներքին կրիւներին ու պայքարներին են միջնորդում՝ խոտովութիւններ յառաջանելու համար, անգամ զարգական դեմոնի վրա սպանութիւններ են կատարում ևս դադատօրէն գէնք ներմուծում այնտեղ։ Ինչ խօսք, այս ամէնը զգալիօրէն շափազանցած է կրկնակի նպատակներով՝ մէկ՝ բոլշևիկներին որպէս խոտովարարներ աշխարհի աշուտ վարկարեկելու, մէկ էլ Հնդկաստանի պաշտպանութեան գորացնելու համար։ Բայց և այնպէս, ըստ էութեան փաստը մնում է իր ուժի մէջ։ Բոլշևիկները իրենք էլ չեն ծածկում Հնդկաստանում կատարելից «յեղափոխական աշխատանքի» անհրաժեշտութիւնը, բոլշևիկ մասնույն ևս չարունակ հրահրում է հնդկական խնդրերը։

Ճշմարտութեան համապատասխանում է Լոնդոնի խորհրդակցութեան մէջ պարզւած այն ծրագիրն ևս, համաձայն որի բոլշևիկները հետապնդում են Հնդկական տանի խորհրդային — դաշնակցային Միութեանն կէտ նպատակը: Այս ճիշտ է, ի հարկէ, ինչպէս որ ճիշտ է այն ևս, որ բոլշևիկներն այդ ամէնը կատարում են ոչ թէ Հնդկիկները սիրելու, բրիտանական և ամէն կարգի բնութիւնից ազատելու համար ժողովուրդներին — մի թող նային իրենց Միութեան ներսը — այլ՝ դիրքերը ապահովելու համար ստիական բեմի վրա, ուր նրանց դոմեմարտի են դուրս եկել բրիտանական աշխարհակալութեան հետ, Բոլորովին անհաւանական չէ, միև կողմից, որ վեղըր միև օրը այսօրևայն օտարները մի նոր, սակի կամ պակաս երկարատև, զինադադար կնքեն իրար հետ, ազդեցութեանց սահմաններ էլ գծեն ասիական ժողովուրդների հաշիւին: Այդպէս է եղել, այդպէս էլ կը լինի: Մի պարագայ, որ մուսուլմանը չեն օտար բնութեան ենթակայ ժողովուրդները:

Ռուսականից պակաս յարձակողական չէ, ի հարկէ, քրիտանական աշխարհակալութիւնը: Եթէ Հնդկաստանը իրենց զարդուրթեան պատրաստ գետին դարձնելու նպատակով բոլշևիկները աւելի ու աւելի եկ ժամանակ նրա սահմաններին, Պամիրի տանիքից էլ շարունակ հեռագրիտակներով նայում դէպի Ինդոսի հովիտը, դրա փոխարէն անդլիական գործակալները անում են իրենց բոլոր կարելին՝ խախտելու համար ռուսների դիրքերը Ասիայի բոլոր ճակատներում, իսկ ինչ վերաբերում է յատկապէս Հնդկաստանի պաշտպանութեան, նոյն այդ նպատակն են նրանք հետապնդում Պարսկաստանում, Ալդանիտասանում և ուսական թուրքաստանում: Շատ էլ թափանցել պէտք չէ քաղաքագիտութեան խորքերը ըմբռնելու համար, որ օրինակ, թուրքաստանում շարունակ կրկնուող ապստամբութիւնները և խռովութիւնները մէջ բրիտանական գործակալները իրենց դերը ունեն: Բոլորովին հաւանական է այն ենթադրութիւնը, համաձայն որի Էնդիբի փաշայի դիմադարձութիւնը հանդէպ Մոսկուայի՝ վերջին հաշուով անգլիական թելադրութեան արդիւնք էր: Արկածախնդիր փաշան, որ դեռ 1919-ին և 1920-ին Մոսկուայի սիրելին էր ու դաշնակիցը, նրա գործակալը թուրքաստանում, և որի դիմում, տասնհարս տեղից ծակծկած, թուրքաստանում ստիպաստաններում գտան բոլշևիկները դէմ մուտղ ապստամբութեան զլուխն անցած միջոցին, վերջին հաշուով անգլիական — կամ՝ նաև անգլիական — գործ էր կատարում: Աւելի կամ պակաս չափով — այդ կրկնակի խողի դերակատարութիւնը — վերաբերում է նաև Ջեմալ փաշայի դերին Ալդանիտասանում: Նրա վախճանը և ծանօթ — մի խոշոր չափով գեռ անձանօթ — պայմաններում՝ բոլշևիկների Հնդկական ծրագրիների և անգլիական հակազդեցութեան կապակցութեան մէջ որոնելու է: Չժանրանաք այդ կէտի վրա, որ ինքնին մի սահմանին հարց է:

Այսչափը ասենք, որ Հնդկաստանի խնդրում, վերջին հաշուով, Ռուսաստանը եղել է և է՝ յարձակողի, ստալինապաշտի դերում՝ իսկ Անգլիան՝ «ինքնապաշտպանութեան», statu quo-ն հետապնդողի դերում: Եւ այդ՝ հարկաւ ո՛չ նրա համար, որ Ջեմալըն պակաս

ուսգմտենէլ դիւանադէտ է, քան Ջիշերին, այլ միայն և միայն նրա համար, որ բրիտանական ծաւալապաշտութեան այսօրևայն ծրագրի մէջ չեն մտնում Հնդկաստանից հիւսիս տարածւող ռուսական հողամասերը: Որքան և թուրքաստան իր առատ ու ընտիր բաժնակի համար շատ է սիրելի Մանչեստրի գործարանատէրերին և ռուսական միջպատան անւանել կարող է, բայց 50 վերջնական էր սահման ունի՝ «զէնքը, լինի անգամ մեր Գերթողահօր զովածին նման բրիտան ճաշաց» ձեռքում: Քաղութիւնն էլ միայն գէնջով չի լինում, այլ և դիւանադիտութեամբ: Իսկ վերջինիս դասական հայրենիք Անգլիան սովորեցրել է այդ արհեստը բանեցնող իր զաւակներին, որ շատ էլ չհեռանան ծովից: Վերջինս կողմից բնակչութեան տարերքն է, պաշտպանն ու ապահէնը, նրա ռազմական և քաղաքական ծաւալման յենարանը: Ուր որ էլ թափանցելու լինի բրիտանացի գինորը, նա նախապէս ապահոված պիտի լինի իր արագ ու անարգել նահանջը դէպի ծով, դէպի իր յենարանը: Կարծեմ Անգլիովկասը և, մանաւանդ, Բազուն պարպելու (1920) և Բաթունում կենտրոնանալու առթիւ է սակ Լոյտ Ջորջը այն խօսքը թէ՛ բրիտանացի գինորը բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում բնագործին իսկ պիտի խուսափի բոլոր այն տեղերից, որոնք ցամաքի ներսերն են դառնում, ծովից հեռու: Թէ ծովից նա միայն այնչափ հեռու պիտի մնայ, որչափ որ հասողութիւն ունեն բրիտանական ռազմանաւերի թնդանօթները:

\*\*\*

Պատմականորէն ու աշխարհակալական հեռաւոր նպատակները տեսակէտից Հնդկաստանը անպայման հանդիսանում է ռուս — անգլիական պայքարի ամենազիլաւոր մրցադաշտերից մէկը: Այդպէս է, որ Ռուսաստանը տենչում է մահացու հարւած հասցնել Մեծ Բրիտանիայի զաղութային տիրապետութեանը և իր ձեռքը առնել քաղաքական գերակայութիւնը (հեգեմոնիան) ասիական մայր ցամաքի վրա: Այդ ճիշտ է, և արկաւ: Բայց ճիշտ է նաև այն, որ հէնց Հնդկաստանում է առաւելապէս, որ ամենից աւելի անխոցելի է մնացած և է՝ այսօր էլ՝ բրիտանական աշխարհակալութիւնը: Վերջինս շատ լաւ է գիտակցում, որ Հնդկաստանի տիրապետութիւնը իր համար կենսիցի և մահուան խնդիր է: Ի մի ծանր հարւած հնդկական թերազգում, ու դիւրաւ պիտի խաթելի Անգլիայի զաղութային ամբողջական չէնքը: Դրա համար է, որ Լոնդոնը ոչինչ, ո՛չ նիւթական և ո՛չ էլ ռազմական ու դիւանադիտական միջոցներ չի խնայում՝ իր թագի աղանաղը ապահով և ամուր պահելու համար: Աւելին դեռ: Անգլիական դիւանադիտութեան շանքերը ուղղւած են եղել և են շարունակ՝ ոչ միայն Ռուսաստանը, այլ և որևէ ուրիշ գործող, քիչ — շատ վտանգաւոր մրցակից պետութիւն հեռու պահելու անգամ Հնդկաստանի դրացի երկիրները սահմաններից: Անգլիական արտաքին քաղաքականութեան դարուս ամենախոշոր դէմքերից մէկին՝ լորդ Քրըքսնին է պատկանում այն խօսքը — արտասանւած տակաւին պատերազմից ստալ — թէ Հնդկաստանի սահմանը Եփրատ գետն է կազմում: Ահա, եթէ կուզէք, համաշխարհային պատե-

րագրի հիմնապատճառներից մէկը: Իսկ այժմ, երբ Եփրատի ափերից և Միջագետքի դաշտերից արդէն իսկ հեռացած է ոչ միայն զերման ազդեցութիւնը, այլ և օսմանեան տիրապետութիւնը, Հնդկաստանի սահմանը է՛լ աւելի արեւմուտք է տարւած և Միջերկրականի եզերքը հասցրած: Այնպէս որ այսօր աւելի՛ քան երբեք ապահով է Հնդկաստանի տիրապետութիւնը: Թուս — անգլիական մրցութեան սուպարէզը ներկայիս տարածւում է Հնդկաստանի շուրջի երկիրներում: Արեւելքում չինական կրկէսն է, հիւսիսում՝ Աւղանիստանը, իսկ արեւմուտքում՝ Պարսկաստանը: Հարւում Հնդկական ուղիխնոնն է տարածւում — այսօր մի ներքին լիճ դարձած բրիտանական գաղութներէ մէջ — ուր չէ՛ թէ Ռուսաստանի, այլ որեւէ ծովային պետութեան կողմից իսկ լուրջ երկիր չունի Անգլիան: Այս է պատճառը, որ ցարական աշխարհակալութեան խորհրդային ժառանգորդը իր պատմական ոտնիին սուպարէզ է կարդում Զինատանի ու Մանջուրիայի դաշտերում, Աւղանիստանի և Պարսկաստանի սարահարթերում, ինչպէս նաև Մերձուոր Արեւելքի երկիրներում: Շարունակե՛ք հետևել նրանց գոռ մարտին՝ քաղաքական այդ ուղամարեմերի վրա:

ԱՐՏ. ԱՅԵՂԵԱՆ

## ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԸ

Նոր էր դաշնակից պետութիւններին յաղորւել զիչ թէ շատ բաւարար ձևով լուծել հատուցումներ ինդիերը, երբ գլուխ բարձրաբերց նոյնաման մի ուրիշ խնդիր, որը, կարծես թէ ժողացու թուան էր տրւած: Պօսքս միջ-դաշնակցային պատերազմական պարտքերի մասին է, որոնք սաստիկ մտահոգում են Հին ազգաբնի ժողովուրդներին: Մասնաւորապէս սրւում են փոխյարաբերութիւնը Միացեալ — Նիւսանդնիերի և Եւրոպական պետութիւնների միջև, որը հողբանական կողմով շատ է յիշեցնում հատուցումների պատմութիւնը՝ Դաշնակիցների ու Գերմանիայի միջև: Եւ դժտար չէ ենթադրել, որ պատերազմական պարտքերի պատմութիւնն էլ վերջանալու է նոյն ձևով, ինչպէս վերջացաւ հատուցումների խնդիրը: Այդ պատճառով տեղին է մեր յիշողութեան մէջ, ընդհանուր գծերով, թարմացնել հատուցումների պատմութիւնը:

Չափազանցութիւն չի լինի սակէ, որ Համաշխարհային պատերազմից անմիջապէս յետոյ միջազգային ամենախոշոր ու կենտրոն շարքը պարձաւ հատուցումների հարցը, որը Վէրսալի դաշնագրից մինչև Դոուսի ծրագիրը, այսինքն 1919 թ. մինչև 1924 թ., շարունակ լարւած պահեց քաղաքական աշխարհը: Հարկաւոր էին մեծ ճիգեր, տարիներ լարւած ու ջղային կախառանգը և, վերջապէս, էրիտի ու Մակդոնալդի կառավարութիւնների անկեղծ վերաբերմունքը դէպի համբարշխութեան ու հաշտութեան գործը, որպէսզի հնարաւոր գառնար խաղաղ ճանապարհով լուծել հատուցումների

կնճիւրը: Գանի՛ — քանի՛ անգամ կողմերը — պարտուող ու յաղթող — քով քովի եկան խնդիրը հաշտութեամբ լուծելու նպատակով, բայց համաձայնութեան եղբ չը գտնելով՝ ջղայնացած հեռացան իրարից՝ վարակելով քաղաքական աշխարհը յուսահատ ու յուս տրամադրութիւններով — նոր պատերազմի հեռանկարով: Եւ ո՞վ գիտէ՛ ինչով վերջանար այդ պատմութիւնը, եթէ մի կողմից Փրանսական ժողովուրդը 1924 թ. ընտրութիւններով քաղաքական բախտի դեկը չառնէր «Ազգային բուկի» ձեռքից ու շյանձնէր «Ջախ Միութեան», իսկ միւս կողմից Անգլիայում կառավարութեան գլուխ չանցնէր Մակդոնալդը: Պատեկարէի խտապահանջն ու անհաշտ դիրքից, Ռուրի գրաւումից ու տեղծւած ծանր սաստիճանի լարւած դրութիւնից յետոյ Մակդոնալդի ու էրիտի կատարած դերը եղաւ ուղղակի փրկարար:

Պատերազմի հետեւանքները անսպասելիորէն ծանր եղան ոչ միայն պարտածներին, այլ և յաղթողներին համար: Պատերազմից յետոյ Եւրոպայում սկսեց մի անանխնդրեց ճգնաժամ — Արդիւնաբերութեան անկում, հում և մշակւած նրութիւնի փոխանակութեան խանդարում, հաղորդակցութեան միջոցների խճճում ու շիտթ, դրամի շտեմնած տատանումներ և անկայունութիւն, անհաշի պարտքեր և, իրը հետեւանք այդ ամէնի, հողեկան ջղային ու անհանդիստ վիճակ, որով մշտական վտանգի տակ էր առնւում խաղաղ ու ապահով կեանքը: Այս պատկերը, ըստ հուժեան, մինչև այսօր էլ չի փոխւած և իրաւունք է տալիս ոմանց պնդելու, որ Եւրոպան ծերացել է ու սպառել իր կենսական ուժերը, որ նա ապրում է իր կեանքի մայրամուտը և թելադրողի ու իշխողի դերը հետզհետէ զիջում է Նոր աշխարհին:

Այսպիսի հանգամանքներում մի նոր պատերազմ Եւրոպական ժողովուրդները համար կը լինէր անբարենկի աղէտ, մի հանդամանք, որ գիտակցում են Եւրոպական խոշոր պետութիւնները ժողովրդական գանգաւածները և իրենց բռնած դիրքով ու վերաբերմունքով թելադրում են իրենց քաղաքական կեանքի ղեկավարներին խուսափել այն անհնից, որ իր մէջ կրնում է պատերազմին ծնունդ տալ սաղմեր: Հատուցումների պատմութիւնը ըստ ամենայնի հաստատում է այս փաստը: Բաւական է վերջիջել թէ ինչ խորիտ դիրք էին բռնել դաշնակիցները Վէրսալի դաշնագրից անմիջապէս յետոյ Գերմանիայի հանդէպ՝ հատուցումների հարցում և ինչպէս սաստիճանաբար մեղմացան ու կակղեցին՝ բռնելով զիջումների ճամբան, մինչև որ վերջացաւ Դոուսի ծրագրով, որպէսզի պարզ լինի մեր ասածը: Վէրսալի դաշնագիրը կազմելիս Փրանսիական կառավարութեան կամքն ու ցանկութիւնն էր՝ ստանալ Գերմանիայից պատերազմի ընթացքում ու նրա հետեւանքով իր կրած բոլոր վնասները: Այդ էր Փրանսիայի ամբողջ ժողովրդի արամադրութիւնը, որը թելադրեց իր տիրական կամքը և ծունկի բերեց պարտւած Գերմանիային:

Ստանալի բոլոր վնասների փոխարժէքը...

Կեանքը ցոյց տուց, որ այդ դիրքին է սակէ, բայց անկարելի է իրադործել: Պատերազմի հասցրած վնասները, դրամով արտայայտած, առասպելական թւերի են հասնում և սովորական մարդը միտքը անկարող է ընդգրկել ու մարտնչել այդ սակեղի թւերը: Ախորժակները սրւած էին անբեւեակային կերպով, և Գերմանիան, որ շատ լաւ տեղեակ էր այդ ախորժակներին, իր բեռը



Թեթևացնելու յուսով, առաջարկում էր վճարել մի իրօք որ հսկայական դուժար — երկու հարիւր միլիարդ մարկ ոսկով: Բայց այդ դուժարը քիչ էր համարուում դաշնակիցներէ համար:

Անցաւ, սակայն, որոշ ժամանակ, ուսումնասիրւեցին պատերազմի հետեանցով ստեղծւած պայմանները. փոխեցին պետութիւններէ փոխյարաբերութիւններն ու տրամադրութիւնները, և այդ բոլորը անդրադարձաւ և հաստուցումներէ ինչորի վրա: Ժամանակին հետզհետէ պարզեց, որ ոչ միայն ինքը՝ քառութեան նոխար Գերմանիա ժողովուրդն է համոզուած, որ անկարող է վճարել իր իսկ ներկայացուցիչներէ առաջարկած դուժարը, այլ հէնց հակառակորդներէջ ոմանք, ինչպէս Անգլիան, եկան այն եղբայրացութեան, որ այդ դուժարն անկարելի է ստանալ: Եւ սկսուեց է սակարկութիւն, որի ընթացքին երկար, յամաօրէն դիմադրում է Պուանկարէն: Բանը հասաւ այն աստիճանին, որ տեղի ունեցաւ դաշնակիցներէ յարաբերութեան զբարեկամական խզում», դրասէջ Ռուսը և նոր պահարգմի մղձաւանջը կախւեց ամենքէ դէմին:

Բայց ոչ ոք կողմնակից չէր պատերազմի տապալուեց Պուանկարէն և վերացաւ համաձայնութեան դիվաւար արգելքը: Կազմուեց փորձագէտներէ մի յանձնախումբ, Գուոսի նախադահուութեամբ, որուելու համար Գերմանիայի վճարունակութիւնը: Փորձագէտներէ ուսումնասիրութիւնը յանգեց այն եզրակացութեան, որ գերման ժողովուրդը ժամանակի ընթացքում կարող է վճարել այն դուժարը, որը որոշել է Լոնդոնի վեհաժողովը (մայիս, 1921 թ.) — 132 միլիարդ մարկ՝ սկսելով մի միլիարդից առաջին տարում և աստիճանաբար բարձրացնելով վճարման չափը մինչև երկու ու կէս միլիարդ՝ սկսած հինգերորդ տարանից: Եւ այդ այն պայմանով, որ ամբողջ Գերմանիայի տնտեսութիւնն ու Փինանսական գործողութիւնները անցնեն երկրի իշխանութեան ձեռքը և ազատ լինեն օտար միջամտութիւնից:

Հաստուցումներէ զուժարի վճարման փորձաշտներէ ներկայացրած ծրագիրը ընդունեց և Գերմանիան ահա երկու տարի է բարեխղճօրէն կատարում է յանձն առած պարտականութիւնը դաշնակիցներէ հանդէպ:

Ի հարկէ, 132 միլիարդն էլ մեծ՝ զուժար է և հելտ չէ անգամ գերման ժողովրդի համար տարեկան մէկ, իսկ ապագայում երկու ու կէս միլիարդ վճարել: Բայց եթէ համեմատենք այն, ինչ որ նա վճարում է այսօր սկզբում պահանջուածից, ահա, ի՞նչ տեսնենք, որ տարբերութիւնը շատ մեծ է: Բաւական է յիշել, որ 1919 թ. ոմանց հաշուով Գերմանիայից պիտի ստացւեր տարեկան 28 — 29 միլիարդ ոսկի մարկ, իսկ դրա փոխարէն նա այժմ վճարում է մէկ միլիարդ:

Հաստուցումներէ խնդրի այդ ձևով լուծելը լոկ քմահաճոյքի խնդիր չէր: Նա թելադրում էր ո՛չ միայն պարտւած կողմի նրկթական անկարողութեամբ, այլ և յաղթողների տնտեսական շահերի դառաւորութեամբ: Անգլիան պարտւում էր (և շարունակում է ապրել) ներքին ծանր պիճակ — արդիւնաբերութեան և առևտրի ճգնաժամ, գործազրկութիւն, գործադուլ: Հասարակութեան ձախ հոսանքները այդ ամէնը վերագրում էին այն հիւանդուտ կացութեան, որ ստեղծւել էր մար

ցամաքում և պահանջում էին կառավարութիւնից վերականգնել յարաբերութիւնները ոչ միայն Գերմանիայի, այլ և Ռուսաստանի հետ: Այդ տրամադրութիւններէ հետեանցով Անգլիայի քաղաքական աղօղակութեան ջարդ ձգում է կշիռը՝ յօդուտ Գերմանիայի: Անգամ Մ. Նահանգները, թէև հեռուից հեռու և ո՛չ այնպէս վճռական ձևով, ինչպէս Անգլիան, պահանջում են որ Յրանիան դիճի:

Պուանկարէի Յրանիան տրամադիր էր ինչի՛րը լուծելու զէնքով. սակայն Մակդոնալդի Անգլիան, Միացեալ Նահանգները և էրիոյի Յրանսան՝ իրենց յետև ունենալով քաղաքակիրթ մարդկութեան համակրանքը և սեփական երկրների տնտեսական — ընկերային շահերի թելադրութիւնը՝ զերազատեցին համերաշխութեան ճամբան: Եւ նրանք շտխաւեցին:

\*\*

Գալով պատերազմական պարտքերին՝ պէտք է ասել, որ սա ևս նոր հարց չէ. — երկու տարուց աւելի է, որ ծեծուած է այս կամ այն ձևով: Ամերիկան սկզբից և եթ րունեց շատ որոշ դիրք. պարտքերը պէտք է վճարւեն: Պարտապան դաշնակիցները խնդրի ծաղման սկզբնական շրջանում գործում էին միացեալ ճակատով: Նրանք ձգտում էին ընդհանուր համաձայնութեան դալ իրար մէջ և պարտքերի հանդէպ ունենալ միատեսակ վերաբերմունք: Այդ հանգամանքը բնաւ դիրք չէր գալիս Մ. Նահանգների կառավարութեան, որը հետամուտ լինելով իր առնելիքներէ դանձման՝ հրաժարուած էր բանակցութիւններ վարել միացեալ ուժերի հետ: Ամերիկան ձգտում էր պարտապաններից իւրաքանչիւրի հետ կշիռքել առանձին համաձայնութիւն. — գատ—գատ որոշել պարտքերի չափը և վճարումը՝ անկախ միւս դաշնակիցների տրամադրութիւններից ու կամքից: Եւրոպական պետութիւններն, ընդհակառակը, փորձում էին չինթարկել վաշինգտոնի կառավարութեան կամքին ու խզել իրենց միաբանութիւնը: Եւրոպան տրամաբանում էր, թէ՛ քանի որ պատերազմը միասին է տարւած, պատերազմի պարտքերի հարցն էլ միասին պիտի կարգադրուի: Ամերիկան պահանջում էր իր փոխ տւած ամբողջ դրամը և փոխադարձ երաշխաւորութիւն, կլմատողւ կամ հաշիւյարդար չէր ուզում ընդունել: Ջիջոյն, ի հարկէ, եղաւ Եւրոպան: Առաջին անջատ քայլն արաւ Անգլիան, որը շտապեց առանձին համաձայնութիւն կնքել Մ. Նահանգներէ հետ՝ մտածելով այդպիսով նրպատուոր տրամադրութիւն ստեղծել Ամերիկայում՝ յօդուտ պահանջների կրճատման և ապա յուսալով նոյն Ամերիկայի օգնութեամբ հասցնել իր դրամի արժէքը նախապատերազմեան բարձրութեան:

Անգլիայի օրինակից հետեացին և միւս դաշնակից պետութիւնները և իւրա ետեից սկսեցին կնքել առանձին առանձին համաձայնութիւններ Մ. Նահանգների հետ պարտքերի վճարման մասին: Ծիշտ է, այդ համաձայնութիւններից շատերը համապատասխան կառավարութիւնների կողմից դեռ վաւերացւած չեն, բայց Ամերիկան ըստ երկուսիցն հասաւ իր նպատակին: Ասում ենք ըստ երկուսիցն, որովհետև րանից դուրս է գալիս, որ պարտքերի հարցի թղթէ կարգադրութիւնը շատ աւելի դիրքին է, քան այդ պարտքերի վճարումը: Դաշնակից-

ների պարտքերը հասնում են միլիարդներին\*) և մեծ ուժանդատը համառոտաբար են պարտապանների տնտեսութեան համար, Վերջինները խորապէս դիտակցում են այդ և ելք են որոնում ստեղծւած կացութիւնից: Ուշադր էլ չի պայտապանների միջեանց հետ վերստին համաձայնութեան գալն է նկատուում՝ պարտքերի պայմանները մի յայտարարի բերելու համար:

Անգլիայի և Միացեալ Նահանգների միջև կնքւած համաձայնութիւնը թէև երկու տարւայ պատմութիւն ունի, բայց պարտքերի վճարման հարցը մի քայլ իսկ

\*) Պաշտակիցների պարտքերի մասին մտաւոր գաղափար կազմելու համար առայք բերեմք հետևեալ քննարկը: առ 1 յունիս 1925 թ. Անգլիայի առևիճակները կազմում էին հետևեալ գումարները: Ֆրանսիայից 638 միլիոն ֆունտ ստերլինգ, Իտալիայից 576 միլիոն, Սերբիայից 29 միլ., Ռուսաստանից 26 միլ., Փարթաւալիայից 22 միլ., Յունաստանից 21 միլ. և Ռուսաստանից 750 միլ. — ընդամենը՝ 2 միլիարդ 62 միլիոն ֆունտ ստերլինգ:

Եւրոպական պետութիւնների պարտքը Ամերիկայի Միացեալ Նահանգներին — Բելգիա 347,691,506 դոլար, Ֆրանսիա 2,950,762,938 դոլ., Անգլիա 4,166,318,358 դոլ., Իտալիա 1,648,034,050 դոլ. Ռուսաստան 187,729,750 դոլ., Չեխոսլովակիա 61,256,206 դոլ., Սերբիա 26,175,139 դոլ., Ռումանիա 28,205,819 դոլ., Յունաստան 15,000,000 դոլ. և այլն ընդամենը 9,434,774,829 դոլար:

Ֆրանսիայի առևիճակները զամազան երկրներից առ 30 յունիսի 1924 թիւ: ցարական Ռուսաստանից 6,023,300,000 սոլի ֆրանկ, Եւրոպական 490միլ. ֆր., Բելգիայից 3,067,295,000ֆր. Սերբիայից 1միլիոն 738,566,000 ֆրանկ, Ռումանիայից 1,132,000,000 ֆր., Յունաստանից 537,514,000 ֆրանկ, Լեհաստանից 895,400,000 ֆր., Չեխոսլովակիայից 542,200,000ֆր., Իտալիայից 350,273,000 ֆր., և այլն — ընդամենը 15,133,074,000 ֆր.:

Այս մեծ մասամբ զուտ պատերազմական պարտքերից գատ, կան և ուրիշ առևիճակներ: Այսպէս, յիշեմք 1919 թ. յետոյ կատարւած պարտքերը, գլխաւորապէս ներքերով և մքթերներով: Այսպիսի առևիճակներ ունի Անգլիա առ 31 մարտի 1924 թ. Աւստրիայից 10,794,051 ֆունտ ստերլինգ, Լեհաստանից 4 միլիոն 394,251 ֆ. ստ., Ռումանիայից 2,105,823 ֆ, ստ., Սերբիայից 2,251,636 ֆ. ստ. և այլն. ի միջի այլոց և... Հայաստանից 104,441 ֆ. ստ.: Նման առևիճակներ Միացեալ Նահանգներն ունեն Լեհաստանից 24,312,514 դոլար ալիւրի և 51,671,749 դոլ. նպաստի մքթերների և 79,946,692 դոլ. զինուորական պահեստների ներքերի համար, Ֆրանսիայից 407,341,145 դոլ. զինուորական պահեստների ներքերի համար: Սերբիայից 24,978,020 դոլ., Չեխոսլովակիայից 20,604,302 դոլ., Էստոնիայից 12,213,377 դոլ. և այլն. և... Հայաստանից 8,028,412 դոլար և 15 սեւտ Ամերիկեան Նպաստամատուց վարչութեան և 3,931,505 դոլար ու 34 սեւտ ալիւրի վարչութեան հաշիւն...:

Իսկպառն որ ահարկու, ցնորական քեր...

Ա. Ա.

առաջ չէ դնացել. անգլիական հարստական կարծիքը և, անկասկած, կառավարութիւնը դուր չեն այդ համաձայնութիւնից, որը բացարձակ զինուորատու են դժգոհութեան քաջացումով: Այդ դժգոհութեան ձայնը առանձին չեղաւ և ստանում Ֆրանսիա և Անգլիական համաձայնութիւնից յետոյ: — Լոնդոնում Գայտի կնքւած համաձայնութիւնը Ֆրանսական ինտելլիգենցիայի համար համեմատաբար աւելի ձեռնտու է նկատուում, քան դրանից առաջ Բերանտէի կնքածը Վաշինգտոնում: Միացեալ Նահանգների Ֆինանսական քաղաքականութիւնը սատարիկ ջլպանացնում է իր պարտապաններին: Անգլիական մամուլը Վաշինգտոնի ցուցադրած ախորժակը համարում է ճշելլիպակի: Եւ դժգոհութեան լեզուով են խօսում ոչ միայն ոչ-պաշտօնական մարդիկ, որոնց պատասխանատուութիւնը նման պարագաներում օրէնքը հաշի չի առնում, այլ և կառավարական շրջանների մտ կանդնած մարդիկ, անգամ կառավարութեան ներկայացուցիչները:

Յիշեմք արդէն, որ Ամերիկայի դիրքը պարտքերի նկատմամբ շատ որոշ է: Եւ որպէս զի այդ որոշումը անառարկելի լինի, նա ձգտում է պատերազմական պարտքերին տալ սովորական պարտքերի բնաւորութեան Այսպէս, Ամերիկայի Ֆինանսների նախարարութեան թերթը արտասույտում է այն մտքով, որ Անգլիային աւան պարտքի մեծ մասը ծախուել է պատերազմի հետ կապ չունեցող հանգամանքների վրա: Այդ անխարկին, որ դուռաբացում է Մէլբուրն արամտադրութիւնը, Չրչիլը պատասխանում է, թէ՛ Միացեալ Նահանգներից պարտք առնած ամբողջ գումարը ծախուել է հէնց Ամերիկայում ռազմական կարիքների համար, և Ամերիկան մթերքների վրա դրել է իր ուղած գնէրը: Չրչիլի այդ կարծիքը, այսինքն որ պարտքերը արւած են պատերազմական կարիքների համար, բաժանում են գաշնակից պարտաւորութեան բերկրները: Սրանք ևս պնդում են, որ այդ պարտքերը սովորական պարտքեր չեն: Երանք չեն ծառայել որևէ ժողովրդի այս կամ այն տնտեսական կամ մասնաւոր քաղաքական նպատակի ու բարօրութեան համար, այլ գործարարել են մի ընդհանուր մեծ նպատակի՝ թէ՛ տեղի և թէ՛ ստացողի համար: Այդ նպատակի յաղթանակի համար ոչ հաւասարապէս, անպայման մեծապէս շահագոյուած են եղել կողմերը՝ պարտք անողները ու պարտք տուողը: Եւ առաջ միակ հիմքն էլ այդ է եղել ընդհանուր նպատակը: Պարտք տուող տալու ժամանակ չի առաջնորդուել այն միտումներով, որոնցով սովորական մարդիկ առաջնորդուում են պարտք տալու ժամանակ: Անելին, պարտք տալիս եղել է և այն հաւանական դիտակցութիւնը, որ տաւած կարող է կորչել: Վերջինը սակայն կլինի, եթէ մի վաշիլեան երթարներէ, որ պատերազմից յաղթող դուրս գար Գերմանիան: Այն ժամանակ ի՞նչ խօսք կարող էր լինել այդ պարտքերի մասին, և եթէ լինէր էլ՝ ի՞նչ արժէք կունենար:

Եւրոպան այժմ ասում է Ամերիկային: — Այո, դու դրամ ես տեղի, բայց մենք էլ միլիոնաւոր կենանքեր ենք տեղի կորցնելով նաև անհասանելի աւելի ներքառական միջոցներ: Մենք չենք խնայել մեր կենանքերը ընդհանուր թշնամուն յաղթելու համար, իսկ դու խնայում ես զո դրամը: Եթէ մենք խնայչինք մեզ, ամենքս էլ կը պարտէինք — մենք էլ, դու էլ: Եւ այն ժամանակ

դու ոչ միայն չէիր կարող մտածել մեզ տւած դրամի մասին, ոչ միայն ընդ միշտ պիտի հրժարուէիր այն ըրտըր դրամադուռներէց, որ ունին Եւրոպայում պատերազմական պարտքերից դուրս, այլ, թերևս, եթէ ոչ ընդմիջտ, գոնէ շատ երկար ժամանակի համար Եւրոպական շուկաների դռներն էլ փակ մնային քո առաջ, որով կորուստներդ հաշիւ չէին ունենայ:

Ինչպէս կրտսնները զիչ յետոյ, Եւրոպայի այդ տրամադրութիւնները արժազանք են գտել նաև Ամերիկայում և կատարում են իրենց դերը, որը սակայն տակաւին մեծ արդեցութիւն չունի ու Մ. Նահանգների կառավարութիւնն ու ժողովուրդը իր մեծամասնութեամբ իր տեսակէտը չի փոխում: Նրանք կանգնած են նախ ձևական հողի վրա. — Պարտք էք արել, մարիսկ էք ստորագրել, արեմն, բարի եղէք, վճարել: Բացի այդ, նրանք ասում են, որ եթէ դաշնակիցները մարդկային մեծ զոհեր են տւել, դրա փոխարէն պատերազմից յետոյ էլ շատ բան են ստացել. ոմանք հասել են իրենց ազգային — քաղաքական նպատակին, ոմանք ուժեղացել են իբր պետութիւն՝ քաղաքականապէս ու Ֆիզիքապէս — և այդ ամէնը լիովին վարձատրում է նրանց կորուստը: Իսկ Ամերիկան, թէև մարդկային թել կորուստ է ունեցել, բայց հրժարուել է շատ բանից՝ թէ հողային նւաճումներ և թէ հատուցումներից, ուստի և իրուսնք սենի պահանջելու իր տւած դրամը:

Եւ Վաշինգտոնի կառավարութիւնը իր պարտապաններէց իւրաքանչիւրի համար կազմել է մի պարտատեսակով, ըստ որի և պահանջում է իր պարտքերը: Նա ի նկատի է առնում պարտապանների տնտեսական կարողութիւնը: Վճարումները պիտի շարունակուին տասնեակ (60—70) տարիներ, մինչև որ հանգչի ամբողջ պարտքը:

Ուրեմն, սերունդներ շարունակ պարտուող են վճարելու մի պարտք, որի հետ որևէ կապ չեն ունեցել և որի վճարումը անարդար են համարել իրենց հայրերը: Կոպիտ ու բռնի ուժի հարկադրանքի տակ հնարաւոր է նման պարտքերի դանձում, սակայն սպառ կամբը չի կարող հաշուել նման երևոյթի հետ:

Ամերիկայում կայ նաև այն կարծիքը, որ դաշնակից պարտապանները միայն դրամով և, առհասարակ՝ նրթական հատուցումներով չէ, որ կարող են լրացնել իրենց պարտքը: Եթէ դրամով անկիրող են վճարել, թող վճարեն քաղաքական դիրումներով: Այդ պարզապէս նշանակում է, որ Եւրոպան նկատուում է մի երկիր, որը թէ տնտեսապէս և թէ քաղաքականապէս բացարձակ կախում պիտի ունենայ Ամերիկայից:

Եւրոպայում այդ հասկանում են, և այստեղ ծայր տւած զգոճուութիւնն անհիմն չէ: Այդ հիմքերից զլիաւորը պիտի համարել տնտեսական այն ծանր վիճակը, որ ապրում են Եւրոպայի ժողովուրդները, անգամ նրանցից ամենահարուստները — Անգլիան ու Փրանսիան: Փրանսիայի քաղաքական հորիզոնում Պուանկարէի վերադառնի երևան գալիս, իբր վարչապետ, բացատրում է ոչ միայն Փրանսիի անկումով, այլ համարում է նաև մի ցոյց՝ ուղղած Ամերիկայի դէմ. — Փրանսիան չի ուզում կրել այն լուծք, որ նրա համար պարտատուում են Մ. Նահանգները: Գուլլիէն ուղղած իր նամակում Գլենմանսն դրում է. «Փրանսիան ծախտ ապրանք չէ

նոյնիսկ իր բարեկամներին: Եւ սա Փրանսական հասարակութեան մտայնութեան ամենաըզբիտ արտայայտութիւնն է:

Անգլիական Ֆինանսների նախարար Մեուուէնի հաշտով անգլիական ժողովուրդը 60 տարւայ ընթացքում տարեկան 76 միլիոն քանկութեան օր պիտի տրամադրի, որպէսզի վճարի իր պարտքը Միացեալ Նահանգներին: Մի այլ մասնագէտի հաշտով դաշնակից պետութիւնները, որպէսզի վճարեն իրենց պարտքերը Մ. Նահանգներին, պիտի հրժարուեն տարեկան մի միլիարդ բանկարական օրւայ աշխատանքից: Սա լուծ չէ հասկալի՞նչ է: Եւ ինչքի մօտ բա՞ն է, որ այդ հսկայական ծանրութիւնը կրողական ժողովուրդները ոչ միայն իրենք յանձն առնեն, այլ և ժառանգութիւն ձգեն իրենց սերունդներին:

Ամերիկան տրամադրութիւն է ցոյց տալիս ըստ ամենայնի շալկեցել՝ Եւրոպայի տնտեսութիւնը վերականգնելուն՝ տրամադրելով այդ նպատակին հարեաւոր միլիոնների (փոխառութիւն): Գուլլիէն խրախուսում է այդ տրամադրութիւնը՝ միամտամտակ պահանջելով պարտքերը: Այն սպաւորութիւնն է ստացում, որ Ամերիկայում կարծում են թէ Եւրոպան իր ուժերով անկարող է ոտքի կանգնել և շտկել իր տնտեսութիւնը: Ինչանկալի կարիք կայ և այդ խնամակալը ո՞վ կարող է լինել, եթէ ոչ Միացեալ Նահանգները իր անսպառ նրթական միջոցներով:

Պարտքերի պահանջելը պատճառարանուում է և մի այլ տեսակէտով: Այդ տեսակէտը ծերակուտական Բուրայինն է: Նա ասում է՝ չպահանջել պարտքերը նշանակում է քաշվելու ու իրարուանջել զինման դործը, որ շարունակուում է Եւրոպայում. իսկ պահանջել պարտքերը՝ նշանակում է ամենազործնական պրոպագանդն անել ընդդէմ զինման: Վճարելով պարտքերը՝ Եւրոպան այդև դրամ չի ունենայ զինելու համար: Այսպիսով դուրս է դուրս, որ պահանջելով պարտքերը Մ. Նահանգները մի տեսակ բարի դործ են կատարում:

Բայց Ամերիկայում կան նաև հասարակական գործիչներ, որոնք արամազծօրէն հակառակ տեսակէտն են պաշտպանում պատերազմական պարտքեր խնդրում: Նրանք բնասնում են այն տեսակէտը, որին ձգտում է վերջին հաշտով, դաշնակից ժողովուրդները դժգոհութիւնը. — խաչ քաշել այդ պարտքերի վրա: Այսպէս, օրինակ, յայտնի փաստարան Պրետտի մի դրութիւն է ուղղել ծերակուտին ու Ֆինանսների նախարարութեան, որի մէջ, խօսելով պարտքերի մասին Աշխիպտոնի կառավարութեան համար ոչ միայն անսպասելի, այլ և անախորժ մտքեր է յայտնում: Նա պնդում է, որ եթէ պատերազմական պարտքեր մասին է խօսուում, ապա պէտք է խօսել միայն այն իմաստով, որ Մ. Նահանգները են պարտ Եւրոպայի դաշնակից պետութիւններին և ոչ ընդհակառակը: Միացեալ Նահանգները, ասում է նա, մասնակցել են պատերազմին նրա երրորդ տարւայ վերջին, երբ թշնամին արդէն բաւականին թուլացել էր: Այդ հանգամանքի հետևանքով Մ. Նահանգներն ունեցան չափազանց զիչ մարդկային կորուստ: Եթէ Մ. Նահանգները մասնակցէին պատերազմին Հէնց սկզբից, տարակոյս չկայ, որ նրանք պատերազմի դաշտում կը կորցնէին ոչ պակաս քան երեք հարիւր հազար քաղաքացիներ և կուներնային մօտ մէկ միլիոն աշխատանքի

անընդունակ դարձածներ: Եւ աչքի առաջ ունենալով, որ դաշնակից պետութիւնների իւրաքանչիւր քաղաքացու Ամերիկեան պաշտօնական զնահատութիւնը, դրամով արտայայտած, կազմում է վաթսուհարկ դոլար՝ Պիրոտի, ի նկատի առնելով նաև վերաւորները, այդ կրուստը հաշուած է մօտ երեսուն միլիարդ դոլար: Այս հսկայական վնասը չէ ունեցել Ամերիկեան ինտրօն միայն Եւրոպայի իր դաշնակիցների: Իսկ այդ ինտրոպութիւնը շատ աւելի մեծ է, քան դաշնակիցների պարտքերը, որոնց մասին խօսում է Մ. Նահանգների կառավարութիւնը: Այդ բանի ի նկատի ունենալով՝ Պիրոտի պահանջում է, որ Մ. Նահանգների կառավարութիւնը ձեռք բաշի պարտքերից:

Պիրոտի մտայնութիւնը անհատական է. նրա տրամադրութիւնները արձագանք են գտնում շատերի սրտում ու իրենց վրա են հրաւիրում երկրի իշխանութեան ուշադրութիւնը: Միացեալ Նահանգների Փիւնանների նախարար Մէլոնը Պիրոտիին պատասխանում է այն մտքով, որ Մ. Ն-ի կառավարութիւնը եթէ չի մօտեցել դաշնակիցների՝ պատերազմական պարտքերին նրանց վրա խաչ բաշելու իմաստով, միակ պատճառն այն է, որ Ամերիկայի ժողովուրդը նման պահանջ չի դրել իր կառավարութեան առջև: Մէլոնի այդ լեզուն ինքնին արդէն բնորոշ է. նա վկայում է, որ կառավարութեան զինուորական անտրամադիր նախկին զինքը խախտած է և սկսելու է որոնումներ շրջան: Եւ իրօք, թերթերը հաղորդում են, որ ամերիկեան զեականը Լոնդոնից մեկնել է Վաշինգտոն գլխաւորապէս նրա համար, որպէսզի այնտեղ քննութեան դնի պարտքերի մասին կայացած համաձայնութիւնների փոփոխութեան խնդիրը: Դեռպահան այն կարծիքին է, որ հսկայամերիկեան տրամադրութիւնները Եւրոպայում գործնանում են և դրա առաջն առնելու միակ միջոցը պարտքերի կրճատումն է ու նրանց մասին եղած համաձայնութիւնների փոփոխութիւնը: Այդ փոփոխութիւնները, ինչպէս երևում է դեռպահան տրամադրութիւնից, պիտի կատարւեն այնպիսի ուղղութեամբ, որ ապագայում հնարաւոր լինի պարտքերը ջնջել: Ի հարկէ, միամիտ պիտի լինել կարծելու համար, որ թէ հասարակութեան մէջ և թէ կառավարական շրջաններում նկատուող այդ բեկումը բոլորում է ինչ որ բարեգործական միտումներից: Ոչ: Բանախանութեան ու ռահի հարց է: Ամերիկայում սկսել են գիտակցել, որ եթէ Եւրոպան հարկադրանքի տակ սկսի վճարել իր պատերազմական պարտքերը, նրա համար կստեղծուի անտեսական մի այնպիսի ճգնաժամ, որի հետևանքները կարող են լինել ճակատագրական նաև Ամերիկայի անտեսութեան համար: Մէլոնը վերջերս Վիէնայի թերթերից մէկում տպած իր յօդածումն ասում է, որ Ամերիկայի երկարադրժութեան և արդիւնաբերութեան համար իրականացնելու հսկայական զորութիւն կստեղծուի, եթէ Եւրոպան անկարող լինի դնել Ամերիկայի բամբակը, ցորենը, ծխախոտը, խոզի միսը, ատոմոբիլները: Սա պարզապէս նշանակում է, որ եթէ այսօր Ամերիկայի տնտեսական կեանքը շարունակուած է յաղթականորէն յատաճաւորելու ու բարեկեցիկ վիճակ ստեղծել իր ժողովրդի համար, այդ դեռ չի նշանակում, որ այդ յատաճաւորութիւնը կըշարունակուի և վաղը, երբ Եւրոպան այս կամ այն պատճառով դուրս մնայ Ամե-

րիկայի տնտեսական կեանքի շրջանակից: Եւ, յամենայն դէպս, ինքը Ամերիկան չէ, որ դուրս պիտի նետէ Եւրոպան այդ շրջանակից: Եթէ նա միայն վերջերս յամառօրէն պնդել է պարտքերի վճարման վրա, համոզուած է եղել, որ Եւրոպան կարող է վճարել առանց ճղնածամի առաջ կանգնելու ու կանգնեցնելու իր պարտատէրին: Երբ իրերի իսկական դրութիւնը հասկանալի ցոյց տար, տարակոյտ չկայ, որ Ամերիկան զինուորների ճամբան է բռնելու:

Ինչպէս որ կեանքը իր տնտեսական ու Հոգեբանական օրէնքներով թելադրեց տարիներ առաջ դաշնակիցներին լինել, հնարաւորութեան սահմաններում, զինող Գերմանիայի վերաբերմամբ, այնպէս այժմ էլ այդ նոյն կեանքը հարկադրելու է Ամերիկային խիստ չափաւորել իր պահանջները դաշնակիցներէից:

Ա. ԱՍՏԻՍԱՍԻՐԵԱՆ

ՊԱՏՔԱՐԸ ԼՈՂԱՆԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Անս երեք տարի է կը մղէ բուռն ու անօրինակ թափով պայքար մը Լողանի շարաշրջ դաշնագրին դէմ, որ կնքուեցաւ 1923 օգոստ. 6-ին: Ուշադրաւ և հետաքրքրական այդ պայքարը, որ իր վրա է սեւեռած շատերու նայածքը, ստացած է բնոյթը երկու անհասարուութեան միջև յատանջ տարւող անարիւն մենամարտի մը, որու գործողութեան վայրերն են մամուլը, ամբիոնները, օրէնդրական տունները, բայց մանաւնդ նրանցքներու խորը և թանձր վարազայրներու ետին:

Իզմիրի ողբերգութեանէն յետոյ, դաշնակից պետութիւնները մէկ- մէկ ձեռք մեկնեցին թուրքոյ, հաշտ յարգարի այնպիսի անբարոյական եղանակով մը, որ միշտ յատուկ է եղած դիւնապիտական լարակայացութիւններով պարագողներուն: Ուստի ինչ որ և զբողուած անորժակով մը հրապարակ իջաւ, աւարէն իր բաժինը ստանալու համար, քանի որ Մերձաւոր Արեւելքի մէջ պատերազմը իր վախճանի հասցնելու համար ինքն ևս քիչ ծառայութիւն չէր մատուցած, անուղղակիօրէն: Արդէն իսկ իր առջև դրւած էին հրապարիչ ու արբեցնող խաթեր — Չէսթրի ու Քէնէտի երկաթուղային մենաշնորհները, Մուսուլի նաւթը, որոնցմէ չզրկելու համար անհրճելու էր ուրիմն սեղմով տեղադրծի արիւնաների թաթը և վերադարձնել հին գարեկամութիւնը՝ նոր դաշնագրութեամբ մը:

Եւ տեղի ունեցաւ այդ՝ գեղեցիկ Զւիցերիոյ քաղաքներէն Լողանի մէջ, որու անւան կապած են այսօր այնքան տխուր յիշողութիւններ՝ յատկապէս մեզ հայերու համար:

Սակայն, այդ՝ դաշնագրութիւնը, որ կ'արատաւարէ ամերիկեան այս մեծ հանրապետութեան պատմութիւնը ու կ'ոտնահարէ Հայաստանի իրաւունքները խայտառակ անպատկառութեամբ մը, ցնցեց խճճմտանքը բացմաթիւ ականաւոր ամերիկացիներու, որոնք, անհ մի քանի տարիէ հրապարակ ինձ՝ կուր կը մղեն ոչ միայն սեփական կառավարութեան, այլ և բոլոր թրքամիտ ու թրքաէր տարբերուն, կաշաւած գոր-

ծակալներու խայտաբղէտ բազմութեան մը և խոշոր թիւով վասնդաւոր խլուրդներու դէմ:

Լոգանի դաշնագրի ընդհանրադրեան պայթարին մէջ առաջնակարգ տեղ կը բռնէր Հայկական Հարցը, որ եթէ այսօր կը գտնուի իր մեռեալ վիճակին մէջ, պատճառը դիւաւորաբար Մ. Նահանգներու կառավարութիւնն է: Ինչ կենդանի հետաքրքրութիւն ցոյց տաւ ան դէպի մեր բարձրասոր ժողովուրդի տառապանքը, ո՞րպիսի մեր խաղաղատանջ հանդէս բերաւ ան մեր ազատագրական պայքարի ամէնէն արիւննոտ օրերուն, ի՞նչ վարդազոյն խոստումներ տաւ ու ինքնայօժար յանձնառութիւններու տրամադրութիւն, ու այսօր ո՞րպիսի անօրինակ անտարբերութեամբ ուսերը կը թօթէ և Պիղատոսի նման ձեռքերը կը լայ:

Մ. Նահանգներու կառավարութիւնը, ինչպէս այդ կը յիշեցնեն շարունակ մեր դատի ակնհասը պաշտպանները, որոնց խղճտանքը դեռ ևս աղճատած ու այլանդակած չէ դիւանագիտութեան կեղտոտ ճամբաներուն մէջ, ամբողջ երկու տարի ձգձգեց Հայկական Հարցի լուծումը, թոյլ չտաւ որ մեզ ընդունինք ճիշտակաւ կառավարութեան մեր երկրի մէջդէտը ընդունելու առաջարկը, չուղարկեց Հայաստան այն անմիջական օգնութիւնը, որ արժանացած էր Մերակոյտի միաձայն հասնութեանը: Ատոր հետևանքը եղաւ այն, որ 1919-էն սկսած կոտորեցան մօտ 300,000 Հայեր, խրատակեցաւ իր բախտն ու թշնամիներուն ճանկը ձգւած անկախութիւն մը և ստեղծեցաւ այսօրայ այնօրինակ ու անանուն ողբերգութիւնը: Անկէն: Այս երկրի կառավարութիւնը, կ'ըսեն մեր բարեկամները, ա՛յնքան անհոգ գտնեցաւ իր բարոյական իրաւունքի գործադրութեան մէջ, որ իր նախագահի իրաւաբարական վճռին ձգւած խնդիր մը, որպիսին էր Թրքա-Հայաստանի սահմաններու որոշումը, մասնեց կատարել մտաքոթեան: Ուրեք թէ չուզենք, կ'ըսեն անոնք, Հայկական Հարցը ինկած է ամերիկեան արտաքին քաղաքականութեան շրջագծէն ներս, և անկէ կարելի է ազատել միայն անոր արդար լուծումը ապահովելով և ոչ թէ նախապէս ու երկաթուղային մեծաշնորհներու հետ զայն փոխանակելով:

Դժբախտաբար, սակայն, ոչ միայն պաշտօնական Ամերիկան, այլ և անոր հետ կազմակերպւած փաղանգ մը կաշառւած գործակալներու այսօր որևէ յոյս չեն ներշնչեր մեզ, որ գործուած սխալները գէթ մասամբ պիտի սրբապլոսին. ընդհակառակը, հետզհետէ սուտն և կեղծարարութիւնը այնքան նուրբ ու կատարելագործուած ձևեր կը ստանան, որ մարդիկ այստեղ ալ կը ջանան իրաւունքի, բարոյականութեան ու մարդասիրութեան վարագործը նետել օրը ցերեկով գործուած ամէն տեսակ սինկրիմ վրա: Եւ արդէն ո՞ր և ե՞րբ հանրառէր չէ եղբք, հարկը ստիպած պարագային, չքնիղապցոյնք փիլիսոփայութեան մը դիմել՝ արդարացնելու Համար ամէն մոլութիւն ու դո՛հ չլինել:

Դաշնագրի պաշտպանները կը պնդեն, որ պէտք է Հաշտել թուրքիոյ հետ, որովհետև, կ'ըսեն, այժմ Մուստաֆա Քէմալի վարչութիւնը ամբողջ երկրին մէջ Հաստատած է արդար ու ազատամիտ վարչութիւն մը, որմէ չեն կարող Հայերը ևս դո՛հ չլինել:

Թէ որքան արդար ու ազատամիտ է այդ վարչութիւնը բուն թուրքերուն Համար, այդ մասին չենք ալ

ուզեր հետաքրքրել: Բայց որ «ազատամիտ» Քէմալն ու իր հորդանքը ևս շարունակեցին իթթիհատի ջարդար քաղաքականութիւնը մեզ հանդէպ, այդ մասին Հհաստատու համար պէտք է կոյր ըլլալ:

Պուլշեկեան ժողովի մը տեղեկագիրը կ'ըսէ թէ 1920 դեկտ. և 1921 յունվ. ամիսներուն իրենց քաղաքաբարկեց զէմալականները Աղէքսանդրապոլի մէջ կոտորեցին 30,000 Հայեր:

Ամերիկեան Նպաստամատոյց մարմինը և Ֆրանսական միախոնարները իրենց տեղեկագրութեամբ Հաստատեցին որ Կիլիկիոյ մէջ 20,000 Հայեր բարբարոսաբար կոտորեցան, դարձեալ նոյն «արդար» ու «ազատամիտ» Քէմալի կողմէ:

Ամերիկեան ընդհանուր հիւպատոս Նորթըն կը Հաստատէ իր տեղեկագրով որ Իզմիրի դրաման ժամանակ՝ 1922-ին, Քէմալականները 50—100 Հազար յոյներ ու Հայեր կոտորեցին, թալլեցին քաղաքը և հրդեհեցին Հայկական, յունական ու երոպական թաղամասեր:

Երբ բոլորովին կացութեան տէր դարձան, թուրքերը մաքրեցին իրենց երկիրը յունական բազմութենէն, անոնց հետ միասին քջեցին բուս մը Հայեր և տէր դարձան անոց ամբողջ հարստութեան:

Այսօր ալ տարեկան այդ նոյն զէմալականները հարէմներու մէջ կը պահեն 100,000-էն ակնի քրիստոնեայ կիներ ու երեխաներ:

Ահաւասիկ «արդար», «ազատամիտ» ու «մարդասէր» Քէմալը, որու հետ դաշինք կ'ուզէ կնքել Ուսինկիթընի կառավարութիւնը, իր գործակալներու միջոցաւ աշխատելով մեզ ևս Հաստատեցնել, որ անոր հետ իր Հաշտութիւնը «բարեք» պիտի բերէ նաև մեզ:

Սակայն, եթէ այդ բարեքը Հափագանց ինդրական է մեզ Համար, տեսնե՞ք ան իրական օգուտ պիտի տայ Մ. Նահանգներուն առևտուրին, որուն համար մի քանի վաճառականներ այնքան կ'աշխատին ու այնքան մտահոգ կերևի: Դժբախտաբար թէ բարեբախտաբար այստեղ ալ չոր թևանշաններու յեղուն մեզ կ'ըսէ որ ամենալաւ պայմաններու մէջ Ամերիկայէն թուրքիա ներածելիք ապրանքներու քանակը տարեկան 5—7 միլիոն տոլար պիտի չհասնի:

1913 թ.ին թուրքիոյ ամբողջ բնակչութիւնը կը Հասնէր 18 միլիոնի. այժմ այդ բնակչութեան քանակը 8 միլիոնի է իջած:

1913 թ.ին, Համաձայն էնկիթըրի էյմտական նախարարին տւած տեղեկութիւններուն, թուրքիոյ տարեկան եկամուտն էր 125 միլ. տոլար և ծախքը 150 միլիոն. 1923-ին անոր եկամուտը իջած է 50 միլ. տոլարի, իսկ ծախքը՝ 85 միլիոն է:

1913 թ.ին թուրքիան կ'արտածէր 81 միլ. տոլարի ապրանք, կը ներածէր 112 միլ. տ. մինչ 1923-ին անոր արտածումը եղած է 12 միլիոնի, իսկ ներածումը 40 միլ. է: Բայց սառնք թրքական աղբիւրներէ ստնւած տեղեկութիւններ են, մինչ այսօր իրական եկամուտը զէմալական թուրքիոյ՝ Հազիւ իր ընդհանուր ծախքի 15% -ին կը Հասնասուրի, և այդ Հափագանցութիւնն չէ: Համաձայն Ֆրանսական վաճառականական տարեցոյցի մը տւած տեղեկութիւններուն, 1913 թ.ին Հայերը և յոյները իրենց ձեռքին մէջ կը պահէին թուրքիոյ վաճառականութեան 66%-ը. թուրքեր՝ 12%-ը: Թուրքերը

1913-ին կը հաշուէին 6 միլիոն, անոնք թիւը այժմ կը ճանաչուած է կորուստը չափով և քնական է որ երկրի ընդհանուր եկամուտն ալ պիտի պակսի նոյն համեմատութեամբ:

Փողովուրդ մը, որ ամռանսպէս բոլորովին քաշուած է, որու վաճառականութիւնը կը գտնուի ամենաաղքատի վիճակի մէջ, Փողովուրդ մը, որ իր կենցաղաձևով շատ կը յիշեցնէ ամենաանխնայական պայմաններու մէջ գտնուող կիսավայրենիները, ինչո՞վ պիտի կրնայ շահեցնել արդեօք Ամերիկայի Մ. Նահանգներու նման հարուստ երկրի մը, որու համար մի քանի միլիոն տոյար ապրանքի վաճառումը չի կրնար երբէք հրապուրել հեռանկար մը համարելի: Սակայն, հապառուստ այս հանգամանքին, զիչ չէ թիւը անոնց, որոնք ամերիկեան վաճառականութեան վնասները կը հաշուեն մինչև այսօր Լոզանի դաշնագրի վաւերացումը ձգձգելուն համար: Ասոր համար շատ աւ գարմանալու չէ: Անխորից այսօր ամենուն մէջ ալ կը խօսի ու կը գործէ նիւթական շահերու գոհնիկ ու կոպիտ պաշտպանութիւնը և ոսկիի ու արծաթի սերահար այս երկիրը չէր որ պիտի բացատուութիւն կազմէր և չվարակէր ինքնօրինակ դրամապայտութեան համատարած հիւանդութեանէն:

Դաշնագրի վաւերացումը կը շահեցնէ արդեօք ամերիկեան միսիոնարութեան, որ յանձինս իր ակաւոր ներկայացուցիչներու, ոտքով — ձեռքով խրած է այս գործին մէջ: Այս հարցին պատասխանը բացասական է: 1949 միսիոնարական դպրոցներէն այսօր մնացած են միայն 16 դպրոցներ, իսկ 50,000 աշակերտութենէն՝ 2500 հոգի միայն: Երեսփոխական Քինկ ու, տղտոք Փոսթ, որոնք նոր վերադարձան Թուրքիայէն, կը հաստատեն որ ներկայիս գոյութիւն ունեցող ամերիկեան դպրոցները փաստորէն թրջացած են ու կը գտնուին Գէմալ կառավարութեան բարձրակարգ հողորդութեան տակ:

Իսկ ի՞նչ վիճակի մէջ են միսիոնարական եկեղեցիները: Դարձեալ ստացած տեղեկութիւնները ցոյց կուտան որ անոնց 90%-ը չկայ այսօր, վառուած կամ գրաւած են: Նոյն բախտով են արժամացած նաև հիւանդանոցները, հոս — հոն գտնուող կայաններ կամ Y.M.C.A.-ի նման հիմնարկութիւններ: Ամենավայրենի ձևով սպաննուած են նաև բազմաթիւ միսիոնարներ:

Եպիսկոպոս Մէնինկ, որ Լոզանի դաշնագրին վաւերացման ղէմ բողոքող 120 բարձրաստիճան հողերակալներու իրական յիւրըը կը համարէ, Արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի ատենապետ Ծերակուտական Պարահին ուղղած իր նամակի մէջ, իրաւամբ դիտել կուտար որ կարգ մը մարդիկ միսիոնարական շէնքերու կիրովն ու աղիւսովը աւելի կը շահադուրեն, քան այն նպաստակով, որ այդ շէնքերու միջոցաւ մենք պիտի հետապնդէինք:

Լոզանի դաշնագրի վաւերացումը այնքան կարևոր ու հրամայական է Թուրքիոյ համար, որովհետև դաշնագրին վաւերացումով ան կը յուսայ նախ խոշոր փոխառութիւն մը կնքել Ուաշինկթընի հետ, ուր ան շարժման մէջ է դրած բազմաթիւ ամերիկացիներ, միսիոնարներ, առևտրականներ, մամուլի ներկայացուցիչներ: Տղթթր Պարթըն, Կէյթթր, Պրիսթուլ, Բիկզ, Ճոն Ֆինլի և շատ ուրիշներ կը գործեն, կը գրեն ու կը

խօսին յօդուս գաշնագրի վաւերացման: Ճոն Ֆինլի, որ Նիւ-Եորքի համալսարանի նախկին նախագահն է, մեծ մտաւորականի մը անվայել անպատկառութեամբ կը դատէ որ Թուրքիան Ֆէսի տեղ զլիսարկ ընդունելով, ոտք է դրած արդեականութեան ուղի վրա և թէ Գէմալը կատարեալ սկանտինալի մըն է գարձած:

Կաշառը ևս հրաշալի արդիւններ կուտայ հոս: Այլապէս ինչո՞վ բացատրել, երբ զիչ շատ ազատամիտ ու ազատամտ հարձած թերթեր ալ կը պաշտպանեն Թուրքիան, կ'աշխատին անոր պատմութիւնը սրբել իր բոլոր խոշոր արասներէն և յոյց տալ որ Համարապուրական Թուրքիան սկսած է դառնալ իրական ուսկալարութեան հայրենիքը:

Գործակալներու եռանդուն աշխատանքներուն ու կաշառքի հետ, Թուրքիան հրապարակով կը գործածէ նաև երկու զէնքեր. — խոստում և սպառնալիք: Անգամ մը Պրիսթուլի և Կէյցոյի միջոցաւ ան առաջարկեց որ եթէ դաշնագրը վաւերացի, ինք պիտի թող սոյ ամերիկացիներուն որ թէ՛ իրենց դպրոցներուն և թէ՛ փախազող մարմտական աշակերտներուն ջրիտոնէութիւն ուսուցանեն: Բայց ինկիւրի երբ տեսաւ որ պարզին անցաւ այդ միջոցն ալ, այս տարւայ մայիսի կէսերուն ան դրանց կարգ մը ամերիկեան հաստատութիւններ, պատրակելով որ անոնք հայերու լքեալ գոյքեր են: Այս սպառնալիքը հարկադրեց Գոլիքը որ անգամ մը ևս խորհրդակցութեան հրահրէ իր պատահախանառու պաշտոնատարներուն մէկ ջանիսին, դժարին կացութենէն դուրս գլուռ ելք մը գտնելու համար:

Այս տարւայ սկիզբը Թուրքիա ուրիշ փորձ մըն ալ ըրաւ մաքսային բարձր սակազներ նշանակելու ամերիկեան ապրանքներուն վրա: Ուաշինկթըն ևս իր կարգին սպանաց այդ առթիւ, բայց յետոյ վեց ամսայ ժամանակամիջոց մը առաւ, որ արդէն հանգաւ այս օրերուն, մինչ դաշնագրը մնացած է անվաւեր:

Դաշնագրին վաւերացման կողմնակիցներուն մէջ ամենկն ազետուար դերը կը կատարէ Մերձատր Արեւելքի մէջ գործող միսիոնարներու խումբը՝ առաջնորդութեամբ Տղթթր. Պարթընի: Գառնուկի մարթով ծածկուած այս անխորտ հողերակալներ, որ շարունակ իրեր բարեկամ կը ներկայանայ մեզ, բայց իրապէս կը փորփորէ մեր գոյութեան հիմերն իսկ, վերջին տարե տարիներու ընթացքին հասցուցած է մեր դատին ամենամանր հարւածներ: Եթէ Ամերիկա պատերազմ չյայտարարեց Թուրքիոյ ղէմ, պատճառն այն է որ այդ ուղղութեամբ հազարի աշխատանք են կատարած Պարթըն ու Քլայկէնտ Տաճ: Եթէ Ամերիկա Հայաստանի անկախութիւնը ճանչնալէ յետոյ, անհրաժեշտ օգնութիւնը չկրցաւ փութացնել անոր, դարձեալ մեծագոյն արգելք եղաւ Պարթըն: Ամերիկեան յանձնակատարութիւնը Հայաստանի վրա եթէ անյուղութեան մատուցեալ, Անվրի դաշնագրի թաղումէն յետոյ, մի քանի տարի անընդհատ եթէ «Արդալին օճալ»-ով օգնութեցանք, պատճառը զլիսաւորարար նոյն շարագործ ոգին է, որ զարմանալի տակնով ու ճարակութեամբ գործեց ամեն տեղ՝ միշտ ի վնաս մեզի և յօդուս Թուրքերուն: Մեր թշնամիները անէն աւելի սպահով պաշտպան չէին կրնար ունենալ Ամերիկայի մէջ: Լոզանի մէջ ալ ան երկցաւ ու գործեց Լամէթ փաշայի հետ, այժմ ան դարձեալ կը

գործէ նոյն Ըսմէթներու ու Քէմալներու հայրենիքին համար, Քրիստոնէութեան դիմակին տակ՝ Պարթըն կը գործէ իբրև շարագործ ու իբրև մեծագոյն խաբարայ մը:

Սակայն պաշտօնական ու անպաշտօն Պարթըններուն դիմաց աւելի մեծ եռանդով կը գործէ արգաւազած իր ու հայասէր ամերիկացիներու ընտրեալ բազմութիւն մը, առաջնորդութեամբ ձէրարտի, Քինկի, Միւլլըրի, Մորկլընթաուի, Պուշնէլ, Հարթի, Ճանսընի, Մէննիկի և ուրիշներու, որոնց նպատակն է փրկել Ամերիկան այն անպատուութիւնէն, որուն ենթարկեցաւ ան իր մի քանի անշորհգ ղեկավարներուն պատճառով և վերականգնել արդարութիւնը յօգուտ Հայաստանի: Բոլոր անոնք, որոնց մէջ դեռ չէ մեռած խոճմտաւքը և կը բարասի մարդկային սիրտ մը, կը հետևին Միւլլըրներու ու Քինկերու խմբակին: Իսկ անոնք որոնց երակներու մէջ կը հոսի միայն դարձաւոր նաւթը, որոնց օրմին մէջ ամէն բանէ աւելի կը վառի ղեղին ոսկիի կամ կանաչ տալարներու տենչը, փարած են Պարթըններու վարչապարի: Երկու կուտը այս բանակներէն որ՞ւն պիտի մնայ վերջնական յաղթանակը — դժար է ըտել առ առջմ: Ընդգիծողիքները, շնորհիւ իրենց խելացի ռազմավարութեան և հաշած ու նպատակայարմար դրոշմներուն, ահա երկու անգամ է յաղթանակի տէրը կը մնան և Մերակայտը իր երկու նստաըջմաններուն, չկրնալով օրինակել սեծամասնութիւնը ապահովել, կը ձգձգէ դաշնագրի քննութիւնը: Յառաջիկայ ամիսներուն հարցը նորէն պիտի վերաբացուի և, երկուստեք տեսնած նախապատրաստութիւնները աչքի առաջ ունենալով, կարելի է հիմնական ըսել որ աւելի ուժգին ու կատաղի պայքարներու հանդիսատես պիտի ըլլանք:

Գաշնագրի պատրաստութիւնը կամ յաղորդութիւնը մեզ համար կենսաբնական մտաւո խնդիր չէ: Սակայն, պէտք չէ երբեք աչքաթող ընել որ անոր ճակատագիրը շատ նպատաւոր կամ աննպատա կերպով պիտի անդրադառնայ Թուրքիոյ վրայ: Վերջինս մեծ յոյսեր է դրած վաշնագրի վաւերացման վրայ. ան նախ և առաջ դրամական խոշոր փոխառութեան մը ակնկալութիւնները ունի: Խորտակել այդ ակնկալութիւնները, պիտի նշանակէ միտակ մեր թշնամիին և աւելի ամբացնել մեր դիրքերը: Սա առաջին շօշափելի արդիւնքն է, որ մենք պիտի ստանանք դաշնագրի մերժումով: Կարևոր երկրորդ հիշտն այն է, որ Լոպանի դաշնագրի վաւերացումով անշնչած պիտի ըլլայ Թուրքիոյ ներկայ քաղաքական զոյլովիտակ և Ամերիկայ պիտի ապաստէ ամէն պարտադրութենէ Հայաստանի հանդէպ: Փակագծի մէջ ըսենք որ յիշուող դաշնագրին մէջ կայ կէտ մը ևս. — արտոյանմումի պայմանը, որմէ եթէ Թուրքիա ուզէ օգտուիլ, վաղը, կրնայ այս երկրի կառավարութենէն պահանջել որ իրեն յանձնուի իր պատակներէն մի քանիքը — օրինակ՝ Անդրանիկը, Սեպուհը, Սմբատը և ուրիշները, այն պատճառաբանութեամբ թէ անոնք ժամանակին իրեն խոշոր վտաններ են հասցուցած: Իր պահանջին մէջ կրնայ յաղորդութիւն ունենալ թէ ոչ — ուրիշ հարց է այդ կարևորն այն է որ դաշնագրին մէջ կան շատ վտանգաւոր կարելիութիւններ:

Մէկ խօսքով, Թուրքիոյ վնասելու և մեր դատը այս երկրին մէջ վառ ու արծարծուն պահելու համար, ամէն միջոց գործ դնելու է վերջնական պարտութեան մատնելու համար Լոպանի դաշնագիրը: Եւ կը կարծենք որ յաղորդութիւնը մեր կողմը պիտի իյնայ, եթէ ամերիկահայ դաղորթը փոխանակ պղատոնական արտախախտութիւններու, նիւթական ու բարոյական կարևոր աջակցութիւն ընծայէ այս պայքարի ղեկավարներուն:

Գաշնագրի դէմ մղած պայքարի բուն նպատակն այն է, որ անոր մէջ մտցուի որոշ տրամադրութիւն այն իմաստով թէ, Ուաշինկթընի կառավարութիւնը յանձն առնէ պայտպանել Հայաստանի իրաւունքները այն սահմաններով, որոնք դժեցեան նախագահ Ուիլսոնի կողմէ: Հարկաւ Թուրքիա երբեք պիտի չընդունի այսպիսի փոփոխութիւն մը դաշնագրին մէջ, բայց այդ պատճառ մը չէ որ մղած պայքարը յառաջ չտարվալու ուղղութեամբ:

Գաշնագրի դէմ պայքարը վարողները կը հաւատան որ եթէ վերջնական յաղթանակը իրենց կողմը մնայ, այդ պարագային Ռուսաստանի ճանաչման հարցը ևս սեղանի վրայ դալու ժամանակ, Ուաշինկթընի կառավարութիւնը ուզէ թէ չուզէ իր ճանաչման պայմաններէն մէկն ալ պիտի դարձնէ Հայկական Հարցի լուծումը՝ մեր ջանքերուն համարաւանակն եղանակով:

Մեր յողածը փակելէ առաջ, երկու խօսք ալ պ. Վահան Գարուշեանի մասին, որ Լոպանի դաշնագրի դէմ մղած պայքարի զխաւոր շարժիչ ուժերէն է: Կրողի ջանքերով ու զարմանալի եռանդով, ահա քանի տարի է ան ներկած է Ամերիկայի մէջ մեր դատի պաշտպանութեան: Գարուշեանն էր զխաւորաբար որ յաջողեցաւ կայմել Հայաստանի Անկախութեան Ամերիկանի Կոմիտէն, որ վերջին Եւրոպայի տարիներու ընթացքին իրօք կատարեց կենդանի դրոշմ: Եթէ 1919 թւին նախագահ Ուիլսոնը Հայաստան ռազարկեց Հովվրի վարչութիւնը, որ 18 միլ. տու. ծախսեց, եթէ Ուիլսոնի կառավարութիւնը ճանչցաւ Հայաստանի կառավարութիւնը և Ուիլսոնն ինք յանձն առաւ պծել Հայաստանի սահմանները, եթէ 1922 թւին ռուսական նպատակն ըստին ճանչեցաւ Հայաստանին, եթէ ընտրական պայքարի ժամանակ դէմուրաւ կուսակցութիւնը իր պլատֆորմին մէջ զեռեկեց յատուկ յօդած հայկական հարցի մասին, այս բոլոր աշխատանքներուն մէջ դուս ամերիկեան այս կայմակերպութիւնը կատարեց խոշոր աշխատանք. իսկ մենք ըսինք արդէն որ այսպիսի կայմակերպութիւն յառաջ ընելու համար Գարուշեան շատ մեծ ջանքեր թակից:

Ներկայիս Լոպանի դաշնագրի դէմ մղած պայքարը ևս մեծ շարժով իր թափն ու արութիւնը պիտի կորսնցնէ, եթէ հրապարակէն քաշուի ձէրարտի, Քինկի, Միւլլըրի և հայացի Գարուշեանի նման կարևոր անձնաւորութիւններ:

Մ. ՕՋԱՆՅԱՆ

# Կոմկուսի փայտյունը շարունակում է

«Բրջակ»-ի յուշիսի համարում, տեինք մանրամասն նկարագրութիւնը Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան ներքին ջախջախման: Վերջարանում մենք ասում էինք. — «Լէնինի միաձուլ կուսակցութեան» համբաւուր միութիւնը խապտ խախտւած է. Կոմկուսի ներքը տիրում է կիրք ու պառակտում: Փաստորէն կոմունիստական կուսակցութիւնը բաժանւած է երկու խորը մասերի... Փոխադարձ հասկացողութիւն, ընդհանուր լեզու չի կարող լինել այդ երկու միմեանց թշնամի, միմեանց դէմ աստաններ կրճատանող կողմերի միջև»:

Դէպքերն ամբողջպէս հաստատեցին այս միտքը: Կոմկուսի Կենտկոմի և Վերահսկիչ Յանձնաժողովի յուշիսեան ընդհանուր ժողովից յետոյ, ուր դատապարտեց ընդդիմադիրներին ընթացքը, պատիժ սահմանեց նրանց պարագլուխներին համար և արգելեց տարակարծիքութիւն առաջ բերող հարցերի հրապարակային քննութիւնը, ընդդիմադիրները ՀՅանդատացան: Նրանք միացան, կազմեցին մէկ ճակատ Կենտրոնական Կոմիտէի, այսինքն՝ Սթալին — Բուխարինի հատուածի դէմ — և շարունակեցին պայքարը աւելի ուժգին թափով: Այս անգամ, «ընդդիմադիր բոլոկ» անուն տակ, ձեռք ձեռքի տաւ, հրապարակ եկան բոլոր գոյնի ընդդիմադիրները — Տրոյսկի — Կամէնև — Ջինովիեի գործօն ղեկավարութեամբ:

Ընդդիմադիրներին գործունէութիւնն առանձնապէս ուժեղ թափ ստացաւ սեպտեմբերի վերջերին: Կոմունիստական ճեմարանում տեղի ունեցած մի ժողովում Ռադէկին ու Սմիլգան բուռն յարձակումներ գործեցին ստալինականներին վրա, որոնք կուսակցութիւնը առաջնորդում են դէպի անակութիւն: Սեպտ. 30-ին Ռեազան — Ուրալի երկաթուղու բլթի ժողովում Տրոյսկին դուրս եկաւ խիստ քննադատութեամբ կենտրոնի վարած քաղաքականութեան: Հոկտեմբեր 1 — ին «Ահուարիտը» գործարանի բլթի ժողովում իրար յետևելի արվկայայտ ճառեր արտասանեցին Տրոյսկին, Ջինովիեը, Պետասկովը և ուրիշները: Միաժամանակ Մոսկուայի բազմաթիւ գործարանների ժողովներում ընդդիմադիրները հանդէս եկան կրքոտ յարձակումներով ընդդէմ կուսակցութեան վարչի մարմնի: Կենտրոնն էլ, իր հերթին, կազմակերպւած պատասխան տեց ընդդիմադիրներին և որովհետև կուսակցութեան մեքենան նրա ձեռքին էր, բլթիների մեծ մասը արտոսյայտեց ընդդիմադիրներին հակառակ: Սկսւած պայքարից ձևակապօրէն յաղթող դուրս եկաւ կենտրոնը:

Այս անգամանքն աչքի առաւ ունենալով՝ ընդդիմադիրներին պարագլուխները՝ Տրոյսկի, Կամէնև, Ջինովիե, Սոկոլնիկով, Պետասկով և Շչոլովիով, հոկտ. 4-ին, դիմեցին Կենտր. Կոմիտէին՝ առաջարկելով վերջ

կելով վերջ կամ «ներկուսակցական պառակտումին» և վերականգնել համերաշխութիւնը: Սկսեցին բանակցութիւններ: Կենտր. Կոմիտէն, հոկտ. 7-ին, ներկայացրեց մի շարք պայմաններ կուսակցական միութիւնը վերականգնելու համար: Եւ մինչ կատարում էին բանակցութիւնները, մի խումբ ընդդիմադիրներ Ջինովիեի գլխաւորութեամբ, հոկտ. 7-ին, դադարեցին կերպով անցան Պետրոգրադ և այնտեղի բանտրական շրջաններում բացին նոր պայքար Կենտր. Կոմիտէի դէմ: Տեղի ունեցան մի շարք յուզումնալից ժողովներ ու կատաղի բաղխումներ Սթալինի և Ջինովիեի կուսակիցներին միջև: Յաղթութիւնը այստեղ էլ մնաց Սթալինի կողմը:

Այսպիսի պայմաններում բանակցութիւններն էլ սուր կերպարանք ընդունեցին: Ընդդիմադիրները դիմեցին զիջումի և համաձայնում էին վերջ տալ հատուածական գործունէութեան, բայց պնդում էին իրենց հատուածի առանձին՝ պահպանման իրաւունքի վրա: Կենտր. Կոմիտէն, ընդհակառակը, պահանջում էր բացարձակ հնազանդութիւն, լուծում հատուածի և վերացում «ընդդիմադիրների բոլոկ» գոյութեան: Ի վերջոյ Կենտր. Կոմիտէն, հոկտ. 11-ին, 8 կէտերից բաղկացած մի վերջնադիր ներկայացրեց ընդդիմադիրներին, որոնցով պահանջում էր 1) բացայայտ կերպով յայտարարել, որ անպայմանօրէն ենթարկւում են կուսակցութեան, 14-րդ համագումարի, Կենտր. Կոմիտէի և Կենտր. Վերահսկիչ Յանձնաժողովի բոլոր որոշումներին և առանց տարբերութեան պիտի գործադրեն այդ որոշումները. 2) բացայայտօրէն խոստովանել, որ՝ ընդդիմադիրներին հատուածական գործունէութիւնը, 14-րդ համագումարից սկսած մինչև Մոսկուայում ու Լէնինգրադում հանդէս գալը, հոկտեմբեր ամսին, եղել է անթիյալարելի ու անպայման սխալ կուսակցութեան շահերի տեսակէտից և ստեղծել է սպառնալից կուսակցութեան և խորհրդային իշխանութեան ստեղծագործական աշխատանքը վիժեցնելու շնորարութեան այս ծանր պայմաններում. 3) Բացէ ի բաց խոստովանել, որ այս տարւայ հոկտեմբերին Մոսկուայում և Լէնինգրադում հանդէս գալով՝ ընդդիմադիրները բիրտ կերպով խախտել են 14-րդ համագումարի և Կենտր. Կոմիտէի որոշումը, որով արգելւում էր առանց բարձրագոյն մարմինների յատուկ թոյլտուութեան համախորհրդային բաց վիճարանութիւն ունենալ, 4) անմիջապէս դադարեցնել հատուածական աշխատանքը, հատուածական գործիչներին առջններն ուղարկելը, արգելւած դրականութեան անաջընդ Վոմկուսի կազմակերպութիւններին և կոմիտէներին մասնաճեղքելու և անպայման լուծել ընդդիմադիրներին միութեան բոլոր և հատուածական կազմա-



կերպութիւնները: Միւս շորս կէտերով պահանջուած է խզել բոլոր կապերը « դաւաճան » Յոսովկիի, Մէդլէտու — Շիւսպիկովի, զերման ընդդիմադիրներ Կորչի, Մայլովի, Ռուժ Ֆիշէրի, Ուրբանսի, Վէրէրի, Փրանսիական՝ Սոսլարինի և Խոսլախան՝ Բորդիլայի ընդդիմադիր խմբերի հետ:

Այս տեսակետից շատ բնորոշ է կրօնի ու եկեղեցու վիճակը Հայաստանում: Ամենքին յայտնի է, որ այն օրից, երբ հիմք դրւեց Հայ պետութեան, եկեղեցին բոլորովին կորցրեց իր ազգային արժէքը և դարձաւ մասնաւոր մարդկանց խղճի գործ: Եւ, առհասարակ, եկեղեցին մեր կենսանքում երբէք չի եղել կրօնական մեղուանդութեան արտայայտութիւն: Մենք աւելի վաղ, քան, օրինակ, ռուսները դուրս ենք եկել կրօնական ազդեցութեան շրջանակից, և եկեղեցին մեզ համար արժէք է այնչափով, որչափով, որ կատարել է ազգային այս կամ այն դեր: Հանրապետութեան շրջանին Հայաստանի եկեղեցիները դատարկ էին, և կիրակի ու տօն օրերին միայն պառաւներն էին գնում ժամասացութեան և քարոզ լսելու:

Բայց ահա եկան բոլշևիկներն իրենց զգիայէկտիկական մատերիալիզմով ու զպատմական պրոպեդոզով՝ և ինչեպառ արդիւնքը: Նրանք սկսեցին կատարել արշաւանք կրօնի ու եկեղեցու դէմ, էլ հակակրօնական ծէսեր ու թափօրներ, էլ պայքար աստծու դէմ, էլ Քրիստոսի ու Մարիամ աստուածածնի խրուելակները պատցնել փողոցներում, էլ միմուսային ներկայացումներ կրօնական կենսից, հայրնական երգեր ու ոտանաւորներ — կարճեւ թուր հարցերը լուծած էին և մնում էր

«տիրել երկրքին»: Բոլորիս մտքերի մէջ թարմ են, Թէ ինչպէս նրանք Քրիստոսի և Մատթէոսի խրուելակները վառեցին Երևանի բուլվարում՝ կոսմոսիստական ամբարտի ունեցի տակ, թէ և այն էլ ենք յիշում, որ երբ ուժանդակեցին «մատթէոսական սուրբ քաղաքները», նրանք մատթէոսական կրօնամուլ խոստանի գլուխն անցած զնացին պարակական Հիւպատոսարան և «ամբողջ աշխարհի արաջ» բողոքեցին «անգլիական իմպէրիալիստներին» գործած «արբաղծութեան» դէմ: Յիշում ենք «կարմիր կնուսքներին» զուեւալը, Քրիստոսի ծննդեան տօնի տեղ կրօնամուլի «ծնունդի» հաստատումը: Նրանք եկեղեցիները վերածեցին ակումբներին ու պարագաւներին՝ խաչի փոխարէն եկեղեցու զմբէթի վրա կարմիր աստղ տնկեցին: Միտուր քահանայի միբուքը ամուրդի գրին, և Հայտնի տեղական ներկայացուցիչը 120 բ. գրահատեց... Մի խօսքով, «հարածային կարգով» պատերազմ յայտարարեց կրօնին և Աստծուն:

Ի՞նչ եղաւ Հետեանքն այս դօն — զիւրթութեան: Հետեանքն եղաւ այն, որ Ժողովրդի բոլոր խաւերը համակեցին հիւանդագին կրօնամուլութեամբ ու կապեցին եկեղեցուն ու կրօնական հաստատութիւններին:

— «Եթէ բոլշևիզմը կռիւ է յայտարարում մեր պայենական հաւատին,՝ ասում է ծերուկ զիւրպցին, պէ՛տք է հակառակել. պէ՛տք է սպառնալով մեր սուրբ հաւատը», և առանձին շերտանալովութեամբ դնում է եկեղեցի և համբուրում է խաչն ու տէրտէրի ալը:

— «Ես առանձին ոչք չեմ ունեցել դէպի եկեղեցին և կրօնը իմ հողուն չի խօսել բնաւ, ասում է բանուրը, բայց որովհետեւ բոլշևիզմը թշնամի է կրօնի, դրա համար ես չեմ կարող մնալ անաարբեր և դնում եմ եկեղեցի» Հէնց բոլշևիկներին ճաքեցնելու համար»:

— «Կրօնը, ի հարկէ, նախապաշարում է, բայց անհունօրէն հաճոյք եմ գգում, էրբ բոլշևիկները խախտառկաւ ու Ժողովրդի աչքին», ասում է մտաւորականը և դնում է եկեղեցի:

Կան և այնպիսիները, որոնց համար կրօնն ու եկեղեցին դարձել են իսկապէս հոգեկան մխիթարութիւն: Դառնացած ու հիասթափուած օւնայն աշխարհից՝ նրանք հանգիստ են որոնում մխտիկ ապրումներ մէջ:

Պատճառներն ու հիմնաւորումները տարբեր են, բայց Հետեանքը իննում է նոյնը — արտապահ ճեպաքերութիւն դէպի կրօնն ու եկեղեցին: Եւ մինչ դաշնակցական կառավարութեան օրով եկեղեցի յաճախում էին ծերունիներն ու պառաւները, ամենահանդիսաւոր տօներին անգամ ազօթողներ թիւր մի քանի պատենակից դէնք չէր անցնում, այժմ ամէն կիրակի եկեղեցիներին ներսն ու շրջափակը խռնում են հազարաւոր բազմութիւններ ու ժամասացութիւնն ու ծէսերը անցնում են արտասովոր շքով ու Ժողովրդականութեամբ: Այնպիսի բազմամարդ խաչը Չուր գցեցներ կամ ուխտագնացութիւններ, որնք կատարում են Հիմա, Հայ քաղաքներն ու զիւրերը վաղուց չեն ունեցել: Եկեղեցի գնար լայն դանակածների համար դարձել է մի տեսակ քաղաքական ցոյց խորհրդային իշխանութեան դէմ: Եւ ինչքան բոլշևիկները մաղձոս են դաւնում դէպի եկեղեցին, ինչքան խորհրդային իշխանութեան լուծը ծանրանում է, այնքան եկեղեցական ցոյցերը դառնում են յաճախակի ու տպաւորիչ:

Այս տեսակէտից առանձնապէս ուշադրաւ էր միւսուորհնութեան հանդէսը էջմիածնում :

Եւրաթիւնք առաջ բերանացի աղբիւրներից ժողովուրդը իրազէի դարձաւ, որ սեպտ. 26-ին տեղի պիտի ունենայ միւսուորհնութեան ծէսը : Բօլշեիկներն, ըստ իրենց սովորութեան, այդ առթիւ ահապէն իրարանցում առաջացրին . է՛լ ձմիպագային հակաեղափոխութիւն», է՛լ «հայ բուժփուլակայի դասեր», է՛լ «գիտանք կրօնական հակատում» : Ծանօթ ստորապ Աշոս Յովհաննիսեանը հնչեցրեց պայքարի շեփոըը : Նրան յաջողեց օպէրէտային կօմունիստ Է. Ազատեանը : Սրան յաջողեց հակակրօնական թռուցիկներէ տեղատարափը . պատերի վրա երևացին հակակրօն յայտարարութիւններ ու կարգախօսներ : Ասպարէզ հանեցրին բօլշեիկութիւն անող Բեհիկ վարչական ու «Մերունի վանականը» իրենց յաւուր պատշաճի հրատարակած գրքօյնկերով : Օղնութեան հասաւ և «Նէպօլ» . էջմիածին տանող ինքնաշարժերի տեղերի դնելը բարձրացեցին 1ր. 204 — 2ր. 504 — 3ր. : Մի խօսքով արևաց ամէն բան, օրպէսքի ժողովուրդը էջմիածին չգնայ :

Կարողացան անշարժութեան դատապարտել ժողովուրդը : Ս՛է : Այն, ինչ որ տեղի ունեցաւ էջմիածնում միւսուորհնութեան օրերին, վեր էր ամէն տեսակ ենթադրութիւններից : Ժողովուրդը ամէն կողմից թափեց էջմիածին : Ամբողջ Հայաստանը, ամբողջ Կովկասը և աւելի հեռու, Ռուսաստանի բոլոր ծայրերում սարդոլ Հայութեան ահապէն զանդամներ պղկեցին իրենց տեղերից ու խուժեցին էջմիածին : Ինքնաշարժ, կառք, ասյլ, Փուրգօն, ձի, էջ, երկաթուղի, հետիոտն — մարտիկ ամպպի պէս շարժեցին էջմիածին : Գայիս էին դիչըր ու ցերէկ : Գայիս էին ամբողջ շարաթ : Առեւտրն 50,000 մարդ հաւաքեց էջմիածին միւսուորհնութիւնը տեսնելու համար :

Հետաքրքրութեան համար, սեպտ. 26-ին, ես էլ գնացի էջմիածին : Մարդկային մի ծով բացեց իմ առջև . արեխ ու կօշիկ, գիւլական խայտարղես Հազուստ ու վերջին նորաձև արդ ու գարդ, տգէտ դիւղացի ու համալսարանի պրօֆէսոր, ծեր ու երիտասարդ — ամենքը կողք կողքի : Ե՛րբ են տեսել էջմիածնի պատերը այսքան ժողովուրդ և այսպիսի եռուղեռ : Աղմուկ, ժխոր . դուռնա ու պար, անհաշիւ մատաղ . . .

Երբ վհարանից դուրս եկաւ կաթուղիկոսը եկեղեցի գնացու համար, տիրեց համատարած ըտութիւն : Ու, յանկարծ, հայար բերաններից հնչեց . «Էլեցցէ՛ Հայոց կաթուղիկոսը» : Միւսուորհնութեան ժամին սաճարի ներսը, վանքի ընդարձակ բակը, դուրսը՝ հրապարակին ու փողոցներում ծով թաղմութիւնը այնպէս էր խուռած, որ անցնելու տեղ չկար :

էջմիածին էին եկել և բօլշեիկ պետերը հակակրօնական պրօպագանդ անելու համար : Է. Ազատեանն ու Գիւլիգօյսիզեանը ձևաբանի ննջարանում վիճարանական միտայդ էին նշանակել և վիճարանութեան էին հրաւիրել եկեղեցականներից մէկին : Վերջիններս համաձայնել էին, բայց պայման էին դրել, որ միտինդը ինի բացօղնայ : Կօմունիստները վախեցել էին բացօղնայ ժողովից, և ննջարանի միտինդում համարեա մարդ չեղաւ : Ձևաբանի բակում բօլշեիկները ձրի ցոյց

էին տալիս շարժապատկեր և ձեռնածուները զանազան խաղեր էին անում — նոյնպէս Հասարակութիւն չկար : Ժողովուրդը բոյկոտի էր ենթարկել կօմունիստներին :

Այսպիսով միւսուորհնութիւնը անցաւ իբրև համաժողովրդական հակաբօլշեիկանց ցոյց : Ներկայ ճարմութեան մեծ մասն, ի հարկէ, դէպի կրօնը անտարբեր վերաբերում ունեցող մարդիկ էին, բայց կրօնը նրանց համար քաղաքական դաշափարի արտայայտութեան մի միջոց է : Սակայն պէտք է արձանադրել և այն, որ այժմ յայն խաւերի Կէլկրօնական զգացմունքը շատ աւելի ուժեղ է, քան առաջ :

Մարդ ուղում է հարց տալ բօլշեիկներին . այս է՛ր ձեր ուղածը : Դուք ստացաք մի երկիր, ուր եկեղեցին այլևս ոչ մի հասարակական դեր չունէր և ժողովուրդը՝ անտարբեր դէպի կրօնը : Ձեր հիմար քաղաքականութեան վառեցիք ժողովրդի մէջ կրօնական մոլորանդութիւնը և եկեղեցին նորից դարձրիք հասարակական գործօն : Ա՛յս էր ձեր նպատակը : Եւ ի՛նչ տարբերութիւն ձեր և Գալիցիաների քաղաքականութեան միջև :

Այսպէ՛ս էք իրականացնում ձեր նշանաբանը . — Կրօնը թոյն է ժողովրդի համար . . .

Վ. ՄԱՐՄԱՐԵԱՆ



ԳԱՏԸ ՃԵՂՔԻՈՒՄ Է

6 սեպտ. Երևան

Որ ուսմկավար մամուլի ու նրանց ղեկավարների գլուխներում հասկացողութիւնների ու բարձրի զգաս և չփութ է տիրում, այդ վազուց է յայտնի : Յայտնի է նաև նրանց քաղաքացիական պարկեշտութեան և ազնութեան մասին ունեցած խայտարակ ըմբռնումը : Ռամկավար ուղեղերին անդաւանաւորէն ընկերակցում է քաղաքական արկիւնմանթ հոգեբանութիւնը — խոնարհելու ու ջծնել սժեղի, բանաւորի առաջ և քացի առա՛յ թոյլերին կամ իշխանութիւնից հեռացողին :

Այժմ էլ ուսմկավար պետերը հաւատարմութեամբ ծառայում են բօլշեիկներին : Ի վարձատրութիւն այդ ծառայութեան բօլշեիկները թոյլ տալին, որ յետ այսու նրանց թերթերը ազատ մուտք օւնենան խորհրդային սահմաններում : Այս ի հարկէ, չի նշանակում . որ իրար թիւերն էլ անգատ մուտք ունեն . այն թերթերը, որոնց մէջ թիւջառ մատ խօսքեր են լինում խորհրդային իշխանութեան դէմ, դրաքննութիւնը վախը է դնում և արգելում է ծախել : Այդպէս է արւում և Փարիզի «անկուսակցական» «Ներսան»-ի վերաբերմամբ, որի վերջին մի համարն, օրինակ, որտեղ կար Անդրանիկ նկարը՝ սուրբ Գր. Վարդանանին յանձնելիս, դրաււնց և վաճառքի չհասնեց :

Անարկայսօքն դատելով՝ ուսմկավար — բօլշեիկ թերթերի ընկերակցութիւնը նոր երևոյթ է մեր երկրում, ինչպէս նոր էր, երկու տարի առաջ, Կասեանի ու Կարկեանի կողք կողքի նստելը Հօլի համալսարանում, ուր Կասեանը ծափերով էր ընդունում «հայրենի բուրժուա»-յի խօսքերը : Ե՛նչ սրտատուչ եղբայրութիւն

«Համաշխարհային իմպերիալիզմի հակազան հոտուածի» և «Համաշխարհային յեղափոխութեան առաջապահ» միջև...

Մեզ հետաքրքրողը, սակայն, այս կէտը չէ: Տւեակ հարցում մեր ուշադրութիւնը զբաղեցնում է այն դրական հետեւանքը, որ կունենայ երկրէ ժողովուրդի համար ուսման վարձքի բերքը, այսպէս ասած, «չեղաւիղացիներ»: Բոլշևիկները եկել են այն եզրակացութեան, որ իրենց մենատիրութիւնը մամուլի աշխարհում անօրէ է աղբիւր հասարակութեան վրա և օգնութեան են կանչում ուսման վարձքը ու դրէնը, իբրև վկայ ու յարմարագոյն հաստատութիւն իրենց հակադասակցական պայքարին: Մակայն, հակառակ ուսման վարձքի կամակտարութեան և բոլշևիկներէ թազուն ծրագրերի՝ իրականութիւնն այս խնդրում էլ հակառակ հետեւանքներ է տալիս:

Արտասահմանից ստացող ուսման վարձքի բերքերի շուրջը, անկասկած, որոշ հետաքրքրութիւն նկատում է, բայց կոմունիստները չեն կարող չխոստովանել, որ ինչպէս, առհասարակ, հայաստան կոմունիստ թուրք բերքերը, այսպէս և ուսման վարձքները, կարգացում են այնքան և ա՛յն ժամանակ, երբ որևէ խօսք կայ, թէկողմ հայհոյանք, Հ. Յ. Դաշնակցութեան մասին: Այս հայհոյանքները նորից ու նորից հաստատում են, որ Դաշնակցութիւնը շարունակում է մնալ գորաւոր ու դործօն:

Աւելին, ընթերցողները ուսման վարձքի բերքերից կարողանում են իրագիծ լինել զաղութահայ կեանքին և մէկ կողմ նետելով արած մեկնաբանութիւնները՝ դադարաւ կազմել զաղութահայ հասարակական հոսանքների փոխարարութեան և Դաշնակցութեան ունեցած ազդեցութեան մասին: Իսկ եթէ այս բոլորի վրա աւելցանք և բոլշևիկ բերքերում յամայն առաջ բերող կտորները դաշնակցական մամուլից, ապա պատկերը կը լինի կատարեալ:

Բոլշևիկները ուսման վարձքի մամուլի առջև բանալով Հայաստանի դուները՝ յոյս ունէին մի նոր դաշնակից գտնել Դաշնակցութեան դէմ: Դուրս եկաւ հակառակը. Դաշնակցութիւնն է օգտուում այդ արտօնութիւնից: Մեզ մտով է ողջունել և ցանկանալ, որ աւելի լայն բացի ա՛յն ճեղքաւանդը, որից կարողանար ներս մտնել դրսի ազատ խօսքը: Անգամ ուսման վարձքի «ազատ» խօսքը ողջունելի է մեր խաւար դւ հեղձուցիչ մթնոլորտում:

Վ. ՄԱՐՄԱՐԵԱՆ

«ՆՈՐ ԿՈՆՏԱՆՆԱԿ»

16 սեպտ. Երևան

Կոմունիստները նոր կենցաղ են ստեղծում Հայաստանում: Այդ նոր կենցաղի արդիւնք է ահաւոր չափերի հասնող «սրբիկայութիւնը», զիւղերում և քաղաքներում: Նայն այդ կենցաղի հետեւանք է բարբերի անասանման անկումը և կոմունիստների ամենքի աչքի առջև կատարած շնորհիւնները: Իրենք միայն մի քանի նմոշ:

Ահա Հայաստանի «արդիւն գրող» Եղիշ Զարէն- digitised by

ցը. նա իրեն պահում է փողոցային սրբիկայից էլ վատ: Քանի - քանի անգամներ փողոցում կամ պարտէզում բռնել է իր հաւանած կանանց ու աղլիկներին և գորով համբուրել: Քանի - քանի հրապարակային ապուկներ ստացել: Այսպէս, մի քանի շաբաթ առաջ նա մօտենում է Ռոստովից եկած դերասանական խմբի անդամուհիներին օր. Միխայիլանին և առաջարկում է բաւարարութիւն տալ իր անասնական կրքին. պատասխանը լինում է շատաշուն ապուկի օրիորդի կողմից:

Վերջերս էլ Զարէնցը, որն է դէպ, ամուսնացած է և դաւակ էլ ունի, ընկել էր 17 տարեկան մի դպրոցական պարկէշտ օրիորդի՝ Այվազեանի յետեւից և առաջարկում է իրեն «կին լինել»: Հակառակ օրիորդի վրդովումի ու մերժումի՝ հետապնդումը շարունակուում է: Եւ սեպտ. 5-ին, երբ օրիորդը հօր հետ գրօնում էր բուլվարում, մօտենում է նրան և առաջարկում է հեռը գրօնել: Աղջիկը մերժում է: Այն ժամանակ Զարէնցը քաշում է ատրճանակը և երկու ծանր վէրք է հասցնում օրիորդին, որը արիւնւալ դետին է ընկնում: Վրա հետեւում միլիցիոնէրները ոճրալործին ձերբակալելու համար, բայց Զարէնցը բոլորում է, որ իրեն ձեռք չտան, ինքը Զարէնցն է, կենդանորդի մահում, այլապէս նրանց վրա էլ կը կրակէ: Եւ գնում ներկայանում է ոստիկանատուն, բայց միլիցիան նրան ազատ է արձակում: Միայն ժողովրդական Գուման գգնութեան հետեւանքով Զարէնցը յարողը օրը բանտարկուում է:

Զարէնցը «ժողովրդական բանաստեղծ» է, Հայկենտգործկոմի անդամ, «Սորհրդային Հայաստան»-ի խմբագրական կաբի մեղքում և հայ կոմունիստների պարծանքը...»)

Ահա և մի ուրիշը, մի աստիճանով աւելի ցած կանգնած կոմունիստ, Հայքիւղիօսի վարչութեան նախագահ Մանուկ Ղազարեանը, 45 - 50 տարեկան մարդ: Մի օր նա գնում է իր ընկերով տունը և օտուելով ընկերով կնոջ մենակութիւնից, յարձակուում է վրան, թաշկինակով իջկում բերանը, երկու անգամ բռնաբարում ու դուրս գալիս: Խնդհ կինը՝ դէպքից ազդւած՝ պատահածի մասին գրում է ամուսնուն և ինքը թոյն ընդունում: Երբ ամուսինը վերադառնում է տուն և տեղեկանում իրողութեան, կնոջ նմակը ասանում դեմն է կուսակցութեան կոմիտէի առջև: Խնդիրը վերջանում է նրանով, որ Ղազարեանին տեղափոխում են ուրիշ տեղ պաշտօնով:

Մի երրորդ օրինակ. Ախալայի Լէնինեան կոմիտէի հրահանգիչը և մի քանի կոմունիստներ հեռապնդում են մի քանի զիւղացի աղլիկներին և երբ նրանք լեռն են գնում բանջար հաւաքելու, յարձակուում են նրանց վրա, բռնում են մէկին և երեք օր իրենց մօտ պահելուց և հերթով լիկելուց յետոյ՝ բաց են թողնում...:

Նման դէպքերը բազմաթիւ են: Նրանց մի մասը արձանագրում է մամուլում, բայց մեծ մասը մասնուում է լուրիւն: Կուսակցական անդամները,

\*) Ինչպէս յայտնի է, Գեորգեյն դատարանը Զարէնցին դատապարտեց 8 տարաւայ բանտարկութեան, բայց յետոյ պատիժը իջեցրեց 3 տարաւայ:

պիծեցեալական կազմակերպութիւնները անբարոյակա-  
նութեան վայրեր են դարձել: Անբարոյականութիւնը  
ոչ միայն չի պատժուում, այլև քաջալերում է վերեւեց:  
Կարող էք երևակայել, թէ ինչպէս է դաստիարակուած  
մեր նոր սերունդը...

ՎԱՀԱԳ

«ՅՆԱՅՈՂԱԿԱՆ ՌԷՎՈՒՄ»  
\* Ն. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ\* )

Երևան, 24 յունիսի

Մօսկուայից եկաւ մի հրաման — պայքար  
չուսյալութեան դէմ:

Եւ ինչպէս միշտ, այս դէպքում էլ Համայն  
խորհրդային աշխարհում, ուրեմն և Հայաստանում,  
բարձրացաւ անասելի աղմուկ ու հրայն — հրոյ:  
Մամուլն ու ժողովները ողողեցին յօգաճանքով ու  
ճառերով «Յնայողական ուժի միջ» հրաշալիքների մա-  
սին:

Հայ բօլշեիկները, մասնաւնդ, առանձին եռանդ  
ցուցանեցին և իրենց չլու կամակատարութեամբ մի  
աւելորդ անգամ ևս ցոյց տուին, թէ Մօսկուայի խոնարհ  
ծառանքն են:

«Յնայողական ուժի միջ» բօլշեիկներն կեանքում  
այն խղճուկ դեղատոմսերով մէկն է, որը, իբր թէ,  
պիտի բժշկէ խորհրդային տնտեսութեան հիւժճած մար-  
մինը: Մեռնելու դատապարտուած հիւանդի կեանքը մի  
քիչ երկարացնելու միջոց է նա, մի ուշացած փորձ  
փրկելու «Կոմունիստական պետութեան» ճարճատուղ  
չինքը: Մաշելով բոլոր ճատնի բուրժուականները՝ դռները,  
բանկիրները և իմպերիալիստները շնորհալու և չկարողա-  
նալով դրամ ստանալ, բօլշեիկներն ապակինը ևն այժմ  
«Յնայողական ուժի միջ», բայց այս ասպարէզում էլ  
աւելի շատ խօսքն ու թողութիւն են իշխում, քան դրժը:

Անցնենք փաստերի: Դրական ինչ բան է արւած  
Յորհրդ. Հայաստանում «Յնայողական ուժի միջ» ամիս-  
ներ տեղի աղմուկ — ժխորի ընթացքում: Ո՛չ մի բան:

Առնենք, առաջին հերթին, խորհրդային լայն ու  
խճճաւած հիմնարկութիւնների և պաշտօնութեան կըր-  
ճատման և կանոնադրման հարցը: Յորհրդային պե-  
տական մեքենան մի վիթխարի բան է՝ անհաշիւ պաշ-  
տօնեաներով. մասնաւնդ խոշոր է «պատասխանատու  
պաշտօնեաների» թիւը, որոնք ստանում են ահռելի ու-  
ճիկներ: Ամէն կուսակցական թեկնածու է լաւագոյն  
պաշտօնի, և ի՛նչ քրէական տրիպտ ասես չկան խոր-  
հրդային պաշտօնութեան շարքերում: Կարիք կայ թէ  
ոչ, Կոմունիստի պաշտօնը միշտ ապահովուած է և ա-  
ռաջնակարգ ուճիկով: «Յնայողական ուժի միջ» վերջ  
տակ այս դրութեան: Ո՛չ, իհարկէ է՝ մի «պատաս-  
խանատու» պաշտօն չիքճառեց, ո՛չ մի կոմունիստ  
պաշտօնից չհեռացեց, ո՛չ սբի ուճիկը չպակասացեց:  
Ընդհակառակը, տեղի ունեցան ուճիկ նոր յաւելումներ:  
Անգամ, «Յորհրդային Հայաստան» պաշտօնաթիւրթը  
ստիպուած եղաւ մատնանշել այս ախտը:

«Յնայողական ուժի միջ» պայքարի առաջին օրից

սկսած ո՛չ մի լուրջ, հիմնական բարեփոխութիւն չմը-  
ցուցեց պետական — վարչական մեքենայի մէջ: Դործից  
հետացեցին միայն մի շարք ստորադաս պաշտօնեա-  
ներ — դործավարներ, մեքենայի բնիկ, ցրիչներ, բան-  
ւորներ, որոնց հետացելը առանձին ազդեցութիւն չի  
անի պետական ծախսերի վրա, բայց աւելի ևս կը նը-  
պաստէ երկրի աղքատացման և կարիքի ծաւալման: Իսկ  
չաղ-չաղ ուճիկներ ստացող անթիւ և անհամար պորտ-  
Ֆէլաւորների բանակը շարունակում է մնալ իր աթոռ-  
ների վրա և խճուկ պետական հասոյթները: Եւ Յորհդ.  
Հայաստանի վարիչները հազիւ թէ կը համարձակեն էլ  
նրանց ձեռք տալ. ի՛նչպէս կարելի է դժգոհութիւն  
պատճառել կոմունիստ արխտապետային՝ պորտա-  
բոյժ անցկատակների այդ զարբելի վրճարակին: Ի՛նչ-  
պէս կարելի է գրկել նրանց անհաշիւ քէֆերից ու խրախ-  
ճանքներից, աթէնական գիշերներից ու լուկուլլոսեան  
խնճոյքներից...

Հայաստանցիները համար այլևս պաշտօնից չեն  
կոմունիստական քէֆերն ու գինարբուքները: Եարտի  
չի անցնում, որ կոմունիստ պարագլուխները, կանանց  
հետ, աւստօօրիկներով, գիշերային գրօսանքներ չկա-  
տարեն դէպի այս կամ այն սօվխօլը (խորհրդային  
տնտեսութիւնը) և մինչև առաւօտ շթաւալեն դեխո-  
թեան և արքեցողութեան մէջ՝ սպառելով ու փշացնե-  
լով պետական մթերքը, պտուղները, բոյսերն ու տուն-  
կերը: Ա՛յս է «Յնայողական ուժի միջ»:

Հապա Կոմունիստական կուսակցութիւնը իր ան-  
հաշիւ «ապարտաներով» և աշխատակիցներով, որոնք  
բոլորն էլ պետական դրամներով են պահուած: Կրճատե-  
ւոց՝ դոնէ մէկը կենտրոնների ու շրջանների օրգաննե-  
րից և աշխատակիցների հսկայական ցանցը — այդ ցե-  
կանքը, եկանքը, ազխպարօպները, շրջուներն ու  
ըլլեները, որոնցից իւրաքանչիւրը իր հերթին, ունի  
բարձրագիւր քաճիկներ, Ենթարժեքներ, ճիւղեր, սէկ-  
ցիաներ, իսկ որոնք էլ, իրենց հերթին, աշխատակից-  
ների լէգիօններ: Պետութեան մէջ մի պետութիւն է  
Կոմկուսը, որին «Յնայողական ուժի միջ», ի հարկէ, չի  
կարող զիպչել. նրա վարիչները ստանում են պետա-  
կան դանձից նախարարական ուճիկներ և իսկական իշ-  
խանութիւնն են երկրում:

Իսկ կոմսօմը — նա էլ պակաս ահռելի խճոռոյ  
չէ, նա էլ ունի անթիւ մարմիններ ու հիմնարկութիւն-  
ներ, բազմամարդ պաշտօնութիւն, ակումբներ, հրա-  
տարակութիւններ, որոնք բոլորն էլ ապրում են պետա-  
կան դրամով: Սրանց էլ «Յնայողական ուժի միջ» չըօ-  
չպեցեց:

Հապա Ձէկան, որ 5 տարի է ճիւղից պէս թառել  
է հայ ժողովրդի կրճքին ու ծծում է նրա արիւնը,  
ուստում է երկրի տնտեսութեան կէտը: Եւ ունի յայտնի  
աշխատակիցների մի հսկայական բանակ, որոնք ու-  
ճիկները բոլոր պաշտօնեաներից աւելի բարձր են: Սը-  
րանց զուգընթաց կան անհաշիւ դաղտնի աշխատակից-  
ներ—դորձակալներ ու զաղտնի ստտիկաններ, որոնք  
ստանում են շող վարձատրութիւն, իսկ յաջող դործի  
դէպքում և արտադրող նէշներ: Նրանք փողոցներում  
թէ տններում, հիմնարկութիւններում և թատրոններում  
ու կինոներում քաղաքացիների անբաժան սուււրներն  
են, որ խոտլում են ամենքի հոգեկան հանգիստը:  
Նրանց համար պահուած են յատուկ դաղտնի դպրոց-

\*) Ուշացած քանապարհիմ:

ներ, ուր նրանք մարզուս են շկայական արևատի մէջ: Եւ այդ բոլորի համար պետութիւնը նրանց վրա ծախսում է խոշոր գումարներ, կանանց ու երեխաների բերանից խլում է նրանց և կերակրում: Վնասյողական ուժովը, ինչ խօսք, Ձէկային էլ չի վերաբերում:

Իսկ իւրացուններն ու վաճառումները, սխտանատիկ գողութիւնները, որոնք կատարուում են պատասխանատու կոմունիստներին և սրանց պնակալիզներին կողմից... մի քանի օրինակ միայն:

Մաքսատան վարիչ 22 տարեկան մի երիտասարդ կոմունիստ ընկ. Իէնիկը չբաւականանալով պատասխանատու չհմնարկան ոտնկոմի, կատարում է պարբերական իւրացումներ, վասնանց է խոշոր գումարներ գիշերային շտալ ընթերցների, ամառանոցի ցօի կեանքի վրա: Հայկեանտի հաշիւն փոխաբերաբար ստանում է 3,500ր.՝ տալով համապատասխան մուրհակ, բայց գումարը չէ մտցնում հիմնարկութեան մատաններին մէջ և վատնում է: Ապա, պարբերաբար իւրացնում է 100-ով, 200-ով, 500-ով, ընդամենը 5000ր.: Իր կոմունիստի հանգամանքը միջոց է տալիս նրան խարդախելու, գողանալու և միշտ անպատիժ մնալու, մինչև որ քարեր էլ սկսում են բողոքել, և շարքադատութիւնը ուշադրութիւն է դարձնում դրա վրա:

Մի ուրիշը՝ Սօցբաժնի վարիչ կոմունիստ Փօլեանը, հին կուսակցական, տեական գեղձարարութեամբ վատնում է պետական գումարներից 1,500ր. այն էլ ինչ դրամ — աղքատներին, անկարներին, հաշմանդամներին յատկապես միջոցներին: Կպատ ստացողներին դրամ բաժանելիս ստացականներին տեսքի արժատում գրում է աւելի մեծ գումարներ, իսկ կտրուում՝ հասնելիք և տարբերութիւնը զրգանն է դնում: Ի պիւրճոյ, գեղծուում բացում է, և խորհրդային «արքադատութիւնը» Փօլեանին ապատ է արձակում՝ նկատի առնելով նրա կոմունիստական շատութիւնը:

Մի այլ դէպք. Մօլլի քարտուղար Մ. Յովհաննիսեանը անպարտ շտալ ծախսեր ու զէֆեր է անում: Պարզում է, որ միջակալային յեղափոխականներին օգնող կոմիտէի « յեղափոխական » քարտուղարը իւրացրել և վատնել է այդ Փօլեանից խոշոր գումարներ, որոնցից միայն 1200 ր. հարցն է պարզում: Եւ խորհրդային «արքադատութիւնը» ձերբակալում, մի օր պահում և ապատ է արձակում նրան...

Ո՛ր մէկը թւել՝ զաւարճողի մի աշխատակցի կատարած գեղձները, պետութիւնը պաշտօնեայի գողութիւնը, կօպարտութիւնների անհատնում վատնումները — բազմաթիւ են «պատասխանատու» ներքին տնտեսական ասպարէզում կատարած աւազակութիւնները: Ճիշտ է, բուլեիկեան խօսքն ու մամուլը պայքարում են նման երեւոյթների դէմ, սակայն, այլ է խօսքը, այլ է դորձը: Բուլեիկեան «արքադատութիւնը», «յեղափոխական խիղճն» ու «սօցիալիստական» իրաւաբխտակցութիւնը՝ հասարակ մահկանացուների համար է, պատասխանատուները օրհնեցից էլ, խղճից էլ վեր են: Արտասահմանեան թերթը կարգալու համար մարդիկ ամիսներով բանտերում են պահւում, իսկ օրը ցերեկով հազարներ վատնող, գող ու աւազակ պատասխանատու կոմունիստները ապատ — համարձակ ման են կալիս և ծաղրում են օրինքն էլ, խիղճն էլ...

Ահա այս էլ մեր «նասյողական ուժովը»՝ այլանպակ ու փտած, ինչպէս ինքը՝ բուլեիկեան ուժովը:

ԱՐԹՈՒՆ



Ինչպիսիք են ԸՆՏՐՈՒՄ\*

Վաղարշապատ, Յուլիս

Լէնդ Թէմուրը իր մատանու վրա փորագրել էր տեղ «արդարութիւն և ճշմարտութիւն» բառերը, որպէսզի միշտ յիշէ, որ հարկաւոր է այդ ուղղութեամբ զործել: Միտածանակ Լէնդ Թէմուրի սիրած խօսքն էր՝ «Արդարութիւնը սրի ծայրին է»: Եւ աւարկան բռնապետը միշտ նայում էր մատանու արձանագրութեան, բայց և միշտ հետևում էր վերջին խօսքի խրատին: Այսպէս են և բուլեիկեները. Լէնդ Թէմուրի մատանին նրանց մամուլն է, երկրորդ խօսքը՝ նրանց զործը:

Պորհրդային մամուլին հետևող անտեղիակ մէկը կարող է կարծել, որ, օրինակ, Պորհրդ. Հայաստանի վարիչները հրեշտակներ են, մարդկութեան բարեքէ համար սողորած զազափարական հերոսներ, որ միշտ աշխատում են ժողովրդի համար, խաղաղութիւն են բերել հայ բազմալարքար դիւղացուն և քաղաքացուն, իսկ բանւորը՝ մեղք ու կարգի մէջ է լող տալիս: Երբ կարդում ես թերթերի յօդուածները ընտրութիւնների մասին, մտածում ես՝ «այս ինչ բախտաւոր երկիր է, ինչ երջանիկ ժողովուրդ»... Իսկ զործը...

Անցեալները Երևանից անցնում էի Աշտարակ և երկու օրով մնացի Վաղարշապատում: Կատարում էին քաղաքային խորհրդի ընտրութիւնները՝ ըստ Թաղերի: Եղայ մի քանի Թաղերի միացեալ ընտրական ժողովում՝ նախկին ևոր Վեհաբանի շէնքի մէջը, որը Վաղարշապատի զաւարճողը ծախել է 60,000 բուրջով գօրանոցի համար: Գաղաքացիները գիտակից մասից շատերը բացակայ էին: Գերակշռող տեղ էին բռնում 15-16 տարեկան պատանիներ-պատկոմներ ու կոմսոմոններ:

Բացում է վարագոյրը: Բեմի վրա, իր թիկնապահներով շրջապատւած, նստած է զաւարճողի նախագահ Հրանտ Ղարիբեանը (Երևանի նախկին դուքանաչի, այժմ կոմկուսի անդամաւոր զործիչ, որը չի կարողանում ապրել իր աշխնակցական հայեացքներ ունեցող) կնոջ հետ, նրան պահում է Երևանում, իսկ ինքը զէֆ է անում իրեն ստորադաս կին պաշտօնեաների հետ): Նոր թիկնապահների մէջ ստանձնապէս աչքի է ընկնում Ձէկայի «արքադատ» Արշակը, որը յուրտեսական սպառնալիքի նման ցցւած է ընտրական զաւարճում:

Ընտրութեան անցնելուց առաջ նախագահ Ղարիբեանը մի երկար, անհատ ու խիստ ձանձրալի ճառ է արտասանում խորհրդային իշխանութեան և կոմունիստական կուսակցութեան բարեմասնութիւնների մա-

\* ) Ուշացած նամակարկին:

Խմբ.

սին: Ժողովականներէ դէմքին խաղում է հեղինական խորամանկ Ժպիտը: Շատերը յորանհում են ձանձրացած... Թիկնապահները անցնում են հասարակութեան շարքերը՝ հսկելու, խրեռելու նպատակով:

Քաղաքային խորհրդի ընտրելիք 25 անդամի համար առաջարկուած են մի շարք ցուցակներ: Կոմունիստներէի նախօրօք կարգած ցուցակը դուրս է գալիս նախաբանի դրակային: Նոյն իսկ նեղութիւնն է՛ր քաշել մէկին տալ, որ նա առաջարկէ... Եւ նախած, որ նրանից առաջ տրած էին մի քանի ցուցակներ, կոմունիստներինը յայտարարուած է առաջին ցուցակ: Կարդացուած է այդ ցուցակը. դաւադրածի մի նախապահ, դաւկոմի ու կոմրըիլի քարտուղար, Ֆինրամի մի քանի, կին բաժնի վարիչ, լուսարժանի վարիչ, չէկայի լիազօրմի խօսքով բոլոր «չառախախնամու» ձեռքը, և սրանց կողքին մի քանի մշակներ և մի լասցարարուհի:

«Ընկեր՝ նախաբան, այդ ցուցակում ո՛չ մի քաղաքացի չկայ», լռուած է մի վախկոտ ձայն դահլիճի միջոց: «Այդ ի՞նչ տեսակ քաղաքային խորհուրդ կը լինի», աւելացնում է մէկ ուրիշը: «Այդ ո՞վքեր են այդ տիրացուները, ապա թո՛ղ մի վեր կենան՝ տեսնեն», դուռն է Դարիբանսը, հրամայում է դաւմիլպետ Արարատին «ճանաչել» այդ կարգը խանգարողներին և ջղայնացած՝ շարունակում է. «Թողէ՛ք ձեր մէջը նախական, տիրացուական, բուրժուական, շարժական, հին, վարդապետական հասկացողութիւնները: Սա էլ իս էն սրիկայ մազգէրիստ դաշնակցականներն ու ժողովրդականներէի ժամանակը չէ... Այն տիրացուներն ու կուլակները, ձեր ժողովը խանգարող հակախղափրիականները պէտք է դիտանան, որ այստեղ է չէկայի լիազօրը...»

Սպառնալիքը կտրուկ է: Տիրում է ընդհանուր լուռութիւն:

Կարգացում են միւս ցուցակներն էլ. մէկի մէջ բացի կոմունիստներէի անուններից կային և մի շարք անկուսակցական քաղաքացիներէի անուններ, իսկ միտա՛ ջաղաքացի Յովհաննէս Զաքարեանի ներկայացրած, ցուցակի մէջ ո՛չ մի կոմունիստի անուն չէր յիշուած: Դարիբանսն ու իր համհարգները աչքերը չտուծ են այդ անյուր յանգանութեան հանդէպ, և Դարիբանսը կաթնածախարի նման քլաւում է. «Այդ ո՞վ է համարձակել տալ մի ցուցակ, որի մէջ ո՛չ մի կոմունիստի անուն չկայ: Ուրեմն, զուգ կրողում էք երկիրն ու քաղաքները կառավարել առանց կոմունիստներէի՞... Ախ, դուք, տիրացուներ, վարդապետներ, դաշնակ-մազգէրիստներ, հակախղափրիական սրիկայներ... «Յորհուրդներ առանց կոմունիստներէի», կանչում է գաւկոմի քարտուղար Շապուհը հեղինակով...»

Այս հայտոյանքներից յետոյ Դարիբանսն առաջարկում է, որ ցուցակ առաջարկողները պաշտպանեն իրենց թեկնածուներին: Սղած սպառնալիքից յետոյ ո՞վ է դիմից ձեռք առել, որ խօսի: Դահլիճում սաւառնում էր լուռութիւնն ու սարսափը: Դարիբանսն սկսեց յոխարտալ:

«Հը՛, ի՞նչ էք լռել՝ այն մարդիկ, որոնք համարձակուած են ապա այնպիսի ցուցակ, որի մէջ ոչ մի կոմունիստ չկայ, թո՛ղ քաշուցիւնն ունենան պաշտպանելու իրենց թեկնածուներին»:

Քիտող չեղաւ:

«Դէ՛հ, որ այդպէս է, վրա բերեց Դարիբանսը, այս ցուցակները չեն ընդունուած, և ես կարգում եմ առաջին ցուցակը: Իսկ դու, ընկեր Արարատ, երեւի կը պաշտպանես առաջարկած թեկնածուներին...»

Եւ նա սկսեց կարդալ: Ընկ. Արարատը ծանօթութիւններ էր տալիս և զովասանքներ էր անում ամէն մի թեկնածուի համար: Դահլիճում տիրում էր խուլ ու զրպաւած մոմոտը...»

Ձեկայի լիազօր Արշակի անունը կարդալիս՝ Արարատը հետեւեալ խօսքերով պաշտպանեց. «Դէ՛, նա էլ պէտք է ընտրի, որպէսզի ժողովներում հոկախորհրդային բաներ լինելուց՝ շարիքը արձատի մէջ չիղղիք»:

Իայց այս սպառնալիքներն ու զովասանքներն էլ չօգնեցին: Երբ անցան քեչարկութեան, կոմունիստ թեկնածուները մէկիւր-մէկիւր սեւացան. քաղաքացիները ձայն չտուին:

Ստեղծեց չարագանց անհամ դրութիւն: Դարիբանսի զարդրելը ստե՛ման շուտէր: Նա հրամայեց նորից քեչարկել և մտանքի համարելը յանձնեց մի յայտնի գրպանահաստ կոմսոմոլի: Սկսուած էր խղիղատակութեան ամենագոհիկ մտաւ. 25 ձայն ստացողին համարում էին 189 ձայն և բռնի անցկացնում: Խնդիրը պարզ էր. քարն էլ իրենց ձեռքներն էր, սրպոսն էլ...»

Եւ կոմունիստների ցուցակը ամբողջութեամբ «անցաւ»:

Հիւս կարգացէք բաշխեցիւն թերթերը. ի՛նչ վարդապոյն գոյնրով են նկարագրում այդ ընտրութիւնները: Կառարեալ ժողովրդապետութիւն, կատարեալ յաղթանակ. վարդաբաշխողին կոմունիստներէի արեւովն երբուում և պատրաստ է իր կեանքը գոհել խորհրդային իշխանութեան համար:

ԱԶԳՈՒՆԻ



«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԳՐԱՆՆ Է՞»

.....Երևան

Հայաստանի համայնավար «խորեք»ները մի ամբողջ հնգամեակ, առանց մի վարկիկան բաց թողնելու, մերթ Դաշնակցութիւնը մեռած յայտարարեցին ու որպէս ճարտասաւոր Ժառանգորդներ»ի հայտոյախառն դամբանականներ հիւսեցին և մերթ էլ մեռելաթաղի նոյն բերաններով պայքարեցին նրա դէմ Ժառանգող իրենց իսկ ասանները և անկոսակցարար տուրք տուին այն իրողութեանը թէ Դաշնակցութիւնը այնքան զոյտութիւն ունի՝ որքան հայութիւնը առհասարակ: Իեմի վրա՛ հրապարակախօսութեամբ ու մամուլի մէջ «հրապարակագրութեան» նրանք շարունակեցին այս ուղին: Այս այսպէս լինելով հանդերձ, ինչպէս ընդունուած կարգն է, պոխի խոստովանել որ միայն «Չէկան» էր, որ ինքնիրեն այսպիսի արգահատելի երկութեան առջև չէրաւ ու սկզբից և եթ հետևողական եղաւ իր քաղաքականութեան մէջ, ընդունելով Դաշնակցութեան անժխտելի զոյտութեան սպառնական միատուր, սա էլ կերբեկ նրա համար, որ նա թղթի և գրչի գէնքերով չէ տիրում գործել:

Եւ Զարեհի դասախօսութեանն եմ (իս դի՛տէք, Զարեհը մեզանում կարևոր անձնաւորութիւն է):

\*) Ուշացած նամակարկին: A.R.A.R.®



Նիւթն է «Պրոլետարական գրականութեան ուղիները»: Ի՞նչ խօսք որ նիւթը մոռացութեան է մատուած և երկու ժամայ ճամբարտաութիւնը բոլորովին այլ հարցեր է շօշափում: Իսկ որ «Պրոլետարական գրականութիւն» չկայ, Ի հարկէ չդոյ բանը ուղիներ էլ չի ունենում: Բայց անցնե՛նք: Ըստ երևոյթին, Հայաստանում գրչակ թափթփուքները բաժանել են երկու անհաշտ խմբակներ: Ասում ենք՝ ըստ երևոյթին, որովհետև կարծում ենք որ «վարչականօրէն» նրանց դիրքութեամբ կը կարողանան հաստեցնել: Առաջինը կոչուում է «Հայաստանի պրոլետ. գրողների միութիւն», սա համառուական երևոյթի հայկական արտայայտութիւնն է ու կրում է «հոկտեմբեր» մականունը, իսկ երկրորդը կոչուում է Հայաստանի պրոլետ. գրողների «Նոյեմբեր» խմբակ ու գտնուում է Չարենցի դեկաւորութեան տակ:

Տեսնում էք ի՞նչպէս համայնավարական արամախոհութեան (դիալեկտիկա) օրէնքները դործադրուում են Հայաստանում: 1921-ի Երեք\*) կարճատև «Երկր»-ից յետոյ (Թէյզ), ծնունդ առաւ այս «հոկտեմբեր»-եան խմբակը (սինկէզ): Չարենցի դասախօսութիւնը ի՞նք ունենալով կոմ. կուսակցութեան 13-րդ համագումարի գրականութեան մասին հանած վերջին բանօճակը՝ դարձաւ այս երկու խմբակների բաղիման և խեղկատակութեան մի հետաքրքիր տեսարան՝ ուր հանդիսականները ականատես եղան այն ողբալի անհատապաշտութեան և պատճառաւորութեան, որ դարձեալ է ու դարձում է «Հոկտ. Յեզ. Մեծ կաթսայում»: Կուսակցութեան համադուժարի բանաձևը՝ հաշի առնելով այն ամբողջութիւնն ու ամայութիւնը, որ տիրում է դեղեցիկ գրականութեան մարդում, Ի հարկէ, ուսական սահմաններում, ասում է, որ անհրաժեշտ չի համարում այլևս գրականութիւնը ենթարկել «Պրոլետ. դիկտատուրայ»-ի անմիջական ազդեցութեանը, գտնում է, որ այն պիտի ազատել բանւորական տիրապետութիւնից ու թոյլ տալ, որ զարգանայ ազատ մրցումը, այ՛ պիտով հնարաւոր դարձնելով որ անկուսակցական կամ մանր քաղցրների գրողները՝ բերեն իրենց լուսնն ու հետզհետէ «զտակով» վնասակար մտայնութիւններից պատուանդան կազմեն «աղմուկաւորող» «պրոլետարական» գրականութեան: Սրանք կոչուում են «ուղեկից»-ներ: Այս բանաձևին հակառակ կայ մի այլ բանաձև, որ պատկանում է Ռուսաստանի Պրոլետ. գրողների միութեան: Սա ազդարարում է, որ ազատ մրցումը ինչպէս տնտեսական և քաղաքական՝ այնպէս էլ գրական ասպարեզում կը խախտի «Պրոլետ. դիկտատուրայ»-ի ամբողջականութիւնը: Ազատ մրցման դէպքում կարող է պատահել, որ մանր — քաղցրներիկան մտայնութիւնն ու զաղափարաբանութիւնը կարճ ժամանակայ ընթացքում դառնայ տիրող հոսանք, մանա-

ւանք որ պրոլետ. գրողների համեմատաբար անկազմակերպ ու նախնական այս շրջանին» ուղեկիցները ընդհանրապէս վարպետ գրիչ ունեն ու պատուանդան իրենց աշխատանքներին անցնալիս հարուստ գրականութիւնը:

Չարենցի ու իր «Նոյեմբեր»-ը կանգնած են ազատ մրցման գետնի վրա, որ կուսակցութեան պաշտօնական տեսակէտն է, իսկ Հայաստանի պրոլետ. գրողները (Արով, Վշտունի և այլ ոչնչութիւններ) պաշտպանում են հակառակ տեսակէտը ու ուզում են շարունակել գրականութեան մէջ «էկզիտ»-ի իրենց դերը: Հայաստանի Կոմկուսի «դեկաւորներին» էլ բաժանած են երկու շէր: Չարենցը որդեգրել է իր «Նոյեմբեր»-ով Ա. Կարինեանից և Ա. Յովհաննիսեանից, իսկ «Հոկտեմբեր»-ը ուրիշներից: Եւ ահա «Հոկտեմբեր» թոհուրոհից ու մի շարք ծանր վիերաւորներինց յետոյ բեմ է դալիս Ա. Կարինեանը, որ շափազանց վրդոված ասում է ի միջի այլոց հետեանալը. «Ընկերները մի շարք տարրական խնդիրներ այնպէսի կոպիտ բռնաբարման ենթարկեցին, որ անհրաժեշտ են մի շարք լուսաբանութիւններ: Յամառ մոռացում է, որ մենք ձգտում ենք դառնալ համաժողովրդական պետութիւն, հետևաբար նրանք, որ պաշտպանում են բացառապէս դասակարգային տեսակէտ, հակասում են խօսքով պրոլետարիատի իրական շահերին ու մեր պետականութեան վերելքին: Ո՛վ կուսակցական բանաձևին դէմ է՝ նրան պիտի համարել սոսկ հակայեղափոխական ու ըստ այսմ... պատմել: Դո՛ւ՛ք, Արովներ, ձեր քարոզներով ուզում է՛ք որ գրական հրապարակը ընդմիշտ ամայի: Ձեր դատարկ բառայնագիրը... դը՛ւ՛ք, ողորմիլիներ, ձեր այդ ոչնչութիւններով պիտի կուէ՛ք Համաստեղների, Շակիների դէմ. մեմէ չեմք կարող արանալ հին գրականութիւնը, դա կը լինի ամուսնու յիմարութիւն: Խոստովանում եմ, որ Արովների կողքին կան տաղանդաւոր տղայք էլ, նրանց խորհուրդ եմ տալիս (հասկանալ, զլուռացնում եմ), որ քանի ուշ չէ, ձեռք քաշեն «ձախութեան հիւանդութիւններ», եթէ չեն ուզում, որ իրենց ստեղծել էլ կարեն, ինչպէս Արովին վիճակէց»:

Յետոյ բեմ է դալիս Աշոտ Յովհաննիսեանը, որ աշխատում է նախ երկու կողմերին էլ շոյիլ՝ հաշտեցնելու նպատակով, բայց չի լինում, դայլի ատամները շրթունքի տակ չեն ուզում մնալ: Նա ասում է, «իրենց հիմքում՝ Թէ՛ «Հոկտեմբեր»-ը և Թէ՛ «Նոյեմբեր»-ը ձգտում են ստեղծել և պաշտպանել պրոլետ. գրականութիւնը, բայց եթէ առաջինը խնդրին մօտենում է վերացականօրէն, երկրորդն, ընդհակառակը, հաշի է ստնում դրական ու բացասական պայմաններն ու խոչնդոտները: Այստեղ, իմ կարծիքով, մի հիմնական խնդիր պիտի դնել — ի՞նչպէս կուլել Դանակցութեան ու նրա գրականութեան դէմ, որ այնքան սպառնական է դառնում: Ի՞նչպէս չէ՞գոջացնել դանակցական Համաստեղը, Շանթը, Ահարոնեանը ու դեռ. այնքան ուրիշներ, որ շարունակում են իշխել դեռ հայ գրականութեան պարսիզում: Հարւածելով երկրում Դանակցութիւնը և նրա կազմակերպութիւնները՝ դուք կարծում էք Թէ մեզ ազատեցի՞ք 35 տարւայ դանակցական միահեծանութիւնից — ա՛՛ջ, Ո՛վ է ասում, այ մեր երկրի մանր քաղցրներիկան քափքիւմէնքն են միայն,

\*) 1921-ին Չարենց, Արով, Վշտունի երրեակը, յանդուգն մի յայտարարութեամբ հրապարակ եկաւ ժխտելով հին գրականութիւնը Շէֆայրներով և Գեօքեմերով անգնեք մ ու նրան խթանելով այժման համարելով՝ հիմք դնելու համար մի մոյ գրականութեան, որի խանձարուրը պիտի լինէր փոքրը:

ար մնացել են հաստարհիմ Գաղմակցութեան. հաւատացնում են ձեզ, որ այդ կուսակցութեան մտայնութիւնն ու հոգեբանութիւնը դեռ ամուր քնանում մեր բանարաւ — զգրագրական և մտաւարական գնագնահատմանը: Մեր բանարն անգամ, գիտակցաբար քէ ոչ, դեռ դաշնակցական է: Ա՛հա սրա դէմ է որ պիտի կռւն: Սա պիտի լինի մեր մտահոգութեան աւարական և այս աչքի առջ ունենալով պէտք է որ վերջ գտնեն Ձեր տարակարծութիւնները ու մի երբորդ. քշմամու դէմ դուրս գալ համերաշխ՝ հիմք դնելու համար մի նոր գրականութեան, որ պիտի արտայայտի ժողովրդական խաւերի զգացումները: Ձեզ չեմ ասում, որ անպայման դաշնակցական Համաստեղներին, բայց ձեզ լծակէց դարձնէք մի Ստեփան Տօրեանի, Դեմիրճեանի, որոնցից նախ կօշուէք դուք ու սպա բուրբոյլին կը հեռացնէք նրանց հին գրականութիւնից ժառանգած վնասակար տարրերից: Այստեղ շատ մեղադրեցին Չարենցին, վեր հանելով նրան հակաիդէոլոգիական, մանր քաղցնէր և այլն, բայց ես ձեզ ասում եմ, որ նա մնում է այսուհասնորք՝ որպէս միակ «պրոլետարական երգիչ»: Նրա «հասկազ Թամաշան» մի աննախընթաց պարսաւադիր է գրչնակցական մանր — քաղցնէի մտայնութեան դէմ: Խնդրե՛ք նրանումն է, թէ դուք ո՞րչափ պիտի ըմբռնէք անհրժեշտութիւնը հարւածային կարգով ստեղծելու «պրոլետարական» պարսաւադիր ու երգիծական էջեր՝ հակաիդէոլոգիական դէմ»:

Ա՛հա այսպէս ամէն մի խնդիր, ջրանցեցի մինչև գրականութիւնը, այս շնախարհիկ մարդոց բերնում՝ դառնում է Դաշնակցութեան դէմ կռուելու հարց: Ես կանը նրանց համար Հ. Յ. Դաշնակցութեան մասն է: Դարեր արաջ Հոռոմի մայրերը իրենց գաւակները աճաբեկելու, հնազանդեցնելու համար, ասում էին. «Աննիբալը դրանն է»: Իսկ այժմ Ա. Յովհաննիսեանները ըմբոստ երիտասարդներին ասում են՝ «Դաշնակցութիւնը դրանն է... իր Համաստեղներով»: Դարձեալ դարերի պատմութիւնը մեզ ասում է, որ ճնշած ու փոքր ուժի տէր գասակարգներն են ու կուսակցութիւնները, որ պէտք են զգուճ դործածելու ամբոխավարութեան և սարսափի դէնքը: Պարսաւական գրականութիւնը տկարների ստեղծագործութիւնն է հզօրների դէմ ու կարծէք թէ չեն բաւում լրտեսական ցանցերը, չէկաները ևայլն ու դեռ կարիք ունեն մի նոր մամուլի ու գրականութեան, որ ստի, զրպարտի, հայհոյի... կարիք ունեն գրականութեան մի նոր սեռի «պարսաւադիրութեան» և այս բոլորը մի թրայնութեան ու «անգոստեցալ» կուսակցութեան դէմ պաշտպանելու համար ու այն ժամանակ, երբ չեն ամաչում օտար բանւորական պատգամաւորներին յայտարարել, թէ «Հայ ժողովրդի հարեւրին իննսուներ մեզ հետ է»:

Ո՞րքե՞ «հոկտեմբեր»-եաններ, որքան էլ հաւատարիմ մնաք ձեր կարգացած՝ Մարքսի կամ Լենինի՝ դրբերին, էլի զուր է, այդ բոլորը այն օրը կործանեց երբ ձեր Լենինը, ղեռ չմեռած, դարձրեց ղեկը դէպի «սոսեսական նոր քաղաքակրթութիւն»: Ո՞նց էին նաև ձեր այն «մեծ» ընկերները, որ այդ անհետևողականութեան համար փորձեցին նրա դէմ նիդակ ծօծել և հանդիպեցին միայն նրա խոսք ուղեմի: Ու այսօր էլ, որքա՛ն միամիտ էք ջրմուռները համար, որ իշխա-

նութեան հասնելու համար հրապարակ դրած այդ բոլոր ոսկետառ նշանարանները վերջիվերջոյ պիտի դառնային ու դարձնէին են ամբողջների և «կարմիր» Թանգարանների գարդ: Ձեք հասկանում ու դրա համար էլ ձեր մեծաւորները ձեզ հակաիդէոլոգիական են անւանում ու սպառնում «ձեր ոտքերը կտրել» (նպաստից զրկելը բացատրելու սահմանաւած բազմաթիւ դարձածքերից մէկը):

Ե՞նչ այսօր Չարենցը հովանաւորում է ու արտասահման գտոյտի դնում ծախսելով, ի հարկէ, «պրոլետարական» հիմնադրամից՝ որպէս «պրոլետարական երգիչ» այդ նրա համար է, որ նա ըմբռնած է իրերի զգիտելիւթիկական» ընթացքը ձեր մեծերի պէս ու խոստովանում, որ «Մենք խառնիկներով կարողացանք նաևնէլ գրականութիւնը...»: Ու ի վերջոյ, չգիտեմ ի՞նչու մոռանում էք ձեր դասականի հիմնական կէտերից մէկը՝ հիմնաչնցի և վերնաչնցի յարաբերութիւնը, ըստ որի գրականութիւնը որպէս վերնաչնց պիտի տիրող տնտեսական քաղաքակրթութեան յարմարի: Նահանջել էք ամէն ճակատի վրա, դէ՛հ, կը նահանջէք նաև գրականութեան սուպրիլում: Սա իրերի զգիտելիւթիկական ընթացքի երկաթէ տրամաբանութիւնն է:

Իսկ մեր համեստ կարծիքով՝ խորհրդային երկիրը՝ այն ստուգեալ գոտին է, ուր ոչ միայն գրականութիւն, այլ ամբողջական ոչինչ կարող է զարգանալ: Որ լինէ՞ «հոկտեմբեր»-եան թէ՛ «նոյեմբեր»-եան, հայ ժողովրդի համար միևնոյն է, նա ակնկառոյց սպասում է այն օրանն, երբ իր հարազատ գրողներն ու երգիչները կը դառնան իր ծոցը: Ու «գաղթական» Համաստեղները շատ աւելի Թանգ արժեն հայ ժողովրդի համար, քան դուք, որ ապրում էք իր ծոցում, բայց դաւադրում նրան:

ՏԻՄԵՌՆԱԿ

### Կուսակցական կեանք

ԵՐԱՆԱՍՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Յուլ. 3—10-ին, Պոսթընի մէջ, տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻՆ 33-րդ Երջանային ժողովը՝ մասնակցութեամբ 71 կողմիցներու ու 4 Երջ. խորհուրդներու պատգամաւորներու և 21 հրաւիրւած ընկեր—ընկերուհիներու՝ խորհրդակցական ձայնով: Ժողովը բազմակողմանի քննութեան ենթարկեց ջրմաններու, կենտր. Կոմիտէի, հրատարակչական, հաշւական և այլ յանձնարարներու գիւղացումները և գտաւ, որ «Կենտր. Կոմիտէի 1925—1926 տարիըջանի բարոյական ու նիւթական գործունէութիւնը եղած է ընդհանրապէս դնահատիկ», ինչպէս «դնահատիկի եղած է նաև «Հայրենիք»-ի և «Ապարէտ»-ի խմբագրութեանց կատարած աշխատանքը»: Բաղաքական վարկիւտանի մասին ներկայացեցաւ ընդարձակ գիտելուցում և ժողովը հանգամանօրէն քննութեան առաւ առաջադրած խնդիրները:

ընդունած բանաձևը, ըստ էության, հաստատումն է Հ. Յ. Գ. 10-րդ ընդհանուր ժողովի դժած քաղաքականության և միայն կարգ մը թանձրացել խնդիրներու վրա կառավարիչի դարձնել յատուկ ուշադրութիւն։ Խնդիրներ, որոնք զարգացած են և քաղաքական կարևոր աղբակներ դարձած են միայն վերջին Հայաստանի պահանջը շեշտուած է առանձին ուժգնութեամբ, և Երջ. ժողովը փափազ կ'այայտէ, որ կուսակցութիւնը այսուհետեւ աւելի ուժգնութեամբ հետապնդէ անոր իրականացումը։

Երջանային ժողովի օրակարգի կարևոր մասը կը կազմէին տեղական արդային-մշակութային և կազմակերպական հարցերը — բանաւոր ու գրաստր պրոպագանդը, նոր սերնդի դատարարակութիւնը, Ուսանողական, Հայրենակցական ու վերջինական Միութիւնները, Հայ Կարմիր խաչը, «Հօօ»-երը և այլն, որոնք բոլորի մասին ընդունեցան գործնական բանաձևեր։

Ժողովը առանձին գոհունակութեամբ ընդգծեց, որ վերջին մէկ տարւոյ ընթացքին Հ. Յ. Գ. շանակցութեան գործունէութիւնը նոր թափ է ստացած և զաղութեան առարկայ է դարձած։ Նկատելի է վերադարձի փափազ կուսակցութեան շարքերը այս կամ այն պատճառով հետացած ընկերներու, նկատելի է բազմաթիւ նոր անդամադրել ցանկացողներու հոսանք, մասնաւորապէս երիտասարդ տարրերու կողմէ։ Երջ. ժողովը փակուած է խանդավառ մթնոլորտի մէջ, և պատգամաւոր ընկերները ցրւած են իրենց շրջանները։



**ՍՈՒՐԻՈՅ Երջ. ժողովը կայացաւ յուլ. 1-9-ին** 19 իրաւասու պատգամաւորներու մասնակցութեամբ։ Ժողովը լսեց կենար. Կոմիտէի, շրջաններու, Ուսանողական և Պատանակական Միութիւններու, «Նոր-Փիւնիկ»-ի միամեկ գործունէութեան, ինչպէս նաև հաշուեցնելի, նախահաշի ու դատական յանձնաժողովներու զեկուցումներն ու եզրակացութիւնները։ Գտնելով գոհացուցիչ կենար. Կոմիտէի գործունէութիւնը՝ Երջանային ժողովը առանձնապէս շեշտեց որոշ շրջաններու կազմի պակասը և դրւած ներթափանցիկ կատարած ըլլալուն, այլ և կարգ մը գործնական խնդիրներու վրա։ Հաստատուելով «Նոր-Փիւնիկ»-ի ներկայացուցած զեկուցումը՝ ժողովը դատաւ, որ խմբագրութիւնը Հաստատութեան հետեւ ընդհանուր ամամբ, պրոպագանդը տարած է դժնաւատի և կուսակցութեան շրջաններու ցոյց տուած կենդանի հետաքրքրութիւնը հանդէպ Հ. Յ. Գ. շանակցութեան և դրւած գովելի Հ. Յ. Գ. Պատանակական Միութեան կենար. վարչութեան և մասնաճիւղերու գործունէութիւնը։

Ընդհանուր բնոյթ կրող խնդիրներէն Երջ. ժողովը դրադեցաւ Միւրիահայ ազգային կենտրոն, մշակութային հարցերով, հայրենակցական միութիւններով և այլ խմբակցութիւններով, որիչ քաղաքական կուսակցութիւններով, Կարմիր Պաշտպան, «Հօօ»-ով և այլն։ Որոշեցաւ, որ ընկերները գործուն մասնակցութիւն աւնենան ազգային-մշակութային գործերուն և զարկ տան ժողովրդավար սկզբունքներու կիրառման ազգային — կրթական հիմնարկութիւններու մէջ։ Առանձին կարեւորութիւն ընծայելով Հայրենակցական և ուրիշ մշակութային ընկերութիւններուն՝ ջանալ ընդարձակել տնոնց գործունէութեան սահմանը և համախմբել անոնց շուրջ հանրային կենդանի տարրերը։ Առհասարակ օգտակար նկատել շինարար ուժերու համագործակցութիւնը ազգային ամէն տեսակ ձեռնարկներու և հաստատութիւններու մէջ։ Ջանալ շեղուցանել «Հօօ»-երու ներկուսակցական և քաղաքային դերը և ապահովել իրական օգնութիւն Հայաստանին՝ այդ գործի շուրջ համախմբելով միահամուռ ամբողջ պաղուծահայութիւնը։

Երջ. ժողովը քննութեան առաւ նաև սիւրբահայ զաղութի հետեւիք քաղաքականութիւնը հանդէպ տեղական իշխանութեան ու ժողովրդի և հողատար պետութեան։ Այդ քաղաքականութեան հիմքը պէտք է կազմէ սիւրբահայերու քաղաքացիութիւնը և ոչ թէ հիւր ըլլալու հանգամանքը։

Իր բովանդակային և հետաքրքրական օրակարգը սպառելէ ետք՝ ժողովը փակեցաւ ընկերներու բարձր արժամարութեան տակ։

# Մ Ե Ր Զ Ո Յ Ե Ր Ը

## Վ Ա Հ Ա Ն Վ Ա Ր Գ Ա Պ Ե Տ Ե Ա Ն

Արիւնաթաթախ գետին ընկաւ խիզախ յեղափոխականը՝ դաւաճան հայի ձեռքերով։ Մեծ պատերազմի տարիներին ծով տառապանքի մահատարուող ճամբան անվտանգ, համարձակ անցած, կուրծքը տուց նա անարգ զնդակին՝ յանուն մեր արնաքամ ժողովրդի բազմահազար բեկորներին հաւաքման, կազմակերպման՝ հայի ուրոյն տրպարը առողջ և կենսունակ պահելու տենչանքով։ Սպանեց վահան Վարդապետանը՝

Սահակ Բ. Պապայանի Կաթողիկոսի քնակարանի մէջ, Լիբանանի Ազգ. Գաւառական ժողովի նիստի մէջ։

Վահան Վարդապետանը ծնւել է 1882 թւին, Կեսաբիոյ մէջ։ Նրա ծնողը Կիւրիցի էին։ Վահանը՝ մի շնորհակալ գաւակ, իր կրթութիւնը ստացել է Կեսաբիոյ Ս. Կարապետ վանքի վարժարանի մէջ։ Իր ուսման պակասը այնուհետև նա լրացրել է հայոց զբաղանուծեան ու պատմութեան ընթերցումով և բարեխղճօրէն մինչև իր շունչը փչելը հետեւել է հայ պարբերական հրատարակութեանց, առանձին ուշադ-

րութիւն դարձնելով հայ դատի դարգացման փուլերի և հայ յեղափոխութեան անձնէջր նահատակների պատկառելի շարանի վրա:

Հայ ժողովրդի աշխուժ կեանքը նետել է Վահանին Իբրանոսեան վաճառատունը, եղև է այլտեղ թողարտ ձիւղի տնօրէն, նոյն պատճով փոխադրել է նա Սամսոն, 1906-ին անցել է Վառնա, այնտեղից 1909-ին եկել է Աղանա: Միառժամանակ այստեղ մնալուց յետոյ, Վահան Վարդապետեանը դարձեալ վերադարձել է Վառնա: Այստեղից դարձեալ Աղանա, և ահա համահայկական աղէտը՝ հայ բովանդակ ժողովրդի պատմութիւնը շտեմած գարհուրելի տեղահանութիւնը: Կախաղան հանած անձկուն յեղափոխական Վահանը Տաթևեանի ամենամտերիմ ընկեր Վահան Վարդապետեանը տարագրուում է Ղաթմա և այստեղից անդրակելի դժարութեանց ենթարկելով՝ հազրէ հասնում է Հալէպ, ուր թրքական արհմտուչ կոտավարութիւնը խիստ հետապնդման է ենթարկում նրան, մահւան զատապարտելու համար, որպէս յեղափոխականի: Հնաբնով ազատուում է իրեն նետում է մեծ շարժարաններով Երուսաղէմ, ուր մնում է շորս տարի: Ընդհանուր զինադաշարից յետոյ միայն, հանգիստ է տեսնում փոթորիկների միջից ազատւած այս լաւ մարդը և փոխադրուում Պէյրուք:

Վահան Վարդապետեանը՝ լի խանդով, հայ ժողովրդի գարգացմանն ու յառաջդիմութեանը նախանձարնդիր, շիտակ և ուղղամտ մի մարդ, չէր կարող հեռու մնալ մեր ժողովրդի տառապանքից: Նա անձնէջր հանրային գործիչ էր՝ միշտ գոհարերող թէ բարոյապէս և թէ նրկթապէս: Նա բաց ճակատով, համարձակ, շիտակ խօսքն էր տեղի ստող մարդ էր: Ընտանիքից շատ սիրւած հայրը, սիրւած և յարգւած էր նաև շրջապատից՝ հայ թէ օտար, հասարակական հիմնարկութիւններից, որտեղ նա աշխատել է բարեխղճօրէն, հայրենակիցներից, որոնց փայփայել է միշտ, ընկերներից, որոնց մէջ եղել է սերալիւր իր յորդորներով, խորհուրդներով ու հրահանգներով:

Տարիքի հասունութեան հետ միասին, աստիճանաբար լայնացել է Վահան Վարդապետեանի հանրային գործունէութեան շրջանակը: Բոլոր զաղաքների մէջ ազգային - հասարակական գործերին մասնակցել է բարեխղճօրէն՝ տալով իր ժամանակի մեծազոյն մասը, միշտ արժանանալով ժողովրդի վստահութեանը: Յատկապէս ուշադրութեան արժանի է նրա վերջին տարիների բեղմնատուր աշխատանքը: Տարազի բազմութիւնների ուժացման ճանկերից փրկելու նպատակով, կազմել է Պէյրուքի Ազգային Միութիւնը՝ անդամակցութեամբ Վահան Վարդապետեանի: Այս մարմինը որը ժամանակից յետոյ լուծւել է: Ս. Նշան և Ս. Պաշ եկեղեցիների թաղական խորհուրդների նախաձեռնութեամբ կենսեք է կոչւել Ազգային ժամանակաւոր մարմինը: Մեր նահատակ ընկերը ընտրել է այս մարմնի անդամ: Կիրիլիոյ Սահակ Բ. Պապայանն Կաթողիկոսը, ժխտելով ժամանակաւոր մարմնի իրատեսութիւնները, կազմել է տեւ շատարակական գործիչների, խմբադիրների, զբոսկանագէտների, բժիշկների և բազմաթիւ հանրօգուտ ձեռնարկներ

ների մէջ աշխատող աշխատու անձանց ցուցակը՝ հրահրել այս բոլորին և դադարի քեհարկութեամբ ընտրել Ազգային խորհուրդ: Վահան Վարդապետեանը ընտրել է այդ խորհրդի անդամ: Այս մարմնից յետոյ, հնարարակի վրա է դրւել Լիբանոնի Ազգային Գաւառական ժողովի ընտրութեանց հարցը: Եւ այս տարւայ յուլիսին ընտրել է հանրածանօթ Գաւառականը՝ ժողովրդի ջէով: Քեհարկութեան երկու հազարի մօտ մասնակցողների ջէւների սուար մեծամասնութեամբ Վահան Վարդապետեան ընտրել է Գաւառական ժողովի անդամ:

Գաւառական ժողովը նիստ է ունենում կաթողիկոսարանում, ամսիս 28-ի երեկոյեան, ընտրելու Քաղաքական ժողովը՝ գործադիր մարմինը, հայութեան կենսեքին ու նրանից բղիկիք ինդիւրներին ընթացք ստալու համար: Վահան Վարդապետեանը գաղտնի ջէհարկութեամբ, ընտրուում է Քաղաքական ժողովի անդամ և կէս ժամ յետոյ միայն, արիւնաթաւալ ընկնում հայ դահիճի դնդակից:

Վ. Վարդապետեանը դաշնակցական էր, համոզւած և անկիւն: Կոսակցութեան ներքին կեանքի մէջ տարւել է՝ պաշտօնական մարմինների միջոցով՝ աշխատանքների ղեկավարութիւնը՝ անձնւիրաբար: 1920-22 ընտրել է տեղական կոմիտէի անդամ, իսկ 1922 - 24 կեդրոնական կոմիտէի անդամ: «Փիւնիկ» և յետագային ճնոր Փիւնիկ» թերթը հիմնել է և՛ նրա ջանքերով: Յեղափոխականի անձնւիրութիւնն ու արւուրելու եղել են նրա առաջնորդող սկզբունքները: Նա խոր ազդեցութիւն է ունեցել մեր երիտասարդութեան և կուսակցական շարքերի վրա, իր բարձր բարոյականութեամբ, և հասարակական գոհարերութեամբ: Եթէ պէտք է գոհւել անձը, գոհւիր՝ յօդուտ հայ ժողովրդի պատասաղրական շարժման: Մեր ժողով, որ ապրի ժողովուրդը և փշրի ստրկութեան շղթաները:

Ա.

\*\*\*

ՄՕՆԻԿ ՕՉԱՆԱՋԱՆԵԱՆ

19 - 20 տարեկան պատանի էր Մօնիկը — ընկեր Համօ Օհանջանեանի անդրանիկ որդին: Միջնակարգ կրթութիւնը ստացել էր Լիպեյեան զինադաշարում: Թիֆլիսի հայ աշակերտական շրջանում ղեկավարող դէմք էր. Հ. Գ. Դ. Աշակերտական Միութեան ընդհանուր քարտուղարն էր, նրա ոգին: Երբ Բազում գուարւեց դաշնակցական աշակերտութեան համազումարը, նա նախազահութեան անդամ էր և աշխատանքներն ուղղութիւն տողը: 1915-ի ամսուը, երբ կազմակերպւեցին աշակերտական խմբեր զինւորների ընտանիքների դաշտային աշխատանքներին օգնելու համար, Մօնիկը մի խմբի ղրուկ անցած զինաց Երևանի շրջանը և ամբողջ ամառ աշխատեց այստեղ:

Կրթւած, մտաւոր լայն պաշարի տէր, Գաշնակցութեան աշխարհայեացքը լաւ իւրացրած՝ Մօնիկը մտաւոր ղեկավար էր մեր աշակերտութեան: Նա ուժգին և սնդոգ պաղքար էր մղում, մասնաւոր սոցիալ — դէմոկրատների դէմ: Արագ հասունացող բնաւորութիւն

էր նա, որ կոչւած էր փայլուն դեր կատարելու Հայ կեանքում: Եւ, սակայն, դառն ճակատագիրը նրան ևս զոհ բերեց անյառ Մողղքի սեղանին: Հազիւ զիմնագիւն աւարտած, 1918-ին, նա իր ընկերներից շատերի հետ հազաւ զինուորի գործ վերադրուին, որից հրացանն ու գնաց կամուրջ էրգրումի ճակատը, մասնակցեց կռիւներին, աչքի ընկաւ, ստացաւ քաջութիւնի նշան, բաժին ունեցաւ Ղարաքիլիսայի պատմական ճակատամարտին ու... այլևս յետ չեկաւ: Ո՛չ իսկ դիակը գտնեց: Անյայտ մնաց այդ հազաւորի պատանու վիճակը...

Նրա հետ կուէ դաշտ էր գնացել և մի ուրիշ հրաշալի պատանի՝ Սուրբն Թաղէտոսանը—Իշանակցութեան



ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԻ

վետերան Արշակ Թաղէտոսանի որդին, որ Մօնիկի ընկերն էր և Հ. Թ. Գ. Աշակերտական Միութեան աչքի ընկնող անդամներից մէկը: Նա՛ ևս չլիբարաբաճաւ տուն և հերոսական մահով ընկաւ էրգրումի ճակատամարտում:

**ՅԱԿՈՒ ԶԱՐԻՖԻՅԱՆ**  
(Կինսագրական յուշեր)

Յակոբը ծնել է 1898թ. Ալէքս-պօլի Նալբանդ գիւղում, գիւղական աղքատ ուսուցչի ընտանիքում:

Սկզբնական կրթութիւնը ստացել է գիւղում, հօր մօտ, ապա մտել է Ալէքս-պօլի Առևտրական դպրոցը, ուր մնացել է մինչև «—րդ դասարանը, այնտեղից անցնել Երևանի արական գիմնազիան, որը աւարտել է 1918թ.:

Աշակերտական նստարանից առանձին հետաքրքրութիւն է ցոյց տուել զէջի գեղեցիկ գրականութիւնը: Հասցի 13—14 տարեկան՝ նա արդէն ծանօթ էր. ռուս և կրօնական գրականութեան վարպետների գրական գործերին. առանձնապէս պրակտէ էին նրան Իրաչէնը, Սայազուրը, Մետերիինը. ամբողջ վերջինը անգիր էր արել: Նա ինքը ի բնէ բանաստեղծ էր, աշակերտ ժամանակահատից թղթակցում էր գանազան երիտասարդական պարբերականների՝ Ծախկազ, Նայիրեց, Զ. Բ.,

Անցորդ և մի շարք ուրիշ ծածկանուններով: Առանձին շարքաթաթերթ էր հրատարակում, ուր լոյս տեսան նրա մի շարք բանաստեղծութիւնները: Նա ունէր և մի շարք արձակ, անտիպ գերթւածներ, նրանցից մէկը «Սուլքան» վերնագրով, մի քանի անգամ, դերասան Զարիֆիանի ղեկավարութեամբ, ներկայացւել է հայկական ըմբի վրա: Աչքի է ընկնում ռուսերէն լեզուով գրւած նրա «Արիզա» հրաշակերտ պոէման:

Ա.

\*\*\*

«Այսիսի քարտուկներում հերոսաբար ընկաւ Զարիֆը... գումեց հեռագիրը Դիլիջանից:

Կարծես երեկ էր այն օրը, երբ սիրելի Յակոբը, Ալէքսանդրապօլի «Մայիսեան դէպքերի» լիկեդացիայից յետոյ եկաւ Երևան... Ինչքան վառ հաւատ, ի՞նչպէս խոր համոզմունք ունէր նա դէպի լուսաւոր ապական: Ալէքսանդրապօլի դէպքերի մասին մի շարք ղեկուցումներ տալուց յետոյ, այդ անսպառ եռանդը, որ երբէք յուզել չէիտէր, նորից մեկնեց կարևոր յանձնարարութիւններով: Այս անգամ Դիլիջանն էր նրա ընտրած վայրը... «Ես չեմ կարող չգնալ, ես պիտի գնամ ուր «գործ» կայ անկուստում էր նա: Ու դնաց այլևս չլիբարադառնալու համար...

\*\*\*

Երեկայ պէս յիշում եմ 1915 թ. կամաւորական շարժումը, երբ սիրելի Յակոբը, այն ժամանակ դեռ մի փոքրիկ գիմնազիստ, Նորքի ու Քանաքեռի ճամբաներն էր մաշում, կամաւորական շարքերը մտնելու նպատակով... Բայց այդ նրան չ'յաջողեց:

Այնուհետև նրան կարելի էր տեսնել գանազան լեզալ ու անլեզալ աշակերտական կազմակերպութիւնների մէջ, որոնց կազմակերպողը և շունչ տուողը միշտ էինքն էր լինում, մինչև Ռուսական ՄՄԾ յեղափոխութիւնը: Այդ ժամանակ էր նա, որ նա հանդէս եկաւ, որպէս կազմակերպւած անձնաւորութիւն: —Նրան կարելի էր տեսնել մերթ աշակերտութեան դուրսն անցած գասադուրներ կազմակերպելիս, մերթ որպէս պրոպագանդիստ շրջանները կազմակերպելիս և այլն:

Իռլէնիկեան յեղաշրջումից յետոյ, երբ ռուսական բռնկիկացած զօրքերը լքում էին մէկը միւսի յետեւից մեր սահմանները, Զարիֆին տեսնում ենք զինուորական ստաւին շարքերում, որպէս կամաւոր, իր ընկեր աշակերտների կողքին:

Ալէքսանդրապօլի անկումից և Ղարաքիլիսայի հերոսամարտից յետոյ, նրան տեսնում ենք Երևանում իր սիրած գործի դուրսն անցած: Նա մի կատարեալ կազմակերպչական տաղանդ էր և շնորհիւ նրա էր զլիսաւորապէս, որ Երևանի և ընդհանրապէս Հայաստանի աշակերտութիւնի կարողացաւ կազմակերպուել և ունենալ իր օրգանը՝ Հայաստանի Աշակերտական միութիւնների կենտրոնական Խորհուրդը, որի ամենատեսնելուն անդամներից մէկն էինքն էր:

Դուռ նոր աւարտած Երևանի գիմնազիան, նա մի շարք ընկերների հետ վերակազմում է Հ. Թ. Գ. Երևանի Ռուսնոդական միութիւնը, որը յետագայում այնքան

կարևոր դեր խաղաց պետական ու կուսակցական կեանքում: Ուսանող ժամանակն էլ նա իր սիրած ու փայփայած աշակերտական կազմակերպութիւններից ձեռք չէր քաշում և Հ. Յ. Գ. — բոլ Ընդհանուր ժողովին նա մասնակցում էր, որպէս աշակերտութեան ներկայացուցիչ: Այնուհետև Հ. Յ. Գ. Ուսանողական Միութիւնների Անդրկովկասեան համադրմարում (Երևանում) ընտրում է Բիւրօի անդամ:

Մի սրբութիւն ունէր նա և այդ սրբութեան համար պատրաստ էր ամէն մի զոհաբերութիւն յանձն առնել... Իր սիրած քրմերէ՛ր Գրիստափորի, Սիմէոնի ու Ռոստոմի



ԲԱՆԻՍ ԵՉՄԱԼԵԱՆ

սիրած, փայփայած Դաշնակցութիւնն էր այդ սրբութիւնը, որի համար և զոհեց նա: Մոլեռանդ էր իր համոզմունքների մէջ և վա՛յ նրան ով կը յանդգնէր դիպչել իր սրբութեանը. այն ժամանակ Յակոբը մարմնացած կրակ էր դառնում ու շանթում աջ ու ձախ իր հակառակորդներին:

Իր ամբողջ խառնածոջով դեղատէր, նա և բանաստեղծ էր. ունէր բաւականին շնորհալի բանաստեղծութիւններ, որոնցից շատերը տպւած են Կովկասեան և Հայաստանի պարբերականներում զլխաւորապէս «Անցորդ» ստորագրութեամբ:

Իր քնքոյշ, մեղմ բնաւորութեան համար ընկերների սիրելին էր նա. առանց բացառութեան բոլորը սիրում էին նրան: Նրա գլխաւոր յատկութիւններից մէկն այն էր, որ կարողանում էր իրեն սիրել տալ, կապել իր հետ:

Չգիտեմ ինչո՞ւ թւերից սիրում էր եօթը, իսկ գոյնբերից՝ կապոյտը... Եւ դրանք յաճախ արտայայտւում էին նրա բանաստեղծութիւնների մէջ: Եւ կարծես ճակատագրի մի ջմահած խաղով 1920 թ. մայիս 27-ին, երեկոյան ժամը 7 — Ին, Դիլիջանի կոխներում, բողբոջի կողքած կարմիր զահեճների գնդակից ընկաւ նա՛ 7 — շարքից (դիպուածօրէն նրանց խումբը 7 հոգուց էր կազմւած), իր սիրած կապոյտ երկնասկամարի տակ:

Նրա ընկերները շթողեցին նրան՝ դիակը մեծ շուքով բերեց Երևան և թաղեց իր սիրած ուսուցիչների՝ Արամի ու Կարճիկեանի կողքին՝ Դաշնակցութեան պանթէօնում:

Սիրելի Չարիֆին դժւար է մոռանալ: Նա այն գլմբերից էր, որոնք երկար ասրիներ չեն մոռացում:

Նրա անունը հրաշք տառերով պէտք է արձանագրուի ամէն մի ուսանող ընկերոջ սրտում մեր լա՛ւ Փառնակի ու սիրելի Մօնեայի անունների կողքին:

Լ. ՍԱՐԵՑԻ



ԱՐՏԱՅԷԼՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Արէս)

ԱՆԱՀԻՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Իարձրահասակ, ծաղկահաստ, բայց դուրեկան դէմքով և անուշ հայեացքով, 28—30 տարեկան երիտասարդ էր Արտաչէս Յովհաննիսեանը:

Պարսկահայ խոնարհ քնտանիքի գաւակ՝ նա իր նախնական կրթութիւնը Թաւրիզում ստանալուց յետոյ դնում է էջմիածնի Գէորգեան ճեմարանը:

Ուսանողական շրջանին արդէն աչքի էր ընկնում իր հասարակագիտական լուրջ պատրաստութեամբ:

Ճեմարանն աւարտելուց յետոյ պաշտօնավարում էր Թաւրիզի «Արամեան» և «Հայկազեան» դպրոցներում, ապա նաև Ատրպատակ. Քեմական — Կենտրոնական դպրոցում՝ Յովնան Դաթեանի աեսչութեան օրօք:

Պարսկական յեղափոխական շարժումների ընթացքին (1908 — 12) Հ. Յ. Դաշնակցութեան գործօն մասնակցութիւնը և ընկերների շեքմ շրջանակը Արտաչէսին, որ առաջ պատկանում էր Ռուս. Սոց. Յեղ. կուսակցութեանը, մղում են դէպի մեր կուսակցութիւնը, և ահա 1908, 1909 և 1910 թւերին Թաւրիզում հրատարակուող Հ. Յ. Գ. օրգան «Առաւօտ» շարաթիւթերի էջերում հանդէս է գալիս նա, Արէս ծածկանունով, իր մի շարք լուրջ պատմական — սոցիոլոգիական վերլուծումներով: Յատուկ ուշադրութեան արժանի են նրա պարսկական յեղափոխութեան մասին գրած վերլուծումները «Առա-



ՀԱՄԱՋԱՊ ՆՈՂՐԱՅԵԱՆ

ւօտ»-ի 1908, 9 թւերի թերթօնների բաժնում:

Պարսկահայ մամուլի պատմութեան մէջ «Առաւօտ»-ը (1908 — 10 հրատարակած) հանդիսանում է որպէս միակ լուրջ օրգանը, և այդ գործուն գնահատելի բաժին ունի պարսկահայ երիտասարդ հրապարակալի Արէսը:

Նա աշխատակցել է նաև Թիֆլիզի «Նոր Հոսանք»-ին:

Պարսկական յեղափոխական շարժումները Թաւրիզ պրակցին մի շարք յեղափոխական գործիչներ, ի թիւս

որոնց և հայ հաղադարձուն կին յեղափոխականներից՝ Շուշեցի օր: Անահիտ Մելիք Փարսադանեանին:

Պարթև հատակով, զեղեցիկազմ ու սևաչեայ Անահիտը որ պաշտօնավարում էր «Հայկազեան» — Թամարեան» զպրօցում, աշակերտութեան սիրոյ, գուր-գուրմանքի և ոգևորութեան առարկան էր:

Վարժ էր զինքն զործածելու մէջ և փոքրիկ ատր-ճանակը միշտ անբաժան էր իրենից, պայուսակի մէջ:

Արտակարգ Լուսնոյ ու Համարձակութիւն ունէր նա, հակառակ որ կին էր: Այսպէս, 1911 թ.ին էր ցարական Թուսաստանը զօրք մտցրել Ատրպատական՝ «կարգը վերահաստատելու» պատրուակով: Սկուեցին խուզարկութիւնները յատկապէս հայերի տներում: Անահիտը պահեստների զննքերը փոխադրողներից էր:



ԱՐՒՍ ԻՍՐԱԲԵՅԷԼԻԱՆ

այդ զործում ոչ ոք չէր կարող մրցել նրա հետ: Մի անգամ նա իր համարձակութեամբ փրկում է մեր դշխուսոր պահեստներից մէկը: Ռուս սպաների և զին-ւորների մի խումբ շրջապատում են այն շէնքը, որի նկուղները ծառայում էին իբրև Դաշնակցութեան պահեստ: Պէտք էր զբաղեցնել խուզարկուների՝ ժամանակ շահելու համար: Անահիտը զործի է անցնում: Եւ ահա շէնքի կտուրը սեղան են բաց անում և սպաներին հիւրասիրում: Անահիտը իր ճարտարախօսութեամբ և համարձակութեամբ երկամբ ժամանակ այնքան է զբաղեցնում զինւորականներին, մինչև որ մերոնք դատարկում են պահեստը:

Յեղափոխութեան այդ բուն զործունէութեան միջոցին է, որ Արտաշէսը առիթ է ունենում ծանօթանալու և ծօնեալու Անահիտին:

Արտաշէսը իր մէջ մարմնացնում էր հայ դադափարական մտաւորականին:~

Անահիտը, մտաւորական լինելով հանդերձ, կինուսողիկի տիպ էր՝ միևնոյն ժամանակ ընդունակ ընդգնանայ աշխատանքի: Երկու դադափարական ամուսինները փոխադարձաբար միմեանց լրացնում էին:

1911 թ.ին ռուսական բանակի մուտքը Ատրպատական, պատճառ եղաւ, որ մարտական և մտաւորական ուժերը հեռանան այնտեղից: Նրանց մի մասն անցաւ Կովկաս, միւս մասը՝ Թէհրան, իսկ մի քանի հոգի էլ մեկնեցին արտասահման: Վերջինների թւում էին և Արտաշէսն ու Անահիտը, որ անցան Չիլիերիա՝ ուսանելու:

Վարժ ժամանակից յետոյ նիւթական պայմանները ստիպում են նրանց թողնել ուսանելու միտքը և գնալ Տրապիզոն՝ հայկական պլորոցի տեսչէ պաշտօնով:

1915-ի անգլահանութիւնների ժամանակ Տրապիզոնի հայկական կոտորածին զոհ է գնում և այդ շքնաղ զոյգը: Կոտորածից ապաստում է նրանց միակ մանակահասակ որդին՝ Ազատիկը:

Այդ գաղափարական զոյգի կորուստը խորը վշտով է յիշում պարսկահայ նոր սերունդը, որ կրթւել է նրա յեղափոխական շնչի տակ:

ԱՆԴԻԷ

ԳՈՒՏ. ՀԱՅԿ ԳԻՐԳՈՐԵԱՆ

Ծնւել է Թաւրիզ, 1892 թ.ին: Նախնական կրթութիւնը ստացել է Լիլաւայի «Հայկազեան» — Թամարեան» զպրօցում: Ապա աւարտելով Ատրպատականի Թեմական



Ռ. ՍԵՒԱԿ

Կենտրոնական դպրոցը՝ 1911 թ.ին անցել է Զւլեյբերիա և վերջացրել բժշկական մասնաճիւղը:

Յատկապէս 1901 — 12 թւերին Թաւրիզը ներկայանում էր յեղափոխական ետուր զործունէութեան մի շրջան: 1900-ական թւերին սկսւում է հայ աշխատաւոր և հարուստ խաւերի միջև բուռն պայքար՝ ազգային — հասարակական ղերիշխանութեան հողի վրա: Հ. Յ. Դաշնակցութիւնն օրէց օր աճում և իր ձեռքն էր առնում դպրոցներն ու ազգային մարմինները: Ազգայական դասը, իր հետ ունենալով հնազանդների, բնկրկում էր՝ միևնոյն ժամանակ բուռն պայքար մղելով իր կորցրած դիւքերի համար: Այդ թւերին արտասահմանից Թաւրիզ են գալիս պատրաստի և ազդեցիկ դաշնակցական տեսուցներ՝ իրենց ուսուցչական խմբերով: Նախ՝ Տ. Ռաժմաճեան, ապա՝ Յովհան Դաւթեան: 1906 թ.ին ծագում է պարսկական յեղափոխութիւնը: Նիկիոմի, Քեդիի, ինչօքի և Դուժանի խմբերն ու նրանց խիպախ կոնկները ոգևորութեան անսպառ աղբիւր են հանդիսանում պարսկահայ նոր սերնդի համար: Բժ. Հայկ Գրիգորեանն այդ շրջանին ապրում էր իր պատանեկութիւնը: Այդ միջավայրում է, ահա, որ ձև են առնում նրա քաղաքական համոզանքները: Հակառակ առևտրականի որդի լինելուն, նա յարում է շ. Յ. Դաշնակցութեան:

Զւլեյբերիայում բժշկութիւնն աւարտելուց յետոյ՝ մասնակցում է 1919 թ.ին Հ. Հ. Պատուիրակութեան կազմած Կիլիկիա մեկնող բժշկական արշաւախմբին և պաշտօնավարում Ատանայի հիւանդանոցում: Կենդանի մասնակցութիւն է ունենում Կիլիկիոյ այգային — կուսակցական զործերի մէջ և 1921-ին ընարում է Կիլիկեան կառավարութեան անդամ: Կիլիկիոյ պարպումից յետոյ անցնում է Պուլիս, ուր է մտնոյ մասնակցում է

կուսակցական աշխատանքներին: Ընտրուած է շրջանա-  
յին ժողովի, սպա նաև Վիշապի կ. կոմիտէի անդամ:

1921 թին Կովկասի վրայով անցնում է Քաւրից: Այդ ժամանակ Հայաստանի հանրապետութիւնն արդէն  
ընկած էր և հայ քաղաքական գործիչներն ու Հ. Յ. Գ.  
Բիւրօն գտնուած էին Քաւրից: Այստեղ նա Բիւրօնի  
գեկուցում է արտասահմանի անց ու դորձի և Կիլիկիոյ  
գեղաբերի մտայն: Մի քանի ամիս ծննդավայրում մնա-



ԿՈՐԻՆՆ ՎԱՐԳԱՊԵՏ

լուց յետոյ՝ որոշ միախալով ճանապարհուած է Պոլիս:  
Սակայն Քիֆլիզում վարակուած է տիֆօյ և վախճանու-  
ում սուղի մէջ թողնելով իր հարսգատներին ու ընկեր-  
ւում:

Յանձին ընկեր Գրիգորեանի պարսկահայութիւնը  
դրկեց իր լուրջ և խոստմամտից երիտասարդ գործչից:  
ԱՆԳՐԻ:

ՏՈՒՐ . ԳՐԻԳՈՐ ՍԱՅԵԱՆ

Վերիտասարդներու մասը նաւարկութեան մը կը  
յմանիք ըսած է հնութեան իմաստուններէն մին: Մահ  
մը, որ անակընկալ է, որուն հետ մարդ չի կրնար  
հաշուիլ անսպասելիօրէն եկած ըլլալուն, առանց մար-  
դաց հոգեբանութեան մէջ անհրաժեշտ նախապատրաս-  
տութիւնը կատարելու:

Այդպէս եղաւ Սայեանի կորուստն այ, անսպասելի  
այն շրջապատին համար, ուր անիկա կը գործէր անբաւ  
եռանդով ու նւիրումով:

Ծնած Ռուսճուղի-մէջ, աղքատ ծնողներ, 1884-ին:  
Իր նախնական և երկրորդական կրթութիւնը ստանա-  
լով հանդերձ Պուլկար վարժարաններու մէջ, Սայեան  
կը մնայ կապած հայ իրականութեան ու կը սնանկ  
անոր ցաւերովը:

Դեռ պատանի, հազիւ 17—18 տարեկան կը սկսի  
աշխատակցիլ Վառնայի մէջ հրատարակող Եաթօում

թերթին, ի յայտ բերելով գաղափարական ազնիւ խմորի  
մը ու պայծառ մտածողութեան մը բոլոր նշանները:

Ան կը ճանէ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերուն  
մէջ՝ այստեղ գտնելով բաւարար սնունդ իր հոգեկան  
ու մտաւոր ծարաւը յաղեցնելու համար:

Գծբաղաբար, իր կուսակցական սկզբնական գոր-  
ծունէութենէն ստոյգ թակասներ կը պակսին տալու  
համար իր անհանդարտ կեանքին լրիւ պատկերը:

Ըսե՛ք սակայն, թէ ան դեռ շատ երիտասարդ  
անցած է Օտեսա, Պաթում կուսակցական մղումներով  
ու Կովկասի մթնոլորտը շնչած:

Իր անունը խառնած է Եւրոպիէ մահափորձին  
հետ, ինքն ալ գացած է Պոլիս, այդ ատեն դադարեմ,  
դաւաղրական գործի համար, Սաֆօի-հետ միասին,  
որուն հանդէպ կը պահէր դեռ մինչև վերջն ալ անպա-  
սում հիացում մը, մանկական կոչելու աստիճան  
խանդավառ, պատանութեան օրերէն սպաւորութեան  
իրրև ծնունդ:

Եւրոպիէ մահափորձին անյալող վախճանը, Սաֆօի  
և կարգ մը ընկերներու հեռացումը կուսակցութենէն,  
մեծապէս կը սպասուէր իր վրա ու այդ թակասներէն  
կուսակցութեան մէջ ինքզինքը կը գտաւայարտէ տեսակ  
մը բարոյական աքօրորի, առանց ուէ ձեռով Վեդաւորք  
ըլլալու:

Պուզըիչի բժշկականին իրրև թերաւարտ ուսանող  
հնարաւորութիւն կրտսեղծէ շարունակելու իր ուսումը  
այս անգամ Պրիւքնէի մէջ, ուրիչ կը վկայէ իրրև  
բժիշկ:

Կը վերադառնայ կրկին Ռուսճուղ: Իր դժգոհու-  
թիւնն ու ցաւը Հ. Յ. Դաշնակցութեան հանդէպ—միշտ  
մնալով անոր անդառ—տակաւ կ'ամոքի, ու կը բացել  
իրեն կեանքին համար շրջան մը, երբ շուքի մէջ կը  
մնայ ինքը, նիւթապէս ու բարոյապէս օժանդակողի ու  
խորհրդատուի դերին մէջ՝ միշտ՝ վայելելով կուսակ-  
ցական ընկերներու անխառն համակրանքն ու սէրը:



Գ. ՇԵՀՐԻԿԵԱՆ

Ընդհանուր պատերազմը դինքը կրկին կը լծէ  
կուսակցական եռանդուն գործունէութեան:

Կուզայ շրջան մը 1918-ին, երբ Հ. Յ. Դաշ-  
նակցութեան խայտաբերտ հակառակորդները կրկին  
պատնէիչի վրա են իրենց բոլոր բուժ ու ժանդոտ  
դէմքերով: Սայեան կուի միւս ճակատին դուրսն  
է՝ ի սպաս անոր յաղթանակին դնելով ոչ միայն իր  
հատու գրիչն ու սպասուողէ և անկեղծ խօսքը, այլ նաև  
իր նիւթական միջոցները:



Ան կը մասնակցէ Հրապարակային դրարու ու բերանացի պայքարին, իր անձին ժողովրդականութիւնն ու հմայքը ծառայեցնելով կուսակցութեան յաղթանակներուն ու յաջողութեան: Սայեան այլևս ամէն տեղ է, կուսակցական խմբերու, կոմիտէներու, ընկերային ընդհ. ժողովներու թէ՛ շրջանային ժողովներու մէջ, իբրև զեկամարդու ու տեղին համաձայն իբրև սաստող ու փայտալող:

Ան քաղցը կը իր ընկերներուն հանդէպ, բայց իր



ՉԱՐԴՈՒՆԻ ԽԱՅԱՏՐԵԱՆ

պայրոյթը սարսափելի էր, երբ իր անկաշտ հոգին կը վրդովէր սեէ անիրաւութեան համար:

Ուղիղ իր նկարագրով «Տօբթորը» — այսպէս կը կոչէին զինքը — տեսակ մը իրաւարար էր քեչ մը ամենուն համար և ամէն վէճի ատեն:

Ան իր դաղափարներով աղպանական էր, որովհետև ճշմարտապէս հայ էր, ան համոզած ընկերակարական էր նաև, որովհետև մարդ էր ամէն բանէ առաջ:

Խօսքի ասպետ չէր միայն, գարծը ամէն տեղ և ամէն սպալեղի մէջ կուզար զեղեցիկացին իր մտածողութիւնը ու արժէքաւորել զայն:

Պէտք էր տեսնել իր խանգաղվածութիւնը, երբ ստեղծած էր Հայաստանի Հանրապետութիւնը: 1919-ի Փարիզի Ազգային Համադումարէն վերադարձին—իբրև Պուլկարահայտութեան պատգամաւորը—անոր սրտմտութիւնը անսահման էր ի տես Գ. Նորատուկեաններու, Պօղոս Նուպարներու և անոնց հացկատակներուն հետեւած ընթացքին հանդէպ Հայաստանի Հանրապետութեան:

Սայեան ոչևորած էր Հայաստանով, և կըր 1919-ին Պալքանի Երջ. ժողովը ուղեց զինքը կուսակցութեան Երևանի Գ-րդ ընդհ. ժողովին պատգամաւոր ընտրել, ան զուտ անձնական կարգ մը պատճառներով չկրցաւ դնալ, բայց արդէն լրջօրէն կը պատրասուէր Հայաստան հաստատուելու համար:

Ան, կարելի է ըսել, ա՛յն հազնազիւտ դաշնակցականներէն էր, որ բացի կուսակցական բարեմասնութիւններէ ներկայանալի էր նաև ամէն պատմական պետական աշխատանքի համար:

1920-ին Հայաստանի կառավարութեան կողմէ նշանակեցաւ Պուլկարիոյ ընդհ. հիւպատոս, բայց Հ. Հ. Փարիզի պատերազմութիւնը; կանխօրոք ուրիշ մը նշանակած ըլլալով, այդ որոշումը ընթացք չտացաւ.

Սայեան իր անհատական իրական արժանիքներուն շնորհիւ վերջին տարիները կը վարէր Ռուսոճուքի քաղաքապետական բժիշկի պաշտօնը և նոյնքան սիրած էր պուլկար և օտար շրջանակներէն ալ, ինչքան հայերէն:

Ինչպէս ըսինք, ան ամէն բանէ առաջ մարդ էր, բառին բովանդակ արշակական առումովը:

Ան՝ բժշկութիւնը իբրև արհեստ չի ծառայեցուց, այլ միջոց մը օգնելու համար բոլոր շքաւորներուն, առանց ազգի խորութեան:

Ոչ միայն հիւանդներուն ձրի կ'այցելէր, այլ յաճախ անոնց դեղին դրամն ալ ինք կը վճարէր: Ահա թէ ինչու համար իր մահուան օրը (1921 թետ. 27) սուգի օր մը եղաւ ամբողջ քաղաքին համար և իր յուզակաւորութիւնը (1921 մարտ 1) աննախընթաց՝ Ռուսոճուքի տարեգրութեան մէջ:

Սայեան մեռաւ հոգի 37 դարուններ բոլորած. իր մահով Դաշնակցութիւնը կորսնցուց տիպար զինուոր մը, պուլկարահայտութիւնը՝ իր բացատրիկ մէկ անհատականութիւնը, իսկ մարդկութիւնը՝ իր ամէնէն հարգատու և անկեղծ պայքարողներէն մէկ:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ



ՓԵԹԱՐՑԻ ՄԱՆՈՒԿ

Միտամանոսի քաջ Փէտայի, յեղափոխական զեկամար և մտաւոր գործիչ, Մանուկը ծնած է Փեթար գիւղը, Մշոյ կողքին: Կախնական ուսումը կ'անէ Ս. Յովհաննու վանքը և կ'աւարտէ Ս. Կարապետի մէջ:

1903 — 904-ին, դեռ պատանի, զինք վերցնելով իր զիւղացիներէն երկու տասնեակի հետ կը բարձրանայ Սասուն և կը միանայ ապստամբներուն: Կը մասնակցի Սասունի կռիւներուն: Ապստամբութեան զսպումէն յետոյ, կը մնայ Մշոյ գիւղը և իր հայրենի գիւղը, փախտական վիճակի մէջ: Գէորդ Չաւուչի և Կորիւնի Մուշ վերադարձէն յետոյ կը միանայ անոնց խումբին:

Իր անբաժան ընկեր Աբօի և Իսրօի հետ կը յարձակի Մուշ քաղաքի բռնակալ թուրք սպայի մը տան վրան և սպաննելով ոսպան, կազատէ առևանգւած հայ աղջիկ մը: Կը կտարբէ շաբթ մը տէրօրներ, կը մասնակցի Գոմսի, Գոմբիի, Զիարէթի, Փեթարի, Ղարսի և այլ կռիւներուն: Միշտ անբաժան ընկերն էր Գէորդ Չաւուչին, իսկ անոր մահէն յետոյ՝ Ռուբէնին և Կորիւնին:

Մինչև Օսմ. Սահմանադրութիւն Մանուկ յայտնի էր իբրև անվախ և անդուզական Փէտայի: Սահմանադրութեանէն յետոյ, կը բարձրակցի բժիշկ Զաւրիկին և Միմոն Չաւարանին: Այլևս Փէտայի չէր, այլ շրջիկ գործիչ: Կը կազմակերպէ զիւղացիները, կը բանայ դպրոցներ, կը տարածէ թերթ, գրականութիւն, կը հիմնէ գրադարաններ, կը սորվեցնէ շերամաբուծութեան, մեղաբուծութեան, հրահանգիչը կը դառնայ կրթական ձեռնարկներու: Այս աշխատանքներու համարեթաց կը բարձրացնէ ժողովուրդի մարտական ոգին:

Ընդհանուր պատերազմին, կուսակցութեան կողմէ նշանակւած էր իբրև կազմակերպիչ ինքնապաշտպանութեան: Իր կազմակերպած զինական խումբերով կը

միանայ ըմբոստացած Սասունին: Իր մէկ ուղիք Մուշի դաշտն էր, միւսը՝ Սասուն: Եարունահական յարձակումներ կրնէր դէպի Ղզըլբաղամ մինչև Մուրատ գետ: Անհայ մնացած Սասունին հաց կը գտնէր և միտժամակ հացը ծաղկած դաշտի ժողովուրդին բեկորները կը հաւաքէր Սասնոյ լեռները: Ինչն էր, որ Սասուն հաւաքած բազմութիւնները սովամահութենէ ազատելու համար, արշաւանք կազմակերպեց մինչև հեռաւոր Բարխուշ լեռները Գեալիցիներուն և միւսներուն հետ և տասնեակ հազարներով ոչխար և տաւար սերբաւ թուրքէն ու քիւրտէն: Անոնց միտով էր որ կապրէր Սասուն, առանց հացի և առանց աղի: Սասնոյ ութ մասւայ բոլոր կողմերուն մասնակից էր, մասնաւոր հիւսիսի ճակատին վրա: Յուլիս 22-էն յետոյ, երբ Սասունն ինկաւ, ան մնաց նոյն լեռները, զլիտուրապէս Տալուրիկի և Հարաւային ծայրերը, բազմաթիւ արկածներ կ'անցուց իր ընկերներուն հետ մինչև աշուն: Յետոյ, խուճ մը ընկերներու հետ անցաւ Ռուսական բանակը: 1916-ին, դեռ Հանդիստ չառած նորէն խուճ մը ընկերներով դնաց Խնուս և Եսնտեղէն ալ ոռու գորքին հետ առաջիններէն էր, որ հասաւ Մուշ և Սասուն: Իր նպատակն էր վիճի լուծել և ազատագրել հայ բեկորները: Երկուքն ալ կատարեց: Մանուկի երեցած տեղը այլևս չեն մնար Քուրքն ու Քիւրտը:

Անողք էր, արշաւանքներ կը կազմակերպէր թուրք բանակին թիկունքը և հազարաւոր հայ որբեր և կիներ կազատէր գերութենէ: Յանկարծ ոռու բանակը նահանջեց Տաճկահայաստանէն: Մանուկ վերջինն է նահանջողներէն: Բազմաթիւ կռիւներ մղելով, վերջապէս կը հասնի Երևանի առջև, ուր կը մասնակցի Սարգսրապատի ճակատամարտին, երբ վերջ կը գտնէր նահանջը և Հայտութիւն կը կնքէր թուրքերու և Հայերու միջև: Բայց այդ Հայտութիւնը չէր սպահովիր հեռաւոր Տարօնէն եկած ժողովուրդին սպրուստը: Անխնջ ֆէստային կորուշէ գանոնք պատել սովէն և տեղաւորել: Կուղևորի իրեն հետևող բազմութեան հետ դէպի Բասարզէյնար և Դարալազեազ, այդ կողմերու թաթար ժողովուրդը կը տեղահանէ և անոնց ունեցածով կը կերակրէ Սասունի և Տարօնի ժողովուրդը: Պատկանելի ուժ ունէր ձեռքը: Այդ ուժով կուղղուի դէպի Չանդեղուր, վերջնականօրէն յաղթելով թաթարներուն և տեղահանելով գանոնք: 1918-ին իրեն պաշտօն կը աւելի իր ձեռքին տակ եղած ժողովուրդական ուժերով գապի Ջղիճի, Միլի ձորի թաթարներն ապստամբութիւնը: Մանուկ կիմնայ այդ շրջաններու վրա և վերջնականապէս կը յաղթէ: 1920-ին, ան է որ առաջին շարքին վրա իր հեծեալներով կը խոյանայ դէպի Վէյդի և Եարուր: Այդ տեղերու դրաման յաղողութեան պատեր պէտք է բաժնն չայիական երկրորդ գունդին և Տարօնի միաւորներուն միջև:

Երբ Հայաստանը հանդատացաւ, Տարօնցիները և Սասունցիները դաջին տեղաւորեցան Այազեազ: Բայց հանդիստը չէր սիրեր Մանուկը: Չայն կը գրադեցներ Ղարաբաղի Հայաստանի միացման հարցը: Եւ կուղղուի Վարանդա, տեղական ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու: Կր մասնակցի Ղարաբաղի կռիւներուն և մեծ յաղողութիւն կունենայ Վարանդայի և Դիգակի գաւառներուն մէջ: Կը վերադառնայ Երևան, կրկին դառնալու մտքով, բայց այդ ժամանակները Կողբի

վերագրւածան խնդիրն էր որ պիտի լուծէր: Մանուկ առանց մտիկ ընելու մտերիմներու խորհուրդին, որոնք հանդիստ առնել կը պատւիրէին, ճիղղը որ առնենք կը ծոտենանք երկրին, կըսէր և բուլուր անցած Սասունի հեծելազորքին, կարշաւէր դէպի Կողբ:

Կողբը առնեցաւ և կըսեցաւ Հայաստանի, բայց Մանուկը ինկաւ այդ ճակատամարտին մէջ: Հայ ժողովուրդը աղի արցունք թափելով և զինուորական մեծ ցոյցերով թաղեց Մանուկը, Երևանի մէջ, Արամի կողքին:

ԲԺ. ՀԱՅՎԱԶՈՒՆ և ԱՊՊԱՆՏԵԱՆ

Մեւած է Պիւրէճիկ (Կիլիկիա) 1888-ին: Խնորհք ընտանիքէ, սակայն ըլլալով չափազանց սիրահար ուսման և զարգացման, մեծ գոհողութեամբ կ'երթայ Անթիպ ու այնտեղ կը ստանայ իր գոյէճական կրթութիւնը: Ամերիկեան գոյէճին մէջ ղեկավար կը հանդիսանայ ուսանողական Միութեան և կատարի պայքար կը մղէ ազգային ուժացումի՝ և վատասերումի՝ դէմ:

1909-ին կը մասնակցի Կիլիկիոյ առաջին շրջանային ժողովին: Նոյն թւականին կը մեկնի Պոլիս, բժշկութիւն ուսանելու: Սակայն տաճկական մթնոլորտը, անգամ խանդալատութեան այդ օրերուն, կը գտնէ զարշարոյր և կ'անցնի Ժընև՝ այնտեղ աւարտելու: Ժընևի մէջ անդուլ կ'աշխատի՝ կը մասնակցի Եւրոպայի Է. Յ. Գ. Ուսանողական միութեան, կը դառնայ անոր գործօն անդամներէն մէկը: Եթէ իր գրիչը սպասէր զներ իր սիրած գործին, պատճառն այն էր որ Հայկազունը ըլլալով գերազանցօրէն գործնապաշտ գործիչ, գրեւր կը նկատէր թոյլ գործ:

Մեծ պատերազմին, հայ կամաւորական խումբերու ձայնը կը հասնի Ժընև: Հայկազը նոր է վերջապացած իր աւարտաճառը. բժ. Ն. Տէր Ստեփանեանի և բժ. Չ. Փ. հետ երկար, դժողակ ճամբորդութենէ յետոյ, կուգայ Քիֆիլի և անմիջապէս կը մեկնի ռազմադաշտ և Ա. խումբին (դրոսիխա) բժիշկ կը նշանակուի: Չկայ կամաւոր մը որ մտնայ Հայկազի եղբայրական գորովը: Ատեն մը անբաւարար գտնելով բժշկական գործը, նետուցաւ մատակարարական ճիւղին մէջ, կանոնաւորելու համար ուստեսի բաշխումը:

1915-ի մեծ նահանջին, տեղի տալով Ռոստովի խնդրանքին, թողնց կամաւորական խումբ և նետուցաւ զաղթականներու օգնութեան գործին մէջ: Առաջին քիլիկիա էր, որ իզդիբի մէջ զաղթականները ինամեց առանց վարձատրութեան: Արշալոյսին դուրս կը ցատկէր վրանէն և կ'երթազանար արևմուտին, յոգնաբեկ, յոնքեր կ'իյաւած: Յոնքի չլիտցաւ և վաղեմ իզդիբին իզդիբմաւ, Բյուրէն Մարաբար, Դաշուստունէն վաղաբաշտաւ և իբրջապէս Աշտարակ: Խուճապի օրեր էին:

Երբ տաղնապը մեղմացաւ ու օգնութեան գործը կարելի մտաւ, Հայկազը մտաւ Աշտարակի գաղթականներու հիւանդանոցը, բայց չկրցաւ նստի հիւանդանոցին մէջ: Օր մը Օշական էր, ուրիշ օր մը Փարսի: Արաղածի ստորուրդ գոփեցին իր ձիւն

սմբակները ճար ու դարձան Հասցենու ամենուրեք:

Աւելի հանդիսա օրերուն, հիւանդանոցը յանձնեց ուրիշ բժիշկի մը և ինք ներկուցաւ Աշտարակի որբանոցներու կազմակերպական գործին: Ահա այդտեղ՝ Հայկազունի Հանդէս եկաւ իր կազմակերպչական տաղանդով ու աննկուն կրօնով: Այդ շրջանին Աշտարակի որբանոցները աչքի կը զարնէին մաքրութեամբ, կրթական մակարդակով և ժամանակի անվթար մեքենակալութեամբ: Զգտնեցաւ պաշտօնեայ մը, հաշուելով անգամ հեռացողները, որ անոր հանդէպ շտաճէր խորին յարգանք: 1917-ին արդէն Մոսկուայի կոմիտէն յանձին Ս. Մամիկոնեանի անոր լիազօրութիւն տուաւ: Դրամը միայն կը զրկէին: Հայկազունը և՛ մասնակարար էր, և՛ հայթայթիչ և՛ կրթական հսկող ու բժշկական քննիչ և ամէն բան: Զինքը սիրողները իզուր կը ճգնէին համոզել, որ չափ զնէ իր աշխատանքին. «Աւանակին հանդիսա չկայ, ես հայ ժողովուրդի ականակն եմ», կ'ըսէր ու կը ծիծաղէր օրտարակա ու լիթուաց:

Ականատես եղաւ Հայաստանի անկախութեան հռչակման: Աշտարակի մէջ Արամի ամենամտասէլի մարդն էր: Ինք կը գուրդուար Արամի վրա, իսկ Արամը կը սիրէր զինքը կաթոզին:

1919-ի յունաստի Արամը հիւանդ անկողին կ'իյնայ բժուար տեղով. քանի մը օր յետոյ Հայկազունն ալ կը վարակուի և հոգին կ'աւանդէ Արամի մահէն երկու օր յետոյ:

\*\*\*

ԲԺ. ԵՂՈՒԱՐՏ ՏԵՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Մնած է Խարբերդ, 1891-ին:

Սամասարեանը աւարտելէ յետոյ, 1911-ին կը մեկնի Ժընև, բժշկական դասընթացքի հետեւելու: Լուռ ու մունջ ուսանող մը եղած է, բոլորառէք փարած իր ուսման: Ետևումը կը դառնայ փայլուն ուսանող մը, շնորհիւ իր իմացական բնատուր կարողութիւններու: Այդ շրջանին շատերը յաջողած են հրապարակին վրա երևալ գրելով, խօսքով կամ գործով: Եղուարդը դաշնակցական է եղած և միայն այդքան:

Սակայն երբ հայ կամաւորական շարժումը կը սկսի Գովհասեան ճակատին վրա, Եղուարդը իր ընկերներուն հետ կը վազէ Գովհաս և կը դառնայ Դրօի խմբի բժիշկը: Յետոյ Հայկազի նման կը ձգէ կամաւորական շարքերը և կը ներքի գաղթականական գործին: Զարդերու լուրը և յապապէս վանի տաջին նահանջը կ'ընկճեն զինքը: Ժպտաւ կ'անհետանայ այդ կենսուրախ տղու գէմքէն և խոր վիշտ մը կը չռէր երուսերուն: Բայց շուտով գործը նոր եռանդ կը ներշնչէ: Հարիւրաւորները կը մեռնէին Արարատեան դաշտին մէջ, թիֆէն և ջօլիբարիէ: Եղուարդը կը մտնէ Քաղաքներու Միութեան մէջ և աննդհատ կ'աշխատի Բլուրի, Էվլի-լարի, Էլմիստնի, Քանաքեռի, Ելեռովկայի, Գետաչէնի մէջ և այլն — կ'երթայ ուր պահանջ կայ, ուր որ օգնութեան աղաղակ մը կ'արձակուի:

Բայց անկարելի կ'ըլլայ իր մէջ լռեցնել, անգամ մեղմացնել վրէժի մոլուցքը, որով կը տապակէր միշտ: 1917-ին կ'երթայ Գարին Հայկական վարչաբոլո հետ լքած զիրերը պաշտպանելու: Բայց աւանց նպատակին

հասնելու կը դառնայ Ալեքսանդրապօլ, և կը վարէ գինւորական հիւանդանոց մը, Կազաչի — պօստի մէջ: Ու երբ Անդրանիկը կը կազմէ իր նոր զօրարածինը, Եղուարդը կը նշանակուի բժիշկ:

Հայաստանի Անկախութիւնը կը խանդավառէ Եղուարդը. բայց ան դարձեալ կը կրկնէ. — «Մեր վրէժը դեռ չէ լուծուած»: 1919 փետրուարին կ'իյնայ անկողին ու բժուար տեղը կը տանի զինքը անվերադարձ, մտաբար կ'ըմբէն մէջ անկատար:

\*\*\*

ԼՈՒՍԵՂԻՆ ԲԱՅՏԻՉԵԱՆ

Մնած է մտաւորապէս 1890-ին, Նոր Նախիջևանի Մեծ Սալա գիւղը:

Իր միջնակարգ կրթութիւնը Նոր Նախիջևանի Թեմական դպրոցին մէջ ստանալէ յետոյ, 1913-ին կը հետևի Ժընևի Համալսարանի բժշկական բաժնին:

Ձի յաջողիբ Համալսարանի բժշկական հետ Գովհաս երթալ կամաւորական խումբերուն միանալու, բայց հանդիսա չի մնար: Հազար ու մէկ ծակ կը մտնէ, ճղակտոր կ'ըլլայ օր առաջ Գովհաս մտնելու համար և 1915-ի օգոստոսի վերջերը կ'անցնի թիֆլիզ: Գաղթականական հոն գանգաձածներու վիճակը թոյլ չի տար իրեն զինուորական ասպարէզ նետուիլ — և Լուսեղէնը կը լծուի գաղթականներու օգնութեան գործին: Իրիւ օգնական բժիշկ կ'աշխատի մերթ Եղուարտի, մերթ Հայկազունի հետ: Աշխատանքը, իհարկէ ծանր էր և կուճու ու կ'ըր Լուսեղէնը կը նիհարնայ և կը դալկանայ: Ընկերները խորհուրդ կուտան հանգիստ առնել — ճորտէ՛ք խայտառակներ, ինձ ձե՛ռք էք առել: Լուսեղէնը անոնց չէր հաւատար՝ մի՛թէ կարելի էր լքել գաղթականները և հանգիստ առնել: Սակայն երկար չի դիմանար: 1916-ի վերջերը հիւանդութիւնը կը հարկադրէ զինքը հետանայ Գանձակի շրջանէն:

Հազու ապագիւնած, նորէն կը շտապէ Էլմիստնի և մինչև Հայաստանի անկախութիւնը կ'աշխատի Երևանի շրջանին մէջ: Ետևումը կը դառնայ գինւորական բուժակ հայկական զօրամասերու մէջ և կ'ուղարկուի Զայլայ Օղլի:

Գիշեր մը անձանօթ գողերը կը մտնեն իր բնակարանը, և կու՛ի միջոցին կը սպաննուի:

Ե. Խ.

\*\*\*

ՆԵՐՍԵՍ ԱՌԱԳԻՆԱՆ

(Ա. ԱՅԵՂ)

Քաղցրաբարոյ, աշխատասէր ու համարձակ երիտասարդ էր Ներսէսը, Եամշաղիին շրջանից, շուրջ 40 տարեկան:

Անյազ ծարաւով լեցուն գէպի գիրն ու գիտութիւնը՝ վաղ պատանեկութիւնից որոշել էր ներքու կրթականութեան ու հասարակական գործունէութեան, բայց ներթափան աննպաստ պայմանները նետու էին նրան խանութ ու գրատննեսալ: Երկար ժամանակ հաշտապահ պաշտօնով աշխատում էր Թոստովի մէջ վաճառատան մէջ՝ միաժամանակ զբաղւելով ինքնակրթութեամբ ու

դաշնակցական գործերով: Ռոտով — Նախիջևանի դաշնակցական շարքերի սիրած ու յանյոյժ անդամներից էր և յաճախ կատարում էր կուսակցական պատասխանատու յանձնարարութիւններ: Թղթակցում էր դաշնակցական թերթերին: Աւեր ծածկանւնում: Լա, յանդունդն հետոր էր:

Յայտնի է նրա մէկ դամբանականը... Նահապետ եպիսկոպոսի դազարի վրա, Մուրք իսչ վանքում, անգին բազմութեան տոնը: Մի շարք ճառասոսներ՝ դրատում են Հանգուցեայի բազմաշէն ու «եկեղեցաշէն» գործունէութիւնը — Նահապետ եպ. յայտնի պահպանողական ու Հակախղափոխական էր՝ ռուսահայերի Օրմանեանը: Հաւաքած ամբողջ կրօնական երկիւղածութեամբ պահն էր դնում: Ու... յանկարծ առաջ է անցնում Ներսէսը: Ամենք լուռ են: Ներսէսը թափ է տալիս իր երկար սև մազերը, վեր է բարձրացնում ձեռքը ու...

— Այսպէս, ուրեմն, նա էլ զնաց... զնաց, այո՛, բայց մի սև գիծ թողցէ իր յետևից...

Գարո՞ղ էք երևակայել սոսկզմած դրութիւնը: Ամէն կողմից յարձակում են դժբախտ ճառագոսի վրա: Բռունցք, գաւազան, Հայհոյանք: Միջամտում է երեստասարդութիւնն ու ազատում ընկերոջը...

— Ա՛յ, տղայ, ի՞նչ գործ ունէիր տէրտէ՛ր — վարդապետների հետ, ձեռք էինք ածնում նրան յետոյ:

— Ո՞նց թէ ինչ գործ, գարմանում էր նա իր սիրուն աչքերով. բա մենք մեր խօսքը չաւելինք...

... Ի վերջոյ նա յաջողեց տալ աւարտական քննութիւն Երևանի Թեմական դպրոցում և շարունակեց իր ուսումը Պետրոգրադում՝ Հողէ — ներարարանական ճեմարանում, ուր Հետևում էր տնտեսական գիտութիւններին: Ուսանողութեան շրջանում շարունակեց աշխատանքը Դաշնակցութեան շարքերում: Յեղափոխութիւնից յետոյ գործում էր Թիֆլիսում և իր ծննդավայր Շամշադիում: Իսկ 1919 — ին ընտրեց Հայաստանի Խորհրդարանի անդամ, եռանուն մասնակցութիւն էր ցոյց տալիս, յատկապէս, յանձնարանախօսի աշխատանքներին, պտտում էր դաւառները, իբրև զննիչ, պրոպագանդիստ, Ժողովրդի նիստն ու կայք ուսումնասիրող:

1920 թվականի Իջևան — Շամշադի շրջանում էր: Մայիսեան ապստամբութեան օրերը նրա վրա չափազանց ծանր ազդեցին: Նա մոլեռանդ պաշտպանն էր Համաձայնութեան բողջեկներէ հետ, որոնք Համարում էր յեղափոխական ու սոցիալիստ: Մի շարք բողջեկներէ էլ կհանքն էր փրկել պաշարի տաք օրերին: Ու 1921 թ. վարաներ ի վարձատրութիւն այդ ամէնի բողջեկները նրան և զնդակահարեցին Դիլիջանի շրջանի ուրիշ գործիչների հետ միասին...

\*\*\*

ՄՈՒՐԱՊ ՊՊՂՈՍԱՆԱՆ

Իջևանի շրջանի Հակարդեկեկեան կոմիւնրում, մայիսի 27 — ին, Յակոբ Զարիֆեանի հետ սպանեցաւ և իմբապա Մուրադ Պողոսեանը:

Պատմական Հայք — Ապահունիքէ Ուրապաշար գիւղէն էր Մուրադը, ծնւած 1880 թ.: Տակաւին պատանի՝ ան Հանդիսատես եղաւ 1895-ի Ջարդերուն, որոնք

անջնջելի կնիք դրին անոր հոգուն վրա: 1897—ին ան անցաւ Կովկաս և մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան մարտիկներու շարքը և Բաթումի շրջանի մեր լաւագոյն մարտիկներէ մէկն էր:

1905 — 6-ին, Հայ Թախարական ընդհարումներու արևուտ օրերուն, Մուրադ վարեց Դազախի շրջանի ինքնապաշտպանութեան գործը: Դազախի Հայ գիւղացիութիւնը իր սպահնոցութեան Համար պարտական է նաև Մուրադին: 1908 —ին Լրժիինան Հարածաններու շրջանին ձերբակալեցաւ ու նետուցաւ Փոթիի բանտը, բայց կրցաւ ազատի անփորձանք: Բռնկեցաւ Համաշխարհային պատերազմը և կսոցմեցան կամաւորական խմբերը, Մուրադ փութաց մտնել Անպրանկի գունդը, որու մէջ մնաց մինչև վերջ՝ սկիզբը յիմնապետի, ապա վաշտապետի պաշտօնով: Մուրադ աչքի ընկաւ իբրև վարտանանաչ, յանդունդն ու քաջ, երբէք պաղարիւնութիւնը չկորսնցնող զինուորական:

Ռուսական զօրքի նահանջէն հտք և Հանրապետութեան օրերուն Մուրադ մնաց Արարատեան դաշար, իբրև խմբապետ, և մասնակցեցաւ բազմաթիւ կռիւներու Մուրմալուի, Ապարանի և այլ ճակատներու վրա: Գաղթանդամ, երկաթէ առողջութեան տէր՝ ան յոգնութիւն չզրպաց բնաւ ու երբէք չէնթարկեցաւ յուսահատութեան, երբէք չտարեցաւ անձնական կեանքով: Հայրենիքն ու Ժողովուրդը անոր Համար ամէն ինչ էին:

Ու երբ կուսակցութիւնն ու կառավարութիւնը զորակաջ յայտարարեցին բողջեկներու դէմ՝ Մուրադ անվարան փութաց դէպի կոխ: Եւ ճակատաբար ի՞նչ հեջանք. իր մա՛րդ գտաւ Դիլիջանի ճակատը. սպանեցաւ Հայ բողջեկի զնդակով...

Մուրադ օրինակելի Հայրուկ էր: Ապրեցաւ Հայրուկ և Հայրուկ այ մեռաւ:

ՊՊՂՈՍ ՊՊՂՈՍԱՆԱՆ

Պողոսը ծնւել էր Երևանի դաւառի Թէժբաքակ գիւղում և Երևանի Թեմական դպրոցն աւարտելուց յետոյ ամբողջապէս նւիրել կրթական ու յեղափոխական գործին, իբրև դաշնակցական գաւառական Ժողովրդական գործիչներից մէկը: 1903 թ. սկսած Մրգատանի կենտ. Կոմիտէի շրջիկն էր և դիւղէ գիւղ շրջելով յեղափոխական պատգամն էր տարածում շինականների մէջ:

1905 — 6 թվականներին, Հայ — Թրքական ընդհարումներէ շրջանում, մարտական խմբի պետ էր և ահ ու սարսափ էր ձգել թշնամու վրա: Քէշիշորլա անունը բաւական էր, որպէսզի թիւրք ըրտասովորքը փախուտոտի դիմեն: Շատ ուրիշներէ հետ Պողոսն էլ ընկաւ Լըժիի ճանկը և ութ ամիս մնաց բանտարկած: Ապա ազատելով՝ նւիրեց կրթական գործի. եղաւ ուսուցիչ վարչապատում, Աշտարակում, Տաթևում՝ միշտ մնալով եռախողուն դաշնակցական գործիչ: Իր հայրենի գիւղում հիմնեց դպրոց, վարկային ընկերութիւն, սպանողական կոոպերատիւ: Մեռաւ 1920 թ. փետր. 16-ին, բժաւոր տիֆից: Գաւառական յեղափոխական — կուլտուրական գործչի տիպ էր Պողոսեանը և, իբրև այդպիսին, ամբողջ բաւթեամբ աշխատեց Հայ աշխատանքութեան զաղաքական, մշակութային և անտեսական ազատութեան ու բարեկեցութեան Համար:

ԳԵՈՐԳ ԳԵՈՐԳԵԱՆ

Ինչ պատանի էր Գեորգը, (ծնւած 1895թ.) Երևանի թեմական դպրոցի աշակերտ էր, երբ սկսեց կենդանի մասնակցութիւն ունենալ դաշնակցական պատանեկան կազմակերպութիւններէ դարձունէութեան: Այնուհետև կիսատ թողած ուսանողական կեանքը՝ ամբողջովին նւիրեց կուսակցական և հասարակական աշխատանքին՝ Արամի ստեղծած դաղափարական միջոցառումէջ: Արիւնտ պալաքարի օրերին, 1917 — 18 թ.ականներին, Գեորգը աշխատում էր Երևանի Ազգային Պորճրդէ մէջ: Անկախութիւնից յետոյ քարտուղար էր Պորճրդարանի դաշնակցական հատածի: Ապա՝ գործավար Խնամասարական նախարարութեան վերահսկի բաժնի: Միաժամանակ գործոն անդամ էր Ռուսնողական միութեան և Երևանի Դաշն. կազմակերպութեան: Ամէն տեղ՝ միշտ շիտակ, անկեղծ, ջանասէր, ընկերասէր — ու երբ մեռաւ 1920թ. մարտին, վիշտն եղաւ ընդհանուր ու անկեղծ: Հայաստանի տաքնապի օրերին լուս թողնած ծաղիկներէջ էր Գեորգը...

ԶԱՒԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մնուի Դարաշուքան գիւղէն էր Զաւէնը: Սանասրեան վարժարանը աւարտելէ ետք, 1908 — ին ան նուուեցաւ ուսուցչական առարկէջ: 1914—ին կ'պատարասուէր Գեքմանիս անցնել՝ շարունակելու համար ուսումը, երբ վրա հասաւ պատերազմը: Ան շտապէջ հեռանալ Պոստն և անցաւ Կովկաս, ուր քանի մը տարի. իբրև Հայոց Գիւղատնտեսական ընկերութեան ներկայացուցիչ, աշխատեցաւ Ալաշկերտի շրջանը: Հայաստանի անկախութեան շրջանին ուսուցիչ եղաւ Հայաստանի մէջ: Իր կեանքի վերջին տարին որբանոցի կառավարիչ էր Կոտայքի շրջանը, ուր և մեռաւ 1919թ. սեպտեմբեր 6 — ին:

Տակաւին պատանի հասակէն Զաւէն մտած էր Դաշնակցութեան շարքեր և քարոզիչն էր անոր դաղափարներու: Ան առաւելապէս մշակութային, խաղաղ աշխատաւոր էր, շատ լաւ կը հասկնար Հայ աշխատաւորի վիճակն ու յեղուն և անկաշատ սիրով կը սիրէր Հայ իրականութիւնը: Ամէնէն առաջ կենդանի գործն էր զինքը հետաքրքրողը և գործի վրա ալ մեռաւ...

Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ պարսկական արժուումը

Ա.

Յեղափոխական շարժման սկզբնաւորութիւնը Պարսկաստանում ոչ մի ժամանակ այնպիսի լուրջ բնոյթ չի ստացել, ինչպէս 1905 թ. վերջերին: Երկրի տնտեսական և ընկերային պայմանները քսաներորդ դարու սկզբին, քաղաքական ներքին ուժերի յարաբերութիւնը, չլիւսմը քաղաքակիրթ հարեանների հետ՝ հիւսիսէջ և հարաւէջ, ուսական առաջին յեղափոխութիւնը, պատրաստել էին նպաստաւոր գետին յեղաշրջման՝ նոր Պարսկաստանի վերաստեղծութեան համար:

Սմորումն ու դժգոհութիւնը աւատական կարգերի դէմ օրէջցօր ծաւալուում և լայնանում է պարսիկ հարեաններ, դիտակից, կրթւած դասի՝ հոգեւորականութեան շարքերում: Հոգեւորականութեան միանում է և՛ նորածիլ բուրժուազիան՝ վաճառական դասը, և՛ էսնաֆ՝ արհեստաւոր դասը: Գիւղացուութիւնը մտում է բոլորովին անշարժ:

Մի ծերուկ սէյիդի սպանութիւնը թէհրանի նահապագետի ձեռքով, 1905-ի վերջին, եղաւ արտաքին անմիջական առիթ կուսակիւսած դժգոհութեան պոռթկումին. մի շարք սկանաւոր հոգեւորականներ բէստ են մտնում Եւս — Արդինէ Ալիմ սրբավայրում՝ մայրաքաղաքին մտնիկ և այստեղից կոչիչ ուղղում ժողովրդին՝ մեղադրելով կառավարութիւնը երկրի դժբաղդութեան մէջ, պահանջելով բարենորոգումներ՝ հաստատել ժողովրդական ներկայացուցչական իշխանութիւն: Եւսհը՝ Մուզաֆէրէզդին՝ ծեր, հիւանդուտ ու թուլակազմ,

տեղի է տալիս, և 1906թ. յունւարին հրաւիրում, այսպէս կոչւած, «Արդարութեան Տունը», որին պիտի մասնակցէին մայրաքաղաքից և դաւառներից ընտրւած ներկայացուցիչներ, կառավարութեան դործունէութեան վրա հսկելու սահմանափակ իրաւունքով: Ապա իրար յետեւից շանակուում են երկու յանձնախումբեր, վերջինը մէջ հոգի, պետական յայտնի գործիչներից բաղկացած, որոնց յանձնուում է սահմանադրութեան հիմնական կանոնների՝ Կանոււնը — էսաւիի մշակումը:

Բարենորոգումների ընթացքը, սակայն, դանդաղում է. դրա զլխաւոր պատճառները համարւում են յետաշրջական նախարարների՝ վարչապետ Աթաբէջ Աղամ և էյն — ուլ — դովէ, որոնք սահմանադրականների դէմ խստութիւններ են ձեռք առնում, յունիս ամպին ձեռքակալում են մինչև իսկ յայտնի սահմանադրական Շէյխ — Մօհամմետին, որի առթիւ արինալի ընդհարումներ են տեղի ունենում մայրաքաղաքի հոգեւորականութեան և ոստիկանութեան միջև: Միաժամանակ հակակառավարական քարոզչութիւնը ուժեղանում է, հոգեւորականները մտնում են մէջիդները, բազարը դիակուում է, աչքի ընկնող ժողէհիսները գնում են Ղում սրբազան քաղաքը, որտեղից կոչիչ են ուղղում ժողովրդին: Հոգեւորականութեան պահանջը ուժեղացնելու համար, յուլիսի սկզբին, մայրաքաղաքի աչքի ընկնող վաճառականներից 14.000 հոգի, բէստ են նըստում անդլիական դեսպանատունը:

Եւսը չվստահելով մայրաքաղաքի փոքրաթիւ և վատ գինւած զորամասի վրա՝ հետացնում է պալատներից

յետադէմ նախարարներին և վարչապետ է նշանակում Մօշեր — էք — Դովլէկն: Ձիթման ի նպատ խորհուրդներ են առլիս նաև անգլիական և ռուսական զեապանները: Մարլինդ և Հարուհը: Ապա, յուլ. 23-ին, հրատարակուում է սահմանադրութեան հրովարտակը, օգոստ. 5-ին շահի պալատում տեղի է ունենում համաձայն սահմանադրութեան Ազգային ժողովի ( Մէջլիսը Միւլէ) պաշտոնական օրհնութիւնը, իսկ սեպտ. 24-ին արգէն մայրաքաղաք հասած 100 պատգամաւորների և շահի ներկայութեամբ հանդիսաւորդէս բացում է պարսկական առաջին Մէջլիսը:

Բ.

Առաջին Մէջլիսի բացմամբ, թուում էր, որ շարժումները պէտք է կանդաւունեն և ամէն ինչ վերջանայ, սակայն զէպգերի ընթացքը զլիսովին շուտ է գալիս, երբ 1906թ. գեկտ. 27-ին վախճանում է ծերունի շահը և զահ է բարձրանում Մօհամէզ Ալին:

Սա զեռ թաւրիզ եղած ժամանակ համակրութեամբ էր արտայայտել չօր հրատարակած սահմանադրութեան մասին, այնպէս, որ յեղափոխական շրջաններում հաստատացած էին, որ նա կամբապիղէ նորահաստատ սահմանադրութիւնը: Բայց Մօհամէզ Ալին իրեն շրջապատում է յետադէմ, կայսրածէր մարդկանցով, անգամ եւրոպայից յետ կանչելով 1907թ. ապրիլին վարչապետ է նշանակում Աթաբէկ Ալամին և մտադրում է վերացնել Անկումանները՝ յեղափոխական ահումբները մայրաքաղաքում և դաւառներում:

Առաջանում է գժգոհութիւն և բողոք երկրի ադատական տարրերի և Մէջլիսի մէջ:

Եահը յուզւած մտքերը հանգստացնելու համար երևոյթին զիլումներ է զիմում, մինչև իսկ անձամբ ներկայանում է Մէջլիսին և երզուում սահմանադրութեանը հուստարիւմ մնալ, բայց յուզւած դրութիւնը չի վերանում:

1908թ. փետր. 15-ին շահը իր շքախմբով մայրաքաղաքի փողոցներով անցնելիս, Ձիլի — Սուլթանի տան առևը, մահափորձի է ենթարկուում. անյայտ անձեր կողմից ուժը են ձգում շահի կողքին շատ մօտիկ, որից սպանւում են մի քանի պահակներ, վիրաւորում ժողովրդից ոմանք, իսկ շահը անվնաս վերադառնում է պալատ: Մէջլիսն այս արկածը համարում է պատահական շարագործութիւն և կարգադրում, որ մայրաքաղաքում և դաւառներում շահի ապստոլթեան առթիւ լուսավառութիւններ կատարեն:

Սակայն, միապետի և յեղափոխական տարրերի միջև յարաբերութիւններ աւելի և աւելի սրւում են: Վճռական քայլը ձեռնարկում է միապետի կողմից, որը արտաքին թելադրանքներից սրտասպնդւած յունիսի 10-ին պարսկական կապակներէ ուս հրամանատար նշապետ Լեախովի ձեռքով ուժակոծում է Մէջլիսի շնքը, ցրում պատգամաւորներին, որոնցից երկուսին՝ յեղափոխական յայտնի ճարգիչ Մուխամէդին հետ միասին կախաղան բարձրացնում: Ապա մի հրովարտակով յայտարարում է Մէջլիսը ցրւած և նրա գումարան համար ժամանակ է նշանակում Էրեք ամիս յետոյ:

Այսպիսի ողբալի վախճան ունեցաւ Պարսկաստանի

առաջին խորհրդարանը, որը հակառակ իր սպրած կարճ ժամանակաւեղջրցին և զժաւարին պայմաններին կարողացաւ կատարել լուրջ աշխատանք: Նրա զործունէութիւնը կրում է նոյն բնոյթը, որպիսին ունէր պարսկական առաջին շարժումը: Հակամիապետական էր և միաժամանակ հակաստար: Նա բացասական դիքք էր բռնել օտարներին սրւող ամէն մի մենաշնորհի հանդէպ, նոյն վերաբերունքն ունէր և կաշար շահերի ձեռքով ուսաներին տւած ճանապարհների կոնցեսիաների, ուսական բանկի և ուսս հրահանգիչների զեկաւարութեամբ կազմւած պարսկական կոզակներէ բրիգադայի վերաբերմամբ:

Այս մէջլիսն էր, որ առաջին անգամ լինելով Պարսկաստանի պետական կեանքում, 1907թ. նոյեմբերին ձեռնարկեց պետական բիւռլէի քննութեան, ութ հարիւր հազար ֆունտ ստերլինգի կրճատում կատարեց և, որ գլխաւորն է, արքունի ծախսերի զումարը իջեցրեց նապագոյնի: Նրա զգաւունքն միւս գլխաւոր ինդիքներն էին՝ «կաշարական զմահատութեան և ուղային հարկի նոր բաժանան նախադիծ», «Վաղաքային խորհուրդների օրինագիծ», «Մամուլի ազատութեան օրինագիծ», «Նահանգական իշխանութեան լիազօրութեան և զործառնութեանց օրինագիծ» և այլն:

Գ.

Մայրաքաղաքը սահմանադրական միապետի զէմ մղած անհասար պայքարում պարտւեց: Յաղթութիւնը վերադառնում էր դաւառին: Պետական հարւածը կատարելիս, Մուհամէզ Ալին հաշի շէր առել դաւառում, մահաւանդ, Ատրպատականում մեծացող և ուսնացող յեղափոխական ուժերը: Թաւրիզը, Ատրպատականի սրբող, այդ ուժերի միջնաբերդն էր և Մուհամէզ Ալու թէհրան մեկնելուց ի վեր զումում էր յեղափոխական ժողովրդի ձեռքին, յալողապէս պայքարելով յետադէմ ուժերի և Դուսալի կոչւած թաղում կենտրոնացած շահի կողմնակիցներ զէմ, որոնք հիմնել էին «Անկումանը իւսովի» կոչւած յետադիմական կոմիտէն: Մայրաքաղաքի յունիս 10-ի պետական հարւածը մի պահ շնիցնում է յեղափոխական տարրերին: Թաւրիզի նահանգապետ, սահմանադրական Մուխամէդ — էս — սալթանէն, և բրոպական կրթութեամբ, փորձառու պետական զործիչ, բայց և միաժամանակ թուլակազմ անձնաւորութիւն, յունիս 12-ին Ռուֆայի վրայով, ծպտւած, արտասահման է փարչում՝ Թաւրիզի պետական զինաբանը իր ամբողջ ուսովմթերջով Քոչնիլով յեղափոխական ժողովրդի արամադրութեան ներքոյ: Եւ այն պահուն, երբ շահի կողմից նշանակւած Ատրպատականի նոր նահանգապետ էլինը—Դովլին, Ատրպատականի յեղափոխական ուժերը ճնշելու համար նշանակւած զօրամասի հրամանատար Սիհահար Ալամը, զարագաղջի ձեւաւորների պետ յայտնի ցեղապետ Ռահիմ խանի և Մարաղայի նահանգապետ Սամաթ խանի բազմահազար ուժերի հետ շրջապատում էին յեղափոխական Թաւրիզը, որը ինքն թաղ թաղի յետեից սարսափահար անձնատուր էր լինում: Գործի վրա էր և ցարական հիւպատոս Պոլիտօսովը, որ թաղերն ընկած, յորդորում էր յանձնել զէնքերը և հնազանդութեան զբռնակ պարզել: Դրութիւնը շափազանց լուրջ էր. Թաւրիզի, ամբողջ

Պարսկաստանի յեղափոխական շարժումը ծանր ճիւղաճյուղում էր ապրում. Նահանգական Անջումանի գլխին սնուած բարձրացրել էր Նազադուրեկան սպիտակ զօրքը, կրք նրան են պալիս միտամանակ ժողովրդական երկու Ներսեսի՝ Սաթթար խան և Բաղըր խան, մէկը մի անյայտ ձիավաճառ Ամբախը թաղում, իսկ միւրը՝ մի ճասարակ որմնագիր՝ Ռիբան թաղեցի, որոնք իրենց սակաւաթիւ կործնելով կարճ ժամանակում Համախորում են յուսահատ ժողովրդի ցրած ուժերը և բարձրացնում նրանց դիմադրական ոգին:

Իրերի դրուժինը միանգամայն շուտ է պալիս: Անջումանի շէնքի սպիտակ զօրքակը մի վարչականում կարմիր է փոխում. Հասի Հորդանները կանգ են առնում իրենց դրուած թաղերում և ալլիս առաջ շեն շարժում: Այնուհետև դէպքերն ընթանում են յեղափոխական ժողովրդի Համար շատ բարեյաջող: Առաջնորդութեամբ իր պիկավարների՝ Սաթթար խանի, որին «Ալարաբըր Մեւէ» և Բաղըր խանի, որին «Սալարը Մեւէ» տիրաններում է պակուած՝ նա մաքրում է դրուած թաղերը թշնամուց. կազմում է յեղափոխական կառավարութիւն «Այալաթի Ղլիլի Ագրբէշլան», 1908 թ-ի սեպտեմբերի սկզբին կայացած թաղերի Անջումանի Հանդիսատր նիստում. Իլլալ—Օլլալը, որպէս փոխ նահանգապետ, կառավարութեան գլուխ է ընտրուում, ինչն որ նախկին նահանգապետ՝ Սուրբէր—ուս—Սալթանէի Պարիզից կը հրաւիրէր:

Պարսիկ յեղափոխական ժողովրդի կողքին կանգնում է և պարսկահայ գաղութը, յանձին իր յեղափոխական կուսակցութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան: Ինչ գիրք պիտի բռնէր նա այս շարժումների հանդէպ: Դրանց հաջիւ երկու տարի առաջ, Կովկասում բռնկած հայ — թաթարական ընդհանրումների օրերին և նրա ազդեցութեան ներքոյ նա կտորածի մղձաւանջն էր ապրում, ընկած, որպէս փոքրիկ քրիստոնէայ գաղութ, մպհեղական այս ծովում: Կուրը՝ ազատագրութեան անուշով այսօր նրանց միանգամայն եղբայրացնում է և որպէս Հասարակ ժողովուրդներ ձեռք ձեռքի, զէնքը ձեռքին կուռն են:

Հ. Յ. Դ. Ասրպատականի կենտր. կոմիտէն է կազմակերպում և ղեկավարում հայ մարտական ուժեր: Սկզբնական շրջանում, երբ շարժումները դեռ տարբերային էին, շճակարած, պարսիկ յեղափոխական ղեկավարները բաւականաճում էին ստանալով հայ կազմակերպութիւնից օգնութիւնք և պայթուցիկներ: Յետագայում նա արդէն Հրապարակ հանեց զինուած ուժեր — շարժման տազնապալի օրերին, երբ Դաշնակցութեան մի քանի խմբերը կուրի գանգալու ճակատաներում, մանակցելով ամենամտակալոր օգնականները, ծանրակշիւ ու վճռական դեր էին կատարում:

Դաշնակցութեան տեղական կոմիտէները գաւառում՝ Ուրմիա, Սալմաստ, Ոոյ և ալլը, միացած պարսիկ յեղափոխականներին, զբաւում են կառավարական շէնքերը, ձերբակալում նահանգապետներին, սահմանադրական կառավարիչներ նշանակում և դաւառը յայտարարում սահմանադրական՝ Հիմներով ժողովրդական Անջումաններ, որոնք ենթարկուած էին թաւրիկ յեղափոխական կառավարութեան:

1907թ. զարնանը Հ. Յ. Դ. 4-րդ ընդհանուր ժողովը Վիէննայում ընդունեց հետևեալ բանաձևը. «Նկատ-  
digitised by

տելով, որ պարսկական ներկայ շարժումը կարգ է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երևոյթ՝ թէ Պարսկաստանի, թէ Արևելքի համայն և գտնելով դրա տարածելն ու լայնմանը ցանկալի թէ համամարդկային, թէ հայկական տեսակետից,

Ընդհ. ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին և անատներին՝ բոլոր սիջոցներով նպաստել այդ շարժման զարգացման՝ մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, ռաւկավարական և աշխատաւարական ոգին, որը բոլորում է Դաշնակցութեան ծրագրին»:

Այս որոշման հիման վրա Հ. Յ. Դ. Արևելքիան բերած շտապեց օգնութեան Հասնել Պարսկաստանի իր կազմակերպութեան՝ ուղարկելով մի զինուած խումբ, Սև Գարեցի Սաքօի առաջնորդութեամբ, որի մահէց յետոյ, խումբը առաջնորդեց Գեոնին, որ Հասնելով 1908 թ-ի աշնանը՝ թաւրիկի և Ատրպատականի ազատագրական կոմիտէներում անդամաւորեց զէր կառուարից: Սալմաստն, ուր գործում էր Սամսունը, ուղարկեց հայ կամաւորներէ մէկ խումբ, որ միացաւ Գեոնու գնդին:

Նոյն օրերին թաւրիկ հասաւ և Դաշնակցութեան վիթերան՝ Ռոստոմը: Նրա ներկայութիւնը հայ մարտիկների համար զարմաւ ոգևորութեան և անձնագոհութեան աղբիւր. նա եղաւ միտամանակ և անվերաբերելի խորհրդատու շարժման ղեկավարներին, կուր ծրագրերներին անմասն մշակող, ուժերի կազմակերպող և, վերջապէս, պայթուցիկային գործի պատրաստողն ու ղեկավարը՝ Դաշնակցութեան Ատրպատականում ունեցած հարուստ զինադրոշմարանում:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, յանձին Պարսկաստանի իր հատուածի, հանդէս բերելով շրջանի նիւթական, մարտական և զինական բովանդակ ուժերը՝ նպատակ էր դնում ամենեց առաջ օժանդակել Պարսկաստանի ժողովրդի ազատագրական պայքարին ընդդէմ բռնակալ և կամայական բեժիմի, ամբոցնել եղբայրական կապ երկու ժողովուրդներ միջև, յեղափոխական շարժման յաղթանակով Պարսկաստանում հակազդել ցարական բէակցիային, որ Ռուսաստանում օրեց օր ուժեղանում էր, և խթան հանդիսանալ տանկական յեղափոխութեան:

Իր իղէաների և զինանակի ճանապարհին Հ. Յ. Դաշնակցութիւնը տեղ թանգալին գոհեր, որոնց շարքին Նիփեմը՝ Պիտիգուլի կուրիտում, Նիկոն ու Արտէմը՝ Մուստաբարի, Մարտիրոսը՝ Ալլաբը, Միսակն ու Կարօն՝ Բաղմէշայի, Չուրլումթը՝ Ոոյի, Ուրեշը՝ Ուրմիայի կուրիտում, Բուրաբաղի Գէորդը՝ ռումբի պայթիւնից, Պետրոսը՝ կախաղանի վրա: Սրանց մի մասի նշխարներն ամփոփուած են, Լիլանայի գաղոցի բակում, մի ընդհանուր մահարանի ներքոյ:

Էյնը—ղովլէի և Հրամանատար Սիահատարի ճիւղերը՝ նւաճելու ըմբոստ թաւրիկը՝ յանգում են անյաջողութեան. ջաղաքն ընկճելու վերջին փորձը կատարում է 1908թ. սեպտեմբեր 12-ին, երբ կառավարական ուժերը, ջաղաքի շուրջ կողմի բուրներ վրայից բացած թնդանօթային կրակի տակ զբոհ են տալիս. կուրեւ տեղում է ամբողջ օրը, և թշնամին պարուած յետ է

նահանջում. Հ. Յ. Դ. տասնակները դերբեց - դերբե  
և ճակատից - ճակատ թռչելով՝ այդ օրը կատարում  
են անգնահատելի դործ: Դրութիւնը շին փրկում մինչև  
իսկ թշնամու նոր հասած օգնական ուժերը Մակի  
սարգարի կողմից՝ Իգաթուլյահ խանը 800 մարդով և  
6 թնդանօթներով: Աջի շայի կողմից կատարած նրա  
բոլոր գործերը ջարջախոււմ են՝ գարնելով Աթթխար  
խանի ամրակուռ գիրբերին՝ ամբացած Ամբարիզ թա-  
ղում:

Հոկտ. 4-ին նահանգապետ էլյեր - ղովէն յուսա-

հատ թողնում է Թարիզը և Վասիկնի՛ վրայով անցնում  
Թէհրան. հրամանատար Սիահատարը հեռացել էր դրա-  
նից առաջ: Նոյն օրերին, Թարիզից պոստով ուղարկած  
մի ռուսի պայթուցիչ զոր է գնում Մարանդի դաժաւոր  
Սուլայի - նիզամը, դրաւում է նաև Մարանդը և  
Ջուլֆայի հետ հաղորդակցութիւնը վերականգնում:  
Ամբողջ Ատրպատականը յեզափոխականներէ ձեռք է  
անցնում:

(Շարունակելի)

Հ. ՊԱՆԻՐԵԱՆ

**ԲՈՎԱՆՆԻ ԿԱՆՈՒԹԻՒՆ**

Նար վտանգի հանգէպ (խմբագրական) . . . . .	297
Վասպուրականը իրրև անկիւնաքար Միացեալ Հայաստանի (Ռուբէն) . . . . .	299
Բաղրաշի մեմորանդարը Հայաստանում (Հ. Բաժ- րակեան) . . . . .	307
Խորհրդային տնտեսութեան գարգացման ուղի- ները (Ս. Վրացեան). . . . .	310
Ռուս - անգլիական հակամարտութիւնը Արևել- քում (Ա. Արեղեան) . . . . .	316
Հատուցումները ու պատերազմական պարտքերը (Ա. Ասուածասրեան) . . . . .	320
Պայտարը Լոզանի Դաշնագրութեան գէլմ (Ս. Օղանեան) . . . . .	324
Կովկասի բայթալուրը շարունակուում է (Ս. Մ.)	328
Թուրքիոյ շուրջը . . . . .	332
Թղթակցութիւններ . . . . .	335
Կուսակցական կեանք . . . . .	346
Մեր գոհերը . . . . .	347
Հ. Յ. Դաշն. Ատրպատականում եւ պարսկական շարժումը (Հ. Պանիրեան) . . . . .	357
Բովանդակութիւն . . . . .	360

**Ս Տ Ա Յ Ի Ա Մ Գ Ր Գ Ե Ր**

Ա. Ահարոնեան, «Գրիառափոր Միայելիան», «Հայ-  
րենիք» մատենաշար. Թիւ 2 1926թ. գինը 50 սէնթ:  
Нова Україна. Місячник, Серпень — Вересень,  
1926, Прага.  
Революционная Россия. Ноябрь, Прага.  
Воля России. № 11, Прага.  
Социалистический Вестник. Декабрь Берлин.

«ԴՐՕՇԱԿԻ ՀԱՍՅԷՆ՝

5, rue des Gobelins, 5. Paris (13°)

**« Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր Դ Ր Օ Շ Ա Կ »**

Հ. Յ. Դ. ԲԻԻՐՕՆ ձեռնարկած է հրատարակու-  
թեանց շարքի մը, որում առաջինը բաղկացած պիտի  
ըլլայ 5-էն ՄԻՆՉԵԻ 7 ԳԻՐԳԷ, համաձայն իրենց  
ծաւալին, ընդամենը 40 ՊՐԱԿ, այսինքն 640 էջ:

Այս գիրքերը նիւրաձեռն պիտի ըլլան ԱԶԳԱՅԻՆ,  
ԳԱՂԱՔԱԿԱՆ եւ ԸՆԿԵՐԱՄԱՅԻՆ խնդիրներու ուսումնա-  
սիրութեամբ, ձեռնհաս գրողներու կողմէ:

Այս առաջին շարքին համար բացած է  
սահմանափակ թիւով բաժանորդագրութիւն մը:  
Բաժանորդները կը ստանան այս Ա. շարքին բոլոր  
գիրքերը, անոց հատակաճառին գինին վրայ ՀԱՐԻԻՐԵԻ  
25 ԶԵՂՋՈՎ ՄԸ:

Բաժնեգինն է, Ֆրանսայի, Սուրիոյ և Պալեստինեան  
երկիրներու համար 30 ՖՐԱՆԿ, հատակաճառի 40  
ՖՐԱՆԿի փոխարէն: Իսկ Ամերիկայի, Անգլիոյ, անգլ.  
գաղութներուն և մնացեալ երկիրներուն համար բաժ-  
նեգինն է 2-50 ՏՈՒՐ, հատակաճառի 3-25 ՏՈՒՐԻ  
փոխարէն:

Բաժանորդները առանձին փօքքի ծախի չպիտի  
վճարեն՝ գիրքերու առաքման համար:

Առաջին գիրքը լոյս կը տեսնէ 1927 ՓԵՏՐՈՒՐԻ  
ՍԿԻՋՐԸ:

Յաջորդաբար պիտի ծանուցին գիրքերուն  
անունները:

Բաժանորդագրութիւնը ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ԿԱՆԿԵՒԿ  
է:

Բաժնեգինը զրկելի ետևեալ հասցէին. —

H. Kintouni,

36, av. de Chevreul, Asnières (Seine)

Հեռաձայն. —

Courbevoie 505.

**« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի**

Այս համարը արժէ 5 ֆր. կամ 25 սէնթ:

Յաջորդ համարը լոյս կը տեսնէ

Յուկար 3-ին, սովորական ծաւալով: